

ԷԶՄԻԱԾԻՆ



1961

ՌՆԺԱ
ԺԸ ՏԱՐԻ

Դեկտեմբեր

ԷՋՄԻԱՇՈՒՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ա. ԷՋՄԻԱՇՈՒՆԻ

ԺԲ

1961



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ—Մայր Հայրենիքի մեծ տոներ	էջ 3
Հայաստանում սովետական կարգերի հաստատման ֆառասունմեկերորդ տարեդարձի առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և պետական անձնավորությունների միջև փոխանակված հեռագրերը	5
Հայաստանում սովետական կարգերի հաստատման ֆառասունմեկերորդ տարեդարձին նվիրված հանդիսություն Մայր Աթոռում և Հոգևոր ճեմարանում	7
Պաշտոնական հաղորդագրություն	9
ՆԵՐՍԵՍ ԱԲԵՂԱ ՊՈԶԱՊԱՅԱՆ— Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս Նորին Մերություն նվիրեմ Բ-ի այցելությունը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին	10
Հաղորդագրություն	13
ԳՐԻԳՈՐ ԱԲԵՂԱ ԵՂԻԱՅԱՆ—Հայր Զոն Սատերթունյաթ Մայր Աթոռում	14
ՄԱՅՐ ԱԹՈՒՌԻՄ	17
Կայսերական ճվեր Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին	18
ԴԵՐՆԵՆԻԿ ՆՊԻՍԱԿՊՈՍ ՓՈՂԱՏՅԱՆ—Առավաձաշնչի ամհարեհեն հրատարակությունը	19
ՊՐՈՖ. Զ. ԱՃԱՌՅԱՆ—Մեսրոպ Մաշտոց	21
Զ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ—Օրմանյան և իր ժամանակը	30
Ս. ԱՎԶՅԱՆ— Ներսես Աշտարակեցի և Վրաստանը	45
Զ. ՏԵՄԼՎԵՎՈՆԻՅԱՆ—Մատենադարանի արձարյա ձեղագրակազմերի մասին	49
Ցուցակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի	54
Ցանկ «Էջմիածին» ամսագրում 1981 թվականի ընթացքում տպագրված նյութերի	60



ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԵՆ
 ԳՐԱԳՐԱԿԱՆ ՍՈՒ. ԷԶՄԻԱԾԻՆ
 «ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин»
 Rédaction de la revue „Etchmiadzine“, Etchmiadzine, Arménie, URSS.

Երևան, 1981 թ.

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՂԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆՑԱՆ ՀԱՅՈՑ



Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՄԱՅԻ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՄԵԾ ՏՈՆԸ



մեն տարի նոյեմբերի 29-ին. հայ ժողովուրդը, արժանավայել հանդիսությամբ, ազգային արդար հպարտության և բերկրանքի փառքը զգացմունքներով, նշում է վերածննդ-ված Մայր Հայրենիքի տոնը:

Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմության փառավոր ու հերոսական թվականներից մեկն է նոյեմբերի 29-ը, երբ մանկան հզորին հասած մեր ժողովուրդը, վերավոր սրտով ու արյունաբաժնով, փայլելու և տնելու արի ու հերոսական վերականգնությամբ տոգորված, 1920 թվականի նոյեմբերին, ռուսի կանգնեց, և ուստի մեծ ու ազնիվ ժողովրդի եղբայրական օգնությամբ, մի անգամ ընդմիջող խորտակեց ստրկության շղթաները և արևի տակ՝ իրեն և գալիք բոլոր հայ սերունդների համար նվաճեց ազատ ապրելու ԻՐԱՎՈՒՆՔ, ՀԱՅՐԵՆԻՔ և ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ:

Ի՞նչ նակատագրին և ի՞նչ Մայր Հայրենիքին տեղ դարձած հայ ժողովուրդը, ամեն տարի, համախմբված իր հայրենի բարեխնամ կառավարության շուրջ, եղբայրական ժողովուրդների մեծ ընտանիքում, տնտեսական և մշակութային փայլուն նվաճումներով է դիմավորել միշտ իր ազատագրության և ազգային վերածնության տարեկանը:

Նոյեմբերի 20-ը ոչ միայն ՓՐԿՈՒԹՅՈՒՆ, բերեց մեր ժողովրդին նրա պատմության ամենամոռյալ և հուսահատական շրջանին, այլ դարձավ հուսալից ՍԿԻԶԲՐ (ԱԶԳԱՅԻՆ, ՍՔԱՆՋԵԼԻ ՎԵՐԱԾՆՈՒԹՅԱՆ):

Քառասունմեկ տարի է, ինչի պատմական այդ թվականից:

Քառասունմեկ տարին պատմական մի մեծ ժամանակաշրջան չէ որևէ ժողովրդի կյանքի մեջ և պատմության ընթացքում, բայց իրոք պատմական են մեր ժողովրդի նվաճումները Հայրենի Հողի վրա:

Քառասունմեկ տարիների սխրագործ աշխատանքում առնականացավ, գեղեցկացավ մեր Հայրենիքը և դարձավ բարձր, զարգացած արդյունաբերության, գյուղատնտեսության, գիտության և մշակույթի Հայրենիք:

Արագ թափով զարգանում է մեր երկիրը: Անցյալի ավերակների վրա բարձրացել են և բարձրանում են վարդապույն հարտարապետական կառույցներ, լուսաշող ֆադաֆներ, շեն ու պայծառ ավաններ, ուր ապրում է և ստեղծագործում և իր ապագային պայծառ աշխույժ նայում մի շարժառ ու կենսունակ հայ սերունդ:

Անցնող յուրաքանչյուր օր երջանկության, բարգավաճման նոր զարմունքներ է բերում մեր Հայրենիքին և ժողովրդին:

Հայրենիքի ձեռք բերած նվաճումները հպարտության զգացմունքներով են լցնում ճշմարտապես հայ ամեն մարդու սիրտը:

Բայց ավելի պայծառ, ավելի լուսավոր և հուսալից է իր Հայրենի Հողի վրա հայ ժողովրդի ապագան:

Բավ է միայն այստեղ արձանագրել այն ուրախալի փաստը, որ Հայաստանի արդյունաբերության արտադրանքի 60 տեսակները արտահանվում են այսօր ավելի քան 37 արտասահմանյան երկրներ:

Մեր Հայրենիքը, 41 տարիների ընթացքում, դարձել է համատարած գրագիտու-

բյան, առաջավոր գիտության, արվեստի և գրականության հրկիր, ծածկվել է հանրա-
կրթական դպրոցների, բարձրագույն և միջ-
նակարգ ուսումնական, մշակութային հաս-
տատությունների, գիտահետազոտական հիմ-
նարկների խիտ ցանցով, դարձել ԼՈՒՑ-
ՍԻ ՀԱՅՐԵՆԻՔ, ՀՈՒՅՍԻ ՀԱՅՐԵՆԻՔ:

Այսօր Հայաստանի մասսայական դպրոց-
ներում սովորողների թիվը 340 000-ից ա-
վելի է: Առաջադիմիկայի դպրոցների թիվը
գերազանցում է նախասովետական Հայաս-
տանի բոլոր ուսուցիչների թվին:

Անցնող տարում զգալի աշխատանք է
կատարվել ընդհանուր, պարտադիր ուր-
ժավյա կրթության անցնելու ուղղությամբ:
Ավելի քան 400 դպրոցներ արդեն վերա-
կազմվել են ուրժավյա դպրոցների:

Հայաստանում կա 19 գիշերօթիկ դպրոց,
ուր սովորում է ավելի քան 6 000 երեխա:

Աննախընթաց վերելք է ապրում գիտա-
կան միտքը Մայր Հայրենիքում, որի խան-
ձարույն է Հայկական ՄՍՈՒ Գիտություննե-
րի ակադեմիան: Մեր հայրենի գիտնական-
ները ոչ միայն հանաչում են գտել մեր
երկրում, այլ նաև նրա սահմաններից դուրս:
Ամբողջ աշխարհին հայտնի են հայ գիտնա-
կանների հաջողությունները գիտության և
տեխնիկայի բնագավառում: Հայաստանում
տարեցտարի աճելով թափ է ստանում գի-
տահետազոտական աշխատանքը: Ներկա-
յումս Հայկական ՄՍՈՒ Գիտությունների ա-
կադեմիայի և գերատեսչությունների սիս-
տեմում կան 79 գիտահետազոտական հիմ-
նարկներ, որոնցում 3 409 գիտաշխատողներ
կան, այդ թվում գիտությունների 79 ձեյ-
տուր, 754 գիտության թեկնածու, որոնք
ստեղծագործարար աշխատում են և իրենց
ավանդն են մուծում և՛ հայրենի և՛ հա-
մաշխարհային գիտության հեռագա զար-
գացման գործում:

Մեծ աշխատանք է տարվում մանավանդ
Հայաստանի Գիտությունների ակադեմիայի
գիտական հիմնարկներում առարկայիկա-
յի, կոզմիկական հառագայթների և տար-
բային մասնիկների, ռադիոֆիզիկայի, է-
լեկտրոնիկայի, էներգետիկայի, ջրային
հարցերի ուսումնասիրության բնագավա-
րում:

Ժողովրդի բարեկեցության բարձրաց-
մամբ և քուժապասարկման բարելավու-

թյամբ է բացատրվում այն ուրախալի փաս-
տը, որ վերջին ժամանակներս Հայաստա-
նում զգալիորեն նվազել է բնակչության և
հատկապես երեխաների մահացությունը:
Միաժամանակ անշեղորեն շարունակում է
անել նոր սերունդը. 1960 թվականին 1 000
բնակչի հաշվով անբ կազմում էր 40,2 մահը:

Այսօր բոլոր երազներ են ծաղկում հայ
ժողովրդի սրտում:

Մեր օրերում է, որ հնարավորություն
տրվեց աշխարհով մեկ ցրված հազարավոր
տարագիր հայության վերադառնալու Մայր
Հայրենիք: Ներգաղթով սկիզբ դրվեց Մայր
Հայրենիքի հողին վրա ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ
ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՎԵՐԱՄԻԱՎՈՐՄԱՆԸ:

Ներգաղթողները, Հայրենիքի եղբայրներին
և Բուլղերի հետ միասին, լծվեցին ՀԱՅՐԵՆԱ-
ՇԻՆՈՒԹՅԱՆ ՍՐԲԱՋԱՆ ԳՈՐԾԻՆ:

1962 թվականին Հայրենիքը նորից կբա-
նա իր բերը հայրենակարոտ Սփյուռքի
հայության առաջ: Մեր Հայրենիքը, իրոք
որ, «ՄԱԳՆԻՍԻ ՆՄԱՆ ԻՐԵՆ Է ԶԳՈՒՄ ՀԱՅ
ԺՈՂՈՎՐԴԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԴՈՒՍՏՐԵՐՈՒ ՌԻ
ՈՐԴԻՆԵՐՈՒՆ»:

Ու կվերադառնան Հայրենիք Սփյուռքի
զանազան երկրներից հազարավոր, տաս-
նյակ հազարավոր հայրենաբաղձ տարա-
գիրներ իրենց ֆրեդներ խառնելու Մայր
Հայրենիքի ժողովրդի շինարար և ստեղծա-
գործ աշխատանքին:

«ՄԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ, — առում է Ագ-
գիս Վեհափառ Հայրապետը Հայաստանի
ֆառասնամայկին նվիրված իր հայրենա-
շունչ խոսքի մեջ, — ԲՈՒՐ ՀԱՅԵՐՈՒ ՀԱՄԱՐ
ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆԱԳԻՏԱԿԱՑՈՒԹՅԱՆ ԵՎ
ՀՊԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԵՆԴԱՆԻ ԱՂԲՑՈՒՐ ՄԵՐ Է
ԵՎ ԳՐԱՎԱԿԱՆԸ ՄԵՐ ԺՈՂՈՎՈՐԴԻ ԲՈՒՐ
ԱԶՆԻՎ ՀՈՒՑՍԵՐՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ: ԱՀԱ ԹՆ
ԻՆՉՈՒ ՌԻՐԱՆ ԵՆՔ ԵՎ ՄԵՐ ՍՐՑԵՐԸ ԼԵ-
ՑՈՒՆ ԲԱՑԱՌԻԿ ԶԵՐՄՈՒԹՅԱՄԲ»:

ԱՅՍՈՐ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՐԴԸ, ԻՐ ՀԱՅՐԵՆԻ
ՀՈՂԻ ՎՐԱ, ՎԱՌԵԼ Է ԻՐ ԳՈՑՈՒԹՅԱՆ, ՀԱ-
ՎԵՐԺՈՒԹՅԱՆ ԽԱՐՈՒՑԿԸ ԵՎ ՎԱՌ ՀԱՎԱ-
ՏՈՎ Է ՆԱՑՈՒՄ ԱՎԵԼԻ ՊԱՅՅԱՌ ԳԱԼԻՔԻՆ:

Մազկի՛ր, ազատ իմ Հայրենիք, ուռնացի՛ր
մեծացի՛ր:

Փա՛ռք վերածնված հայ ժողովրդին:

Փա՛ռք մեր սիրելի, մեր պաշտելի Մայր
Հայրենիքին:





**ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱՐԴԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ
ՔԱՌԱՍՈՒՆՄԵԿԵՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ
ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹԵԱՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ
ՓՈԹԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳԻՐԸ**

**ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈ ՊԱՐՈՆ Ա Ռ Ի Շ Ա Ն Յ Ա Ն Ի Ն**

Ն Ր Ե Վ Ա Ն

Սովետական Հայաստանի 41-րդ տարեդարձի առիթով հանեցե՛ք ընդունել,
«Խառն Նախագահ, Մեր սրտագին շնորհավորանքները և ամենաբերավոր բարե-
մաղորությունները:

Ազտող ենք Մայր Հայրենիքի ծաղկման, մեր ժողովրդի երջանիկ կյանքի,
Սովետական Միության անսասանության և ամբողջ աշխարհի խաղաղության
համար:

Հարգանք և օրհնությամբ՝

Վ Ա Զ Գ Ե Ն Ա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

28 հոկտեմբերի 1961 թ.

Ս. ԷՋՄԻԱՇՅԱՆ

**ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ՄԵԾԱՐԳՈ ՊԱՐՈՆ Ք Ո Զ Ի Ն Յ Ա Ն Ի Ն**

Ն Ր Ե Վ Ա Ն

Հանեցե՛ք ընդունել Մեր շերմագին շնորհավորանքները Սովետական Հա-
յաստանի 41-րդ տարեդարձի առիթով:

Մաղթում ենք, որ մեր վերածնված Հայրենիքը առավել ծաղկի ու զորա-
նա Սովետական ժողովուրդների եղբայրական ընտանիքում՝ ընդհանուր
խաղաղության և բարօրության պայմաններում: Հաջողություն և արեւատու-
րյուն Ձեզ և մեր բարեխնամ կառավարության բոլոր անդամներին:

Սիրով և օրհնությամբ՝

Վ Ա Զ Գ Ե Ն Ա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

28 հոկտեմբերի 1961 թ.

Ս. ԷՋՄԻԱՇՅԱՆ

**ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ
ՄԵՍԱՐԳՈ ՊԱՐՈՆ Գ Ա Ս Պ Ա Ր Ց Ա Ն Ի Ն**

ԵՐԵՎԱՆ

Հայաստանում սովետական կարգերի հաստատման 41-րդ տարեդարձի առթիվ հանեցե՛ք ընդունել Մեր ջերմագին շնորհավորանքները և լավագույն բարեմաղթությունները:

Աղոթում ենք առ Աստված մեր ժողովրդի բարօրության և խաղաղ. ստեղծագործ աշխատանքի մեջ նորանոր նվաճումների համար:

Ողջունելի և օրհնությամբ՝

Վ Ա Զ Գ Ե Ն Ա

**ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

26 նոյեմբերի 1961 թ.

Ս. ԷԶՄԻԱՄԻՆ

**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ
ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ Վ Ա Զ Գ Ե Ն Ա-ԻՆ**

Է Զ Մ Ի Ա Մ Ի Ն

Հայաստանում սովետական կարգեր հաստատելու 41-րդ տարեդարձի առթիվ հղած Ձեր ջերմ շնորհավորանքների և բարեմաղթությունների համար Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի նախագահության և անձամբ իմ անունից շնորհակալություն եմ հայտնում:

Շ. ԱՌՈՒՇԱՆՑԱՆ

**ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ
ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ**

29 նոյեմբերի 1961 թ.

ԵՐԵՎԱՆ

Հայաստանի կառավարության և անձամբ իմ անունից շնորհակալություն եմ հայտնում Հայաստանում սովետական կարգեր հաստատելու տարեդարձի առթիվ Ձեր ջերմագին շնորհավորանքների համար:

Ա. ՔՈԶԻՆՑԱՆ

**ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ
ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ**

20 նոյեմբերի 1961 թ.

ԵՐԵՎԱՆ


Շնորհակալությամբ և գոհունակությամբ ստացանք Հայաստանում սովետական կարգերի հաստատման 41-րդ տարեդարձի առթիվ Ձեր շնորհավորական հեռագիրը:

Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ

**ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

29 նոյեմբերի 1961 թ.

ԵՐԵՎԱՆ





**ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿՈՐԳԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ
ՔԱՌԱՍՈՒՆՄԵԿԵՐՈՐԴ ՏԱՐԵԳՄՐՁԻՆ ՆՎԻՐՎԱԾ
ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՒՈՒՄ
ԵՎ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՍԱՐԱՆՈՒՄ**

Նոյեմբերի 29-ին, լորեքշաբթի օր, առավոտյան ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետ Մայր Տաճարում նախագահեց Հայաստանում սովետական կարգերի հաստատման 41-րդ տարեդարձի առթիվ կատարված կառավարական մաղթանքին:

Գոհարանական աղոթքին ներկա էին Մայր Աթոռի ողջ միաբանությունը, Հոգևոր Ժեմարանի վերատեսչությունը, դասախոսական կազմը և ուսանողությունը, վանքի պաշտոնեությունը և բաղմաթիվ հավատացյալներ:

Կառավարական մաղթանքի ժամանակ, լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսը կարդաց «ՎԱՍՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱԳՈՒՆ ՀԱՄԱՍՏԱՆԻ» գոհարանական աղոթքը:

Կառավարական մաղթանքից հետո, Հոգևոր Ժեմարանի հանդիսությանը սրահում, կողմակերպից Վրական- զեղարվեստական

ցերեկույթ նվիրված օրվա աղջային-պիտական մեծ տոնի նշանակությամբ:

Հանդիսությունը բացվում է Հայկական ՍՍՌ Պետական հիմնի նվազով:

Հոգևոր Ժեմարանի վերատեսչ զերուշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոսը հանդես է գալիս տոնի աղջային նշանակության և խորհրդին նվիրված բացման խոսքով:

Հայաստանում սովետական կարգերի հաստատման 41-րդ տարեդարձին նվիրված բովանդակալից ճառով հանդես է գալիս Հոգևոր Ժեմարանի գրաբար լեզվի դասախոս Ս. Անթոսյանը:

Հանդիսության ընթացքում գործադրության է դրվում օրվա խորհուրդը նշող գեղարվեստական մի ծրագիր՝ բաղկացած խմբերգերից, մեներգերից և արտասանություններից:

Հոգևոր Ժեմարանի երդախումբը, երաժշտության դասատու և Հակոբյանի դե

կազարությամբ, հաղողությամբ կատարում է թեա իմ անուշ Հայաստանի», «Մաղկիր արգատ իմ Հայրենիք» և «Հանդես է տոնական» խմբերգերը:

Ք դասարանի ուսանող Գ. Բունիաթյանը արտասանում է Ա. Իսահակյանի «Ոտք եմ քնում» քերթվածը, նույն դասարանի ուսանող Ղևոնդ Վարդանյանը՝ Դանիել Վարուժանի «Վերածնություն»-ը և Գ դասարանի ուսանող Ժ. Գալսիաթյանը՝ Գ. էմինի «Երեսիկ» Հայաստան»-ը:

Հանդիսության վերջում Վեհափառ Հայրապետը ողջունի և օրհնության խոսք է ասում աղջային-պետական մեծ տոնի 41-րդ տարեդարձի քարեբաստիկ առիթով և հայրական Իր շերմ պատգամն ուղղելով Հոգևոր

Ծննդարանի ուսանողության, խրատում է լինել որքան հավատի, գիտության, նույնքան և հայրենասիրության մարդ, որովհետև «Հայաստանյայց նկեղեցին իր կյանքը և նահատակությունը կապած է նայ ժողովուրդի կյանքին և նահատակության հետ և ան կնույնանա ամբողջովին նայ ժողովուրդին հետ, զի Հայ նկեղեցին ինքը նայ ժողովուրդն է»:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը մի անգամ ևս օրհնում է Հայրենի աշխարհն ու նրա տոնը, մեր շինարար ժողովրդին, բարեմաղթելով, որ խաղաղություն լինի համայն աշխարհում և բոլոր հայ երդիկների տակ:

Հանդիսությունը վերջանում է խմբովին երգված Տերունական աղոթքով:





ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Նորին Սուրբ Սնուրյուն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի նրավերով, ղեկտեմբերի 8—11 օրերին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում հյուր լողավ Համայն Վրաց Պատրիարհ-Կաթողիկոս նորին Սրբություն Եփրեմ Բ-ը:

Վրաց Պատրիարհ-Կաթողիկոսին սղեկցում էին գերաշնորհ Տ. Դավիթ արհեսկոպոսը, Վրաստանի ռուսաց առաջնորդ գերաշնորհ Տ. Զինովի ևպիսկոպոսը, Վրաստանի հայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Կոմիտաս ևպիսկոպոսը, Թբիլիսիի վրաց Ս. Սիոն Մայր եկեղեցու ավագերեց, արժանապատիվ Տ. Ալեքսանդր Բանանյան և Վրաստանի հայոց թեմական խորհրդի անդամ պր. Սուրեն Ավչյանը:

Հայաստանում գտնված ժամանակամիջոցում հյուրերը դիտեցին Երևանի և Էջմիածնի տեսարան վայրերը, այցելեցին Ս. Դեղարդի վանքը, ծանոթացան Մայր Աթոռի և Հոգևոր Ճեմարանի կյանքին:

Կիրակի, ղեկտեմբերի 10-ին, Մայր Տաճարում մատուցվեց հանդիսավոր սուրբ պատարագ: Ապա եղավ ընդունելություն Վեհաբանում: Այնուհետև, ի պատիվ հյուրերի, Ճեմարանի զանիհում տրվեց հաշկեուրյա:

Վեհաբանում Վազգեն Ամենայն Հայոց Կաթողիկոսը և Եփրեմ Բ Համայն Վրաց Պատրիարհ-Կաթողիկոսը, ջերմ և սրտագին մրնոլորտում, մտերի փոխանակություն օնեցան եկեղեցական հարցերի շուրջ և մի անգամ ևս ընդգծեցին աշխարհի խաղաղության ամրապնդման գործում Բրիտանական եկեղեցիների գործուն մասնակցության անհրաժեշտությունը:

ԴԻՎԱՆ, ՄԱՅԻ ԱԹՈՌԻ

18 ղեկտեմբերի 1981 թ.

Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒ





ՀԱՄԱՅՆ ՎՐԱՑ ՊԱՏՐԻԱՐԲ-ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԵՓՐԵՄ Բ-Ի ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ

Նորին Ս. Օծություն Ս. Ս. Վաղգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետի հրավերով, ղեկ-տեմբերի 8-ին, ուրբաթ օր, Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս Նորին Սրբություն Եփրեմ Բ-ը:

Երևանի երկաթուղային կայարանում, Ազգիս Վեհափառ Հայրապետը անձամբ ղեկավորեց հարգելի Հյուրին:

Վրաց Պատրիարք-Կաթողիկոսին ղեկավորեց նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Գասպարյանը:

Դիմավորողների թվումն էին նաև Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ Ս. Վահան վարդապետը՝ ի գլուխ քահանայից դասի:

Վրաց Եփրեմ Կաթողիկոսի շքախմբի կազմումն էին Դավիթ արքեպիսկոպոսը, Զինովի եպիսկոպոսը և Ալեքսանդր քահանան: Հարգելի Հյուրին Թբիլիսիից ընկերակցում էին նաև Վրաստանի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Ս. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը և թեմական խորհրդի անդամ Ս. Ավյանը՝ որպես թարգման:

Հյուրերը առաջնորդվում են «Արմենիա» հյուրանոցը, ուր փոքր ինչ հանգստանալուց հետո, ուղևորվում են դեպի Ս. Էջմիածին:

Վանքի ավագ դարբասի առաջ, Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոսը, Եկեղեցական թափուրով և ամպոնական տակ, շարականների երգակցությամբ, առաջնորդվում է դեպի Մայր Տաճարը:

Մայր Տաճարի դռան առաջ, Ազգիս Վեհափառ Հայրապետը ղեկավորում է Վրաց Պատրիարք-Կաթողիկոսին, Երկու Հայրապետները ողջունում են միմյանց ու համբուրվում, և ապա հանդիսավորապես մուտք գործում Մայր Տաճար:

Մայր Տաճարում տեղի է ունենում Հայրապետական մաղթանք՝ ի հաստատություն Հայ և Վրաց Եկեղեցիների Հայրապետական Աթոռների, Արարողության ավարտին, Իջման Ս. Սեղանի առաջ, Ազգիս Վեհափառ Հայրապետը բարի գալուստ է մաղթում Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս Եփրեմ Բ-ին և նրա շքախմբին:

Իր պատասխան խոսքում, Վրաց Պատրիարք-Կաթողիկոսը սրտագին շնորհակալություն է հայտնում ջերմ ղեկավորության և ընդունելության համար, ապա բարեմաղթություններ կատարում հայ և վրաց ժողովուրդների բարօրության և եկեղեցիների ծաղկման համար:

Այնուհետև, Եկեղեցական թափուրով, երկու Հայրապետները առաջնորդվում են Վեհափառ, ուր տեղի է ունենում, մտերմիկ մթնոլորտի մեջ, ջերմ գրույց՝ երկու մեծ Հայրապետների միջև:

Ժամը 2-ին, Վրաց Պատրիարք-Կաթողիկոս Եփրեմ Բ-ը, իր շքախմբով, այցելում է Մայր Տաճարը, Եկեղեցական հնությունների բաժինները, Հոգևոր ճեմարանը, Մայր Աթոռի նոր տպարանն ու նոր Վեհարանը, ապա ինքնաշարժով լինում է Վաղարշապատում գտնվող երեք պատմական տաճարներում՝ Ս. Հռիփսիմի, Ս. Գալանի և Ս. Շողակաթ:

Ժամը 3-ին, Վեհափառի սեղանատանը, կաղամկերպվում է ընդունելություն ի պատիվ հյուրերին: Ընդունելության ժամանակ փոխանակվում են սրտառուլ բաժակաճառեր աշխարհի խաղաղության, եկեղեցիների պայծառության, հայ և վրաց ժողովուրդների և Եկեղեցիների դարավոր բարեկամության և անսասանության համար:

Երեկոյան ժամը 5-ին, հյուրերը վերադառնում են Երևան:

Ժամը 8-ին, Վեհափառ Հայրապետը փոխադարձ այցելություն է տալիս՝ Երևանում:



ՀԱՄԱՅՆ ՎԵՐԱՑ ԴԱՏՐԻԱՐԳ-ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՆՈՐԻՆ ՍՐԵՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. Ե Փ Ր Ե Մ Բ

Նորին Սրբութիւնն Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս Եփրեմ Բ-ին, ընկերակցութեամբ գերաշնորհ Տ. Սահակ և Տ. Հայկազուն արքեպիսկոպոսների ու հոգեշնորհ Տ. Ներսես արեղա Պողապալյանի, Մտերմիկ մթնոլորտում տեղի է ունենում գրույց՝ երկու Եկեղեցիներին շահագրգռող հարցերի շուրջ:

Շաբաթ օր, դեկտեմբերի 9-ին, առավոտյան ժամը 11-ին, Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս Եփրեմ Բ-ը, իր շքախումբով, մեկնում է Ս. Գեղարդի վանքը, ընկերակցութեամբ գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոսի և հոգեշնորհ Տ. Վահան վարդապե-

տերի, բաղկացած շարականներից, հոգևոր երգերից և արտասանութիւններից:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը և Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոսը ժամանում են Հոգևոր Ժեմարանի հանդիսութեանը սրահը և ընդունվում ուսանողության և բոլոր ներկաների սրտազին ու ջերմ ծափերով: Ժեմարանի վերատեսուչ գերապատիվ Տ. Հայկազուն արքեպիսկոպոսը բարի գալուստյան և ողջութեան խոսք է ասում հյուրերին: Ժեմարանի ուսանողական երգչախումբը հաջողութեամբ կատարում է «Ուրախ լեր Սուրբ Եկեղեցի» շարականը, «Սաղկիր ազատ



ԱՄԵՆԱՅՆ, ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏ ՎԱԶԳՆԵ Ա-Ը և Վ. ՄԱՍՐ ՏԱՃԱՐԻ

ՀԱՄԱՅՆ ՎՐԱՑ ՊԱՏՐԻԱՐԶ-ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՓՐԵՄ Բ-Ը ԶԱՆԴԱԿԱՏԱՆ ԱՌԱՔ

տի: Գեղարդ կիս ճանապարհի վրա, Կաթողիկոսը և նրա շքախումբը այցելում են Գառնիի ավերակները: Գեղարդի վանքում Նորին Սրբութիւնն Եփրեմ Բ-ին դիմավորում են դերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսը, Գեղարդի վանահայր հոգեշնորհ Տ. Մուշեղ վարդապետը, հոգեշնորհ Տ. Մեսրոպ արեղան և բարեշնորհ Կարապետ սարկավադը:

Ժամը 3-ին հյուրերը վերադառնում են Մայր Աթոռ Ս. Էջմիածին, որտեղ նրանց պատվին տրվում է ճաշկերույթ:

Երեկոյան ժամը 6-ին, Հոգևոր Ժեմարանի ուսանողութիւնը, ի պատիվ Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոսին և նրա շքախմբին, կողմասկիւրում է դրտկան-դեղարվեստական

իմ Հայրենիք» և «Հանդես է տոնական» խումբերից: Հոգեշնորհ Տ. Մեսրոպ արեղա Պալյանը երգում է Վարդանանց Մանկունքը՝ «Արիացեալք» ստեղծի շարականը, իսկ բարեշնորհ Պետրոս սարկավադ Բերբերյանը՝ Հարության տաղը՝ «Ի գերեզման յարուցելոյն»: Բ լսարանի ուսանող Վամշապուհ Զինանյանը, հանուն իր ընկերների, բարի գալուստյան սրտառու մի ուղերձ է կարդում ի պատիվ հյուրերին: Վեհափառ Հայրապետը և Վրաց Պատրիարք-Կաթողիկոսը, հանդիսութեան վերջում, հայրական հորդորներ են տալիս ուսանողության՝ լինելու ուսման մեջ էլ ավելի առաջադեմ, աղօթքի մեջ անձանդութիւն, ապագայում դառնալու համար Եկեղեցու արժանավոր հոգեորականներ:

Հանդիսությունը փակվում է խմբովին երգված՝ «Էջ Միաժինն ի Հօրէ» շարականով և Տերունական աղոթքով:

Հանդիսության երկրորդ բաժնում ցուցադրվում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ընտրության և օծման կինոժապավենը:

Կիրակի, հոկտեմբերի 10-ին, Մայր Տաճարում, օրվա հանդիսության առիթով, եպիսկոպոսական հանդիսավոր սուրբ պատարագ է մատուցում և քարոզում գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոսը՝ «Զի՛ բարի կամ զի՛ վայելույ, զի բնակեն եղբարք ի միասին» (Սաղմ. ԺԲ 1) քնարանով, ծանրանալով Հայ և Վրաց Եկեղեցիների դարավոր եղբայրության և անքակտելի միասնության վրա:

Սուրբ պատարագին ներկա են Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոսը իր շքախմբով և պաշտոնական այլ անձնավորություններ, ինչպես նաև հավատացյալների բազմություն:

Հավարտ սուրբ պատարագի, Հայրապետները հանդիսավորապես առաջնորդվում են Վեհաբան:

Ժամը 3-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհուրդը, Հոգևոր Զեմարանի հանդիսասրահում, կազմակերպում է մեծ ընդունելություն՝ ի պատիվ Վրաց Եկեղեցու Հայրապետի և նրա շքախմբի:

Ընդունելության ներկա են նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Գասպարյանը, Խորհրդի նախագահի տեղակալ Ս. Հովհաննիսյանը և այլ պաշտոնական հյուրեր, որոնց թվում՝ ուխտավորաբար Հայրենիքում գտնվող պր. Ա. Անդրեասյանը: Որ ԱՄՆ-ում հրատարակվող «Պայքար» թերթի խմբագիրն է:

Ընդունելության ընթացքում սրտաբուխ ճառեր են փոխանակվում Վաղդեն Ա և Եփրեմ Բ կաթողիկոսների միջև, հայ և վրաց ժողովուրդների և Եկեղեցիների դարավոր, պատմական բարեկամության անքակտելիության շքեղ մաղթանքներով:

Ողջույնի խոսք է արտասանում Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Ս. Գասպարյանը:

Այս առթիվ խոսք է ասում նաև Բոստոնի «Պայքար» թերթի խմբագիր պր. Անդրանիկ Անդրեասյանը:

Ողջերթի պաշտոնական ընդունելությունը ավարտվում է «Պահպանիչ»-ով և Տերունական աղոթքով:

Երկուշաբթի, դեկտեմբերի 11-ին, առավոտյան ժամը 11-ին, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը և Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս Եփրեմ Բ-ը այցելություն են տալիս Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի նախագահի տեղակալ պր. Գեղա Պետրոսյանին, Տեղի է ունենում ջերմ զրույց, Ապա Հայրապետները հրաժեշտ են առնում լավագույն տպավորություններով:

Ժամը 12-ին, երկու Հայրապետները, իրենց շքախմբերով, այցելում են մայրաքաղաքի Ս. Սարգիս առաջնորդանիստ եկեղեցին, ուր ընդունվում են առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ Տերյանի, քահանայից դասի, թեմական խորհրդի անդամների և հավատացյալների կողմից: Եկեղեցու զանգերի ղողանջի տակ, Հայրապետները առաջնորդվում են եկեղեցի, ուր բարի զայտության խոսք է ասում փոխանորդ հայր սուրբը Տ. Տ. Եփրեմ Բ Հայրապետը: Երկուսն էլ եկեղեցում հավաքված հավատացյալներին:

Ժամը 3-ին, Վեհաբանի սեղանատանը, կազմակերպվում է ողջերթի սեղան:

Ժամը 5-ին, հյուրերը, լավագույն տպավորություններով, հրաժեշտ են առնում Վեհափառ Հայրապետից և Մայր Աթոռի միաբանությունից, Վրաց Պատրիարք-Կաթողիկոսը, Մայր Աթոռից մեկնելուց առաջ, իջնում է Մայր Տաճար, աղոթում իշման Ս. Սեղանի առաջ ու վերադառնում Երևան:

Երեկոյան ժամը 6-ին, Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս Եփրեմ Բ-ը, իր շքախմբով, մեկնում է Թբիլիսի:

Հարգելի հյուրերին անձամբ ճանապարհում է Վեհափառ Հայրապետը, շրջապատված Մայր Աթոռի միաբանությամբ:

Վրաց Պատրիարք-Կաթողիկոսին ճանապարհում է նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Ս. Հովհաննիսյանը:

Բարի ճանապարհ՝ Մայր Աթոռի թանկագին հյուրերին:

ՆԵՐՍԵՍ ԱՐԵՂԱ ՊՈԶԱՊԱՆԱՆ





ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Նորին Ս. Սծություն S. S. ՎԱՋԳՆՆ Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռում սիրով ընդունեց այցելությունը Անգլիկան եկեղեցու Միջեկեղեցական հարաբերությունների ֆառտուղար Հոգեշնորհ Հայր Զոն Սատերթունյտի, ուր նորին Մրություն բերում էր Եղբայրական ողջույնը Քենտրերիի Նորին Ամենապատվություն Մայր Առհայիսկոպոսի:

Հայր Սատերթունյտը Մայր Աթոռի հյուրը եղավ զեկտեմբերի 14—18 օրերին, ծանոթանալով Սովետական Հայաստանի եկեղեցական կյանքին և Ս. Էջմիածնի հոգևոր-կրթական ու շինարարական գործունեության:

Հարգելի հյուրը այցելեց նաև Ս. Գեղարդի վանքը, Երևանի պետական Մատենադարանը և դիտեց տեսարժան վայրեր ու պատմական հուշարձաններ:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՒԻ

20 զեկտեմբերի 1961 թ.
Ս. ԷՋՄԻԱՊՈՒՆ





ՀԱՅԻՐ ԶՈՒՆ, ՍԱՏԵՐԹՈՒԵՑՏԸ ՄԱՅՐ ԱԹՈՒՈՒՄ

Իեկտեմբերի 14-ին, հինգշաբթի, Մայր Աթոռ Ս. էջմիածին ժամանեց Անգլիկան եկեղեցու միջեկեղեցական հարաբերությունների խորհրդի քարտուղար Հայր Զոն Սատերթուելյուր:

Հարգելի հյուրը Գեղհիում մասնակցելուց հետո եկեղեցիների Համաշխարհային հորհրդի երրորդ համագումարին, դեպի Մոսկվա վերադարձի իր ճանապարհի վրա, ցանկացել է որպես հյուր այցելել Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին, անձամբ հաղորդելու համար Համայն Անգլիկոն Եպիսկոպոսապետ և Քննորդների նորընտիր Արքեպիսկոպոս դոկտ. Մայքլ Ռեմդիի եղբայրական ողջույնները:

Հայր Զոն Սատերթուելյուր ամսի 13-ին ժամանում է Բաքու, ուր դիմավորվում է Բաքվի թեմի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Հուսիկ վարդապետ Սանթուրյանի կողմից:

Հաջորդ օրը, Երևանի օդանավակայանում, հարգելի հյուրին, հանուն Վեհափառ Հայրապետի, դիմավորում են հոգեշնորհ Տ. Գրիգոր և Տ. Ներսես արքեպիսկոպոսները և առաջնորդում Մայր Աթոռ: Մայր Տաճարում իր ուխտը կատարելուց հետո, Հայր Զոն Սատերթուելյուր ընդունվում է Վեհարանում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կողմից: Այնուհետև Վեհափառ Հայրապետի և Հայր Զոն Սատերթուելյուրի միջև տեղի է ունենում տեսակցություն չերմ ու մտերմական մրթնությունում, Հայ և Անգլիկան եկեղեցիները շահագրգռող հարցերի շուրջ: Ապա հարգելի հյուրը այցելում է Ս. էջմիածնում Ս. Հովհաննիսյանի, Ս. Շողակաթի և Ս. Գալանիսի մանրերը:

Երեկոյան, հարգելի հյուրը, ընկերակցության հոգեշնորհ Տ. Վահան վարդապետի և հոգեշնորհ Տ. Գրիգոր արքեպիսկոպոսի, Հայֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճում ներկա է լինում երգի-պարի անսամբլի համերգին:

Ամսի 15-ին, հոգեշնորհ Տ. Գրիգոր արքեպիսկոպոսի առաջնորդությամբ, Հայր Զոն Սատերթուելյուր ծանոթանում է Երևանի տեսարժան վայրերին, լինում է Մատենադարանում և այցելում Գառնի ու Ս. Գեղարդի վանքը:

Շաբաթ օրը, ամսի 16-ին, Ս. Հակոբ Մրժբնա հայրապետի տոնի առթիվ, Հայր Զոն Սատերթուելյուր այցելում է մայրաքաղաքի Ս. Սարգիս առաջնորդանիստ եկեղեցին, ուր շերմորեն ընդունվում է առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ Տերյանի, քահանայից դասի և հավատացյալների կողմից: Ապա այցելում է Երևանի Ս. Հովհաննես և Ս. Զորավոր եկեղեցիները:

Ժամը 12-ին, հարգելի հյուրը լինում է Մայր Աթոռի նոր տապարանում, Վեհարանի նոր շենքում և Մայր Տաճարի եկեղեցական հնությունների խորանում:

Ժամը 1.30-ին, Հայր Զոն Սատերթուելյուր այցելում է Հոգևոր Ծեմարան, որտեղ հանդիպում է ունենում վերատեսուչ սրբազան հոր, դասախոսական կազմի և ուսանողության հետ Վերատեսուչ սրբազան հայրը, ողջունելով հարգելի հյուրի ներկայությունը Հոգևոր Ծեմարան, բարի գալուստ է մաղթում նրան, խոսելով միաժամանակ Հայ և Անգլիկան եկեղեցիների փոխհարաբերության մասին:

Հոգևոր Ծեմարանի ուսանողությունը, ի պատիվ հարգելի հյուրի, կազմակերպում է երաժշտական դիրեկտոր Ջեմմարանի կողմից:

շախումբը, ղեկավարությանը վերակացու հոգեշնորհ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոսի, երգում է «Որք դարդարեցին», «Խորհուրդ մեծ», «Այսօր տուն է Ս. Մենդեան», «Ո՛վ դարմանալի», «Այսօր ծայնն հայրական», «Լուռ գիշեր, սուրբ գիշեր» շարականներն ու տաղերը: Բարեշնորհ Պետրոս սարկավազ Ռերերյանը երգում է «Ե գերեզման յարույնություն տադր: Բ դասարանի ուսանող Ղևոնդ Վարդանյանը, հանուն Ճեմարանի ուսանողության, կարդում է անգլերեն լեզվով բարի գալստյան ջերմ ուղերձ: Հոգևոր Ճեմարանի ուսանողության մանդոլինիստների խումբը կատարում է Կոմիտասյան և հայ ժողովրդական մի շարք երգեր:

գայթակղութեան, բայց վայ ալնմիկ է. յոյր ձեռն գայցէ»:

Սուրբ պատարագին ներկա է լինում նաև Հայր Զոն Սատերթունյտը, որը երկյուղածորեն հետևում է հայոց պատարագի սրբազան արարողության՝ անդյրեն թարգմանության միջոցով:

Հավարտ սուրբ պատարագի, Վեհափառում, Հայր Զոն Սատերթունյտը, Վեհափառ Հայրապետի ներկայությամբ, մասնակցում է Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամների հետ տեղի ունեցած միջնակցական խոսակցության:

Ժամը 3-ին, ի պատիվ հարգելի հյուրի, Վեհափառի սեղանատանը տրվում է ողջեր-



ՎԵՆԱԹԱՌ ԶԱՐԲԱՊԵՏԸ ԶԱՐԲ ԶՈՆ ՍԱՏԵՐԹՈՒՆԻՅՏԻ ՀԵՅ ՎԵՆԱՐԱՆՈՒՄ

Վերջում ջերմ շնորհակալության սրտագին խոսք է ասում Հայր Զոն Սատերթունյտը այս անմոռանալի հանդիպման առթիվ:

Յերեկոյթին ներկա էր նաև Ազգիս Վեհափառ Հայրապետը, որի «Պահպանիչ»-ով վերջանում է այս գեղեցիկ հանդիպումը:

Գեկտեմբերի 17-ին, կիրակի, Մայր Տաճարում, հանդիսավոր սուրբ պատարագ է մատուցում Վրաստանի հայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը և բարեկամ «Ո» է մարթ Ղպալ

թի ճաշկերույթ: Հարգելի հյուրին ողջունում են ջերմ խոսքերով գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոսը, Վերստուգիլ հանձնաժողովի անդամ Գրիգոր Բեքմեդյանը և ուրիշներ:

Ընդունելության ընթացքում, Վեհափառ Հայրապետը Իր դոհունակությունն է հայտնում Հայր Զոն Սատերթունյտի Մայր Աթոռ Ս. Էջմիածին կատարած ուխտավորության համար, ապա հարգելի հյուրի միջոցով իր եղբայրական սիրալիր ողջուններն է հաղորդում Քեհուրերի Արքեպիսկոպոսին՝ բու-

ընթացողություններ կատարելով Հայ և Անգլիկան Եկեղեցիների ապագայում ավելի սերտ համագործակցության և ողջ աշխարհում էալուն խաղաղության համար:

Այս ուրախ առթիվ, Վեհափառ Հայրապետը, ի նշան հայրական սիրո, Հայր Զոն Սատերթունյտի կուրծքը դարձարում է վարդապետական լանջախալով:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը Մայր Տաճարի մի գեղեցիկ նկարն է նվիրում Քենտրբերիի Արքեպիսկոպոսին, հետևյալ հայերեն մակագրությամբ. «Համայն Անգլիո և Քենտրբերիի Արքեպիսկոպոս Ամենապատիվ Մայքլին, եղբայրական սիրով, Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոս, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1981 թ. Էփեմիոսի 17»:

Ընդունելության վերջում հանդես է գալիս Հայր Զոն Սատերթունյտը, շնորհակալու-


թյան և երախտագիտության սրտագին խոսքերով:

Երեկոյան, հարգելի հյուրը, հոգեշնորհ Տ. Գրիգոր, Տ. Մեսրոպ, Տ. Ներսես արեղանի ընկերակցությամբ ներկա է լինում Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնում տրվող ներկայացմանը:

Երկուշաբթի, դեկտեմբերի 15-ին, Հայր Զոն Սատերթունյտը հրաժեշտ է առնում Վեհափառ Հայրապետից, Մայր Աթոռի միաբանությունից, և միանգամ ևս իր շնորհակալությունը հայտնեւոյ հետո, մեկնում է Մոսկվա:

Երևանի օդանավակայանում հարգելի հյուրին ճանապարհում են հոգեշնորհ Տ. Մեսրոպ և Տ. Ներսես արեղաները:

ԳՐԻԳՈՐ ԱՌԵՂԱ ԵՂՄԱՅԱՆ





Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ Ո Ւ Մ

ՆՈՅՆՄԱՐԵՐԻ 19-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, ՄԱՅՐ Տա-
ճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ
Տ. Ներսէս արեղա Պողոսյանը՝ «Ուխտոս
դիրք և կատարեցէք բնաբանով»

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ
Հայրապետը:



ՆՈՅՆՄԱՐԵՐԻ 25-ԻՆ, ՇԱՐԱԹ, Եթովպիայի
հայոց հոգևոր հովիվ հոգեշնորհ Տ. Վազ-
գեն արեղա Գեշիշյանը, որն ուխտավորա-
բար գտնվում էր Մայր Աթոռում, մեկնեց
Մոսկվա, վերադառնալու համար իր պաշ-
տոնատեղին:



ՆՈՅՆՄԱՐԵՐԻ 26-ԻՆ. ԿԻՐԱԿԻ, ՄԱՅՐ Տա-
ճարում պատարագեց և քարոզեց հոգե-
շնորհ Տ. Մեսրոպ արեղա Պալյանը՝ «Տեսէք
և զգոյշ լինուք յամենայն ազահութենէ, զի
ոչ եթէ ի մթերից ընշից իցեն կեանք նորա»
բնաբանով:

Սուրբ սլատարագին ներկա էր Վեհափառ
Հայրապետը:



ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-ԻՆ, ՇԱՐԱԹ, «տօն սըր-
բոց առաքելոցն և առաջին լուսաւորյացն
մերոց Թադէոսի և Բարթողիմէոսի»: Մայր
Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Նդի-
շն արեղա Գարաշյանը:



ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-ԻՆ, ՇԱՐԱԹ, Վեհափառ
Հայրապետի հրամանով, գերաշնորհ Տ. Սա-

հակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանի
ընկերակցութեամբ, հոգեշնորհ Տ. Հուսիկ
վարդապետ Սանթուրյանը մեկնեց Թաքու՝
որպէս առաջնորդական փոխանորդ:

Գերաշնորհ Տ. Սահակ սրբազանը, առաջ-
նորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Հուսիկ
վարդապետին ներկայացնելուց հետո թե-
մական խորհրդին և հավատացյալ ժողո-
վրդին, երկուշաբթի, դեկտեմբերի 4-ին,
վերադարձավ Մայր Աթոռ:



ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, ՄԱՅՐ Տա-
ճարում պատարագեց արժանապատիվ Տ.
Մկրտիչ քահանա Մկրտչյանը:

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ
Հայրապետը:



ՆՈՅՆՄԱՐԵՐԻ 10-ԻՆ, ՈՒՐԱԹ, Գերագույն
Հոգևոր Խորհրդի նիստում արձանագրվեց
Եղիշն վարդապետ Սարգսյանի 1961 ապրիլ
17 թվակիր գրութունը, որով նա հրաժար-
վում էր հոգևոր ասպարեզից:

Գերագույն Հոգևոր Խորհուրդը միաձայ-
նութեամբ որոշեց խնդրել Վեհափառ Հայրա-
պետից նրան կարգադուրկ հայտարարել և
դասել աշխարհականների շարքում՝ Սար-
գիս Սարգսյան իր նախկին անունով:


Վեհափառ Հայրապետը 1961 թվականի
նոյեմբեր 25 թվակիր վճռով հաստատեց
Գերագույն Հոգևոր Խորհրդի սույն որո-
շումը:





ԿԱՅՍԵՐԵԿԱՆ ՆՎԵՐ ԱՄԵՆՈՅՆ ՀՈՅՈՑ ՀՏԵՐԸՊԵՏԻՆ

Վեճափառ Հայրապետը վերջերս ուրախությամբ ունեցավ ստանալու Եթովպիայի կայսր Հայլե Սելասիեի հրամանով և հովանավորությամբ կատարված և նրա կայսերական ստորագրությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածին նվեր ուղարկված Աստվածաշնչի ամփարերեն թարգմանության նոր հրատարակությունը:



ՀԱՅԼԵ ՍԵԼԱՍԻԵ ԿԱՅՍԵՐ ԶՈՆԸ ԱՄԵՆՈՅՆ
ՀՈՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Այս ուրախ առիթով, քարեպաշտ Կայսեր ուղղված նույնքեր 29 թվակիր իր օրհնու-

թյան և ողջույնի թղթում Վեճափառ Հայրապետը գրում է.

«Զաղըր Ռուզումով սաացանք Ձեր սուրբ ընծան՝ Աստվածաշունչ Մատյանը ամենադան լեզվով, յույս տեսած Ձեր բարձր հրամանով և հովանավորությամբ, յուր Մեր սեղանի վրա պիտի պահենք միշտ և Մեր սրտին մոտիկ, իբրև խորհրդանշան Ձեր ազնիվ զգացումներուն դեպի մեր Սուրբ Աթոռը և սիրո հարաբեղություններուն մեր երկու քույր Եկեղեցիներուն միջև, որոնք երկար դարեր շարունակ Զրիստոսի լույսը մառ են պաներ Արևելքի սահմաններուն վրա, հաճախ իրենց մարմնի նահատակության իսկ զնով:

Ենորհակալություն Ձերդ Վեճափառության: Հայ ժողովուրդի սուրբ հավատքի բազմադարյան կեղծուն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնեն ջերմապես կաղոթենք առ Աստված Ձեր կյանքին արևշատության, Ձեր Եկեղեցիին ծաղկումին և Ձեր քաղի և չարքաշ ժողովուրդին բարօրության և երջանկության համար, Ձերդ Վեճափառության հայրական ապահով ուղվանիին ներքև:


Թող միշտ խաղաղ, միշտ արևոտ և միշտ պտղառատ մնա Ձեր երկիրը:

Կաղոթենք նաև, որ Տիրոջ ողորմությամբ հետպիտեռ առավել ջերմանան սիրո և եղբայրության կապերը մեր երկու քույր Եկեղեցիներուն և մեր երկու ժողովուրդներուն միջև:

«ՈՒՂԻՂ ԵՂԻՑԻՆ՝ ԱՂՈԹՔ ԻՄ՝ ՈՐՊԷՍ ԽՈՒՆԿ ԱՌԱՋԻ ԶՈ, ՏԵՐ» (Սաղմ. ճեմա 2):

«ՍԵՐ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՑ ԹԻՍՈՒՍԻ ԶՐԻՍՏՈՍԻ ԵՂԻՑԻՆ ԸՆԴ ԶԵՋ ԱՅԺՄ ԵՒ ՅԱԻԲՏԵԱՆ»:
ԱՄԵՆ»:





ԳԵՐԵՆԻՒ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՓՈԼԱՏՅԱՆ

ԱՍՏՎԱԾԱԶՆԶԻ ԱՄԶԱՐԵՐԵՆ ՀՐԱՏԱՄԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Աստվածաշունչը ամհարերեն լեզվով լույս տեսավ 1961 թվականի հուլիսին, Աղղիս-Արեբայի Ժուլյա և խաղաղություն կայսերական ապարանին մեջ, մեծ ուրախություն ապառնառելով բոլոր եթովպացիներուն:

Հարեշական Ուղղափառ Նիկեացի պաշտօնական լեզուներին Դ զարուն Աստվածաշունչը սկսավ զենգերենի թարգմանվիլ: Աստվածայա տուրքան լեզուն և ամբողջ Հարեշական դասական գրականությունը նույնպես զենգերեն են:

Հին ժամանակ Հարեշական մեծամասնությունը զենգերեն կխոսեր, կկարդար և կգրեր: ԺԹ դարեն սկսյալ զենգերենը տնդր տվավ ամհարերենի, որ ներկայիս երկրին բնակչության մեծամասնության կողմն խոսված լեզուն է: Մինչև մեր օրերուն, երբ Եթովպիո մեջ տակավին բացված լին միջնակարգ վարժարաններ, ուսուցումը եկեղեցի մե նաշնորհն էր միայն և կկատարվեր զենգերեն լեզվով: Վանքերուն մեջ Տակավին Եթովպիո մեջ կարգ մը մենաստաններ կշարունակեն այս սովորությունը, իսկ քաղաքներու եկեղեցիներուն մեջ ընդհանրապես ընթերցվածնեքը ամհարերեն լեզվով կկատարվին, իսկ

Ավետարանները կկարդացվին զենգերեն լեզվով:

Աստվածաշունչը առաջին անգամ ամհարերենի թարգմանվեցավ անդլիական Ս. Գրոց ընկերության կողմն ԺԹ դարուն և սկսյալ մաս առ մաս հրատարակվիլ, մինչև որ ամբողջացավ 1840-ին, երբ լույս ընծայված մատյանները Եթովպիա բերվեցան, Թեոդորոս կայսրը ուրախութենեն բացականչեց. «Աստված իմ, ի՛նչպես մենք Հարեշներս կրնանք մոռնալ անդլիացիները, որոնք մեզի հազարավոր Աստվածաշունչ մատյաններ տվին»:

Ներկա կայսրը՝ Հայլե Սելասիե Ա, երբ տակավին խնամակալ իշխան էր, որոշեց Աստվածաշունչը զենգերեն ամհարերենի վերածել տալ: Անդլիական Ս. Գրոց ընկերության կատարած թարգմանությունը զենգերենն չէր հղած: Կայսրը 1918-ին Ս. Գրոց մասնագետ գիտնականներն մարմին մը կազմեց՝ Աստվածաշունչը թարգմանելու և զենգերենի հետ միասին ի լույս ընծայելու համար: Այս մարմինը Աստվածաշունչն մասեր հրատարակեց, որոնք մեծապես օգտակար հանգիստացան Հարեշ ժողովուրդի հոգևոր զարթոնքին: Նույն մարմինը 1931-ին, բո-

Պ Ա Տ Մ Ա - Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՊՐՈՅ. 2: ԱՃԱՌՑԱՆ

Մ Ե Ս Ր Ո Պ Մ Ա Շ Տ Ո Յ*

ԳԼՈՒԽ 9 ԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ

Ե ԴԱՐԻ ԳՐԱԳԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

§ 1

Այսպես հիմնվեց հայ մատենագրությունը, որի հայրն ու հիմնադիրը եղավ Մեսրոպ Մաշտոց և մեծագույն գործիչը՝ Սահակ Ս. Գրքի թարգմանությունը դարագլուխ բացավ հայ կյանքում. նրան հետևեց բազմաթիվ գրքերի թարգմանությունը. ամեն կողմ դուրս եկան բազմաթիվ հիմնական վարդապետաբանը մի կողմից ուսուցիչներ էր հասցնում, մյուս կողմից նորանոր երկեր հրապարակ հանում. Հռութանոսի սովորեցրած աշակերտները տարածեցին գրչության արվեստը Հայաստանում, գրիչների խմբերը սկսեցին իրար գերազանցել և ձեռագրերի արտագրությունները բազմաթիվ տեսակներով սփռվում էին ամեն կողմ. վանքերը դարձան կրթության կենտրոններ, եկեղեցիները պայծառացան, հայերեն ժամերգությունը և հայերեն ընթերցվածները շուրջ ու իմաստ տվին նրանց, ու քաշում էին մարդկանց ահագին մի բազմություն, որ հանությամբ ունկնդրում էր մայրենի լեզվով ժամերգության. վարդապետները կամ մեկնիչները բնակրից հորդարուխ քարոզներով երկնային խոսքը սփռում

էին նրանց մեջ և կրոնի հաստատ գիտակցությունը ամրապնդում. վերջապես ամբողջ երկիրը տոգորված էր գրական-կրոնական մեծ շարժումով.

Բայց ինչ որ այդ բուրբ մեջ գերազանցում և ամբողջ շարժման անիվն էր կազմում, դա էր անկախ ազգային ինքնաճանաչության և ազգային գիտակցության զաղափարը, որ մինչև այն չկար.

«Պարսկական մասին վերին իշխանություններ նորանոր փորձեր կրնե՞ր հալ ժողովուրդը զուտ մազեղանց կրոնին վերադարձնել և պարսիկ յեզուն ու մատենագրությունը տարածել անոնց մեջ, մինչ արևմտյան մասին տիրող հուռմանը անարգանոք կնայեն րարբարոսներու վրա և անոնց լեզվին ու առանձնահատկությանը քնականորեն որեւէ ըմբռնում չունենին... Այս պատճառով եթե նկատենք այն պարագաները, որոնց տակ Մաշտոց ու Սահակ իրենց մտքի գործունեությունը եկեղեցական ու ժողովրդական ինքնագիտակցության զարթուցիչ Հայ Ազգը, և այս գործքին հետ համեմատության ղենք դանայան այն պարզեւր, զոր Պեպինոս փռանկ քաղաքական ու եկեղեցական ամեն միջոց լիապես ի ձեռին ունենալով նվիրեց զերման ժողովրդյան, այն ատեն թե՛ Պեպինոս և թե՛ յուր զինակիրը Վինֆրիդ՝ խեղճ թղուկներ կերևան համեմատության մտքի

* Նարեկակիւմ «Էջմիածին» ամսագրի 1954 թվականի XI, XII, 1955 թվականի I, II, III, IV, V, 1956 թվականի I, II, IV—V, VII—IX, XI—XII և 1961 թվականի Ժ և ԺԱ համարներին:

այն հսկաներու (Մարկվարտ, Շառլոտ-թյուն հայ նշանագրերու, էջ 7—8)։

Հայաստանի ամեն կողմերում բացված դպրոցները, էջմիածնի վարդապետարանը, Սահակի և Մեսրոպի անխոնջ գործունեութիւնը և իրենց աշակերտների ուսումնասիրեալները՝ քիչ ժամանակով այնպես բարձրացրին հայոց հոգեւոր ու մտավոր հորիզոնը, այնպիսի ծաղկալի վիճակի մեջ գրին բովանդակ երկիրը, որին երբեք չհասաւ հետո անցյալում, Այս պատճառով Ե դարը, համեմատութեամբ բոլոր հաջորդ դարերի, կոչվեց Ոսկեդար։

Փարպեցիին, որ ժամանակակից չէր այս գրական շարժման սկզբնավորութեան, բայց նրա ավելի մեծ չափերով ծաղկումը տեսաւ ու վայելեց, այսպես է նկարագրում երկրի այն ժամանակվա վիճակը. «Եւ դարձեալ ի գլուխ սրբոյ Հայրապետին Հայոց Սահակաւ զգործ մեծ հոգեւոր վաստակոյն՝ կարգեցաւ վաղվադակի յայնմհետէ դպրոցի հօտին ուսմանց, ռազմացան դասք գրչաց, ելեկս առնելով զմիմեանք զարդարեցան պաշտամունք սուրբ եկեղեցին, յորդորեցան ռազմութիւնք արանց և կանանց ժողովրդոց ի տօնս Փրկչին և ի ժողովս մարտիրոսաց»։ Որք շահեալք լի հոգեւոր օգտիւ՝ ընթանային խնդալիցք ի հաղորդմանէ մեծի խորհրդոյն, մեծամեծք և տղայք, սաղմոսելով և կցորդս ասելով ամենայն տեղիս, ի հրապարակս և ի փողոցս և առտնին, Պայծառացան եկեղեցիք, շուք առին վկայարանք սրբոյ, միշտ ծաղկելով ի նոսա ուխտ Կտակարանաց, Ընծայիւք հանապազարուդիս հոսէին վտակք յասողացն մեկնութեանց, որք զծածուկս մարդարէից ընթելով ի յայտնութիւն սեղանս ամենալիցս հոգեւոր խորտկօք դնէին առաջի ամենայն ժողովրդեանն. յորոց ճաշակեալ իմաստախնդիրն մարդոց՝ քաղցրանայ ի բքիս նոցա, ըստ բանի սաղմոսերգին։ Բանք վարդապետութեան քան զխորիսիս մեղուս Եւ դի միանգամայն իսկ ասացիդ ըստ բանի սուրբ մարգարէին Եսայիայ թէ լցաւ երկիրս ամենայն Հայոց գիտութեամբ Տեառն ի հոգեւոր վտակաց սուրբ հայրապետին Սահակայ, իբրև զլուրս բազումս որ ծածկեն զծովս։ Եւ շնորհիւ ամենախնամ Փրկչին Քրիստոսի կատարեալ այս ամենայն ի ժամանակս Վոսմշապհոյ, ըստ յառաջագույն գրելոց, և լուսաւորեալ աշխարհս Հայոց» (Փարպեցի, էջ 17—18)։

Ամբողջ այս մեծ շարժումը, գրական այս մեծ գործունեութիւնը Սահակի և Մեսրոպի աշխատութեան արդյունքն է։ Մոտիկից տեսնենք, թե ի՞նչ նկարագիր ունի հիշյալ նորածիլ գրականութիւնը, որո՞նք են նրա բնորոշ հատկութիւնները, որո՞նք են Սա-

հակի և Մեսրոպի աշակերտները, և վերջապես ի՞նչ գրական արտադրութիւններ մնում են մեզ հիշյալ ժամանակից։ Այս տեսութիւնը ավելի լավ պիտի պատկերացնեն երկու նշանավոր գործիչների աշխատութիւնը։

Լրդդունքը թող ցույց տա գործիչին։

§ 2

Երկու բնորոշ հատկութիւն ունի Ոսկեդարի գրականութիւնը. առաջին՝ կրօնական գույն և երկրորդ՝ թարգմանչութիւն։ Այս երկու հատկութիւններն էլ միայն մեզ սեփական չեն և հատուկ են բոլոր այն գրականութեանց, որ մի անգամից և ճշիւրութեամբ են մտնում ժողովրդի մեջ։ Այն ժամանակվա հասկացողութեամբ գրականութիւնը պարզապէս կրօնի զարգացման կամ ժամակարգութեան ծառայող մի գործիք էր. ուսուցչական գործը հանձնված էր միմիայն կրօնավորներին, և սրա համար է որ վառդապետ, որ բնապէս «տառացի» կամ վարժապետ էր նշանակում, հետո դարձաւ կրօնավորական աստիճան։ Նույն հասկացողութիւնը կենդանի էր դեռ մինչև վերջերս բոլոր արեւելյան հետամնաց ժողովուրդներին մեջ. ուսմիկը կաղալ բառով «եկեղեցական երգեցողութիւն» էր հասկանում և կառնացող անունը տալիս էր բոլոր կրօնավորներին, Սահակ և Մեսրոպ նմանապէս առաջնորդված լինելով այս զառափարով և գրականութիւնը կրօնական զարգացման համար միայն տված լինելով Ազգին, բնական է, թե ամենից առաջ Ս. Գրքը և կրօնական գրքեր պիտի տային նրան։ Այսպէս է եղած նաև իդաւնդական, գոթական և սլավական մատենագրութեանց սկզբնավորութիւնը. յայտեղ էլ տեսնում ենք, որ գրականութիւնը մտել է միայն կրօնական պետքերը լրացնելու համար և սկսել է նախ Ս. Գրքի թարգմանութեամբ։ Աֆրիկայի, Ամերիկայի և Օվկիանիայի արդի բազմալեզու ժողովուրդների խիստ շատերի գրականութիւնը միմիայն Ավետարանի թարգմանութիւնից է բաղկացած և կատարված է ավետարանական քարոզութեան նպատակով և քրիստոնեութիւն տարածող միսիոներների ձեռքով։

Թարգմանչութիւնը նմանապէս պայման է բոլոր նոր սկսող գրականութեանց համար, մանավանդ նրանց, որ ուժեղ թափով են սկսում, եթե Ս. Գրքի թարգմանութիւնը կրօնական պահանջ է արդեն, առհասարակ թարգմանչութիւնը սնունդ է նորածին գրականութեան, որ դեռ զարգացման բարձր աստիճանի հասած չլինելով, չի կարող առկա երկեր արտադրել։ Թարգմանու-

թյուններն են, որ պիտի սնուցեն նրան, սրբանցից հետո պիտի գան նվաճողաբար կազմված աշխատություններ և հետո միայն բուրրովին անկախ գործեն:

Մեր գրականությունը չէր կարող բացառություն կազմել ընդհանուր օրենքի մեջ, ուստի բնական է, որ նա էլ սկսեք թարգմանությունը և թարգմանիչներով:

§ 3

Ոսկեդարի գրականության ու կրոնական շարժման մեջ մեծ դեր են կատարած րարգմանիչ կոչված անձերը, ժամանակակից պատմության մեջ այս անունով են հայտնի ըստ Կորյունի՝ Հովհան Եկեղեցացի, Հովսեփ Պաղնացի, Նզնիկ Կողբացի ինքը Կորյուն և Ղևոնդ, որոնց վրա հորինացին ավելացնում է նաև Արձան, Թե րուն ի՛նչ է նշանակում այստեղ այս բարգմանիչ տիտղոսը, շատ հայտնի չէ: Ոմանք կարծում են, թե այս տիտղոսը տրվեց Սահակի և Մեսրոպի բոլոր աշակերտներին, որովհետև սրանց աշխատության մեծագույն մասը հունարեն կամ ասորերեն թարգմանություններին էր բաղկացած: Գանձակեցին թարգմանիչ է կոչում էջմիածնի՝ վարդապետարանի աշակերտներին, «եւ ուսեալ մանկանցն այնոցիկ զամենայն իմաստութիւնս ներքինս և արտաքինս, եղևն թարգմանիչ ճշմարտութեան, և թարգմանեցին զամենայն գիրս Հին և Նոր Կտակարանացն» (էջ 15):

Բայց Գարագաշյան, անսխառն համարելով այս կարծիքները, ենթադրում է, թե թարգմանությունը մի առանձին արվեստ էր, որ կար մանավանդ գրերի գյուտից առաջ, թարգմանիչ տիտղոսը ընդհանուր չէր բոլոր այն ժամանակի վարդապետներին, այլ այս անունով կոչվում էին միայն այն անձերը, որոնք սովորել էին առանձնապես թարգմանության արվեստը (սթընական պատմություն, Գ, էջ 44—45), ըթև թարգմանիչ տիտղոսը տրվեք հունարենից կամ ասորերենից գրքեր թարգմանած լինելու պատճառով, ընական է, թե գրերի գյուտից առաջ թարգմանիչ լպիտի գտնվեք Բայց ահա վերահիշյալ վեց անձերից գոնե մի մասը թարգմանիչ էր գրերի գյուտից առաջ, նույնիսկ Մեսրոպ թարգմանիչ է կոչված հորենացուց իր քարոզության գեո առաջին շրջանում, «եւ ի վարդապետել Երանելոյն Մեսրոպայ՝ ոչ փոքր կրէր վտանգս, քանզի ինքն էր ընթերցող և թարգմանիչ, և եթէ այլ ոք ընթերցող, ուր նա ոչ հանդիպէր, զանխու ի ժողովրդոցն ինչը՝ յազազս ոչ լինելոյ թարգմանիչ» (հորենացի, Գ խէ), ձիշտ այս խոսքից շատ հայտնի կերպով հասկացվում է, որ երկու

տարբեր պաշտոն էր այն ժամանակ, ընթերցող և թարգմանիչ, ընթերցողն այն էր, որ գեղեցիկ ձայն և լավ առողանություն ունենալով, կարդում էր Ս. Գիրքը եկեղեցում, իսկ թարգմանիչը «Ս. Գրքի մեկնիչն» էր: Ընթերցողը հաճախ չէր էլ հասկանում կարդացածի միտքը, որովհետև ասորերեն կամ հունարեն էր, Բայց թարգմանիչը լավ գիտեք այդ լեզուներից գոնե մեկն ու մեկը և ընթերցումից հետո քեմ բարձրանալով, աչքը պահած գրքի վրա, բացատրում էր հայերեն լեզվով՝ կարդացվածի բովանդակությունը: Մրա համար առանձին գեղեցիկ ձայն հարկավոր չէր, այլ միայն այն լեզուներին հմտություն և գիտություն: Բնականաբար այս պաշտոնները գյուղություն ունեին այն ժամանակ, երբ հայերեն գրականություն չգտնվելով, եկեղեցական ընթերցվածները հունարեն և ասորերեն էին լինում և նրանք հայերեն լեզվով ժողովրդին քերականացի բացատրելու պետք կար: Անշուշտ ընթերցողներ ավելի շատ կային քան թարգմանիչներ, ուստի կարող էր պատահել, որ մի եկեղեցում ընթերցող լինեք, բայց թարգմանիչ չգտնվեք: այն ժամանակ ընթերցումը կատարվում էր սովորական կարգով, իսկ մեկնություն չէր տրվում, ինչպես հորենացին ասաց քիչ առաջ, իսկ ժողովուրդը ոչինչ չէր հասկանում:

Արդի քննիչները, որ թարգմանիչ բառը սխալ մեկնելով իրեն ընդհանրապես Սահակի և Մեսրոպի աշակերտ են հասկանում, երկու խմբի են բաժանում նրանց. 1) առաջին կամ երեք բարգմանիչներ, և 2) երկրորդ կամ կրասեք բարգմանիչներ: Առաջին են համարվում այն աշակերտները, որ գրերի գյուտի ժամանակ բախական հասակ և դարգացում ունենալով, կարող էին իրենց վարդապետներին օգնական ու գործակից հանդիսանալ թարգմանության մեջ. իսկ երկրորդ են կոչվում առաջին թարգմանիչների աշակերտները, որոնք սրանց մոտ բախական կրթվելուց հետո, իրենց ուսումը կատարելագործելու համար ուղարկվեցին զանազան քաղաքներ: Առաջին աշակերտները 60 հոգի էին¹, բայց նրանց մեծ մասի վրա հիշատակություն չկա. նրանցից հայտնի են միայն՝

1 Հովսեփ քահանա՝ կաթողիկոս Վայոց՝ ձորեցի:

¹ Օրմանյան, «Ազգապատմութ», Ա, էջ 277, ասում է, թե Սահակ ուներ 60 աշակերտ, այժմ ավելացան Մեսրոպի 40 աշակերտները (սեպհերք, Բ, էջ 9):

2 Աբրահամ խոստովանող Զեւեակացի.
հպիսկոպոս Բզնունյաց.

3 Անանիա կամ Անանիաս, հպիսկոպոս
Սյունյաց.

4 Գինթ կամ Գնիթ, հպիսկոպոս Դերջանի.

5 Եզնիկ կամ Եզնակ Կողբացի, հպիսկո-
պոս Բագրևանդա.

6 Երեմիա, հպիսկոպոս Աղվանից.

7 Կորյուն, հպիսկոպոս Վրաց.

8 Մովսես, հպիսկոպոս Վրաց.

9 Մուշե կամ Մուշեղ, հպիսկոպոս Արծրու-
նյաց.

10 Սամվել, հպիսկոպոս Վրաց.

11 Տեր Խորենացի, հպիսկոպոս Կայենա-
կան.

12 Աղան Արծրունի.

13 Արձան.

14 Գիտ կամ Գյուտ Գողթնեցի.

15 Դանան.

16 Ենովք.

17 Երեմիա երեց Վաղարշապատցի.

18 Քաղիկ կամ Քողիկ.

19 Խոսրով կամ Խոսրովիկ թարգմանիչ.

20 Ղևոնդ կամ Ղևոնդես երեց Վանանդեցի.

21 Մուշե Տարոնեցի.

22 Հովհան խոստովանող.

23 Հովհան Եկեղեցացի.

24 Հովնաթան քահանա.

25 Հովսեփ Պաղնացի.

26 Տիրայր Խորենացի.

27 Վահան Ամատունի.

28 Հմայակ Մամիկոնյան:

Այս թարգմանիչների մասին տե՛ս Ի միջի
սյուրջ Զամյան, Ա, 535—541, Զարբհանալ-
յան. «Պատմություն հայկական դպրության»,
Ա, էջ 272—277 և ավելի ընդարձակ՝ Հով-
հանես վարդապետ Մխչթյան, «Հանդես
ամսօրյա», 1902, էջ 58—61 և 145—151.

Իսկ երկրորդ թարգմանիչներն են, ըստ
Զարբհանայանի, անդ. էջ 277—280.

1 Դավիթ Անհաղթ.

2 Գյուտ կաթողիկոս.

3 Հովհան Մանդակունի.

4 Եղիշե.

5 Մովսես Խորենացի.

6 Մամբրե Վերծանող.

7 Ղազար Փարպեցի.

8 Եղրաս Անգեղացի.

9 Խալիկ կամ Խաչատուր.

10 Անդրեաս.

11 Քաթուլ.

12 Վարդա.

Թարգմանիչների այսպիսի բաժանումը
ըստ Գարագաշյանի ազիտ է արդեացք և գո-
րություն չունի իրականության մեջ. Սրանց
համար իբրև պատմական փաստ են ծառա-
լուծ թժայտաւորք: Շնորհալի. Ասողիկ.

Մամվել երեց և ուրիշ զանազան հետին մա-
տենագիրներ, որոնց վկայությունը իհարկե
ամենևին զորություն չունի Սրանց մեջ հի-
շենք հատկապես Կիրակոս Դանձակեցին, որ
թարգմանիչների կարգն է դասում մինչև իսկ
«Ստեփաննոս Միւնեաց հպիսկոպոս» և
«Հովսեփանոս» (գեղագիր հույն). և որպեսզի
սխալ հասկացողություն չկազմվի հիշյալ
անձների մասին, առաջինի համար ասում է.
«Միւնեաց հպիսկոպոս, քաղում մեկնութիւնս
Իթող Սուրբ Գրոց, Յորայ և Աւետարանացն.
այլ և Դանիէլի և Եզեկիէլի, և զպատասխա-
նիս թղթոյն Գերմանոսի պատրիարքին Կոս-
տանդնուպոլսի: Իսկ երկրորդի համար՝ «որ
զգիրսն յարմարէր գեղեցիկ՝ Հոսիանոս Սա-
մստացի»:

Շատ կասկածելի են մանավանդ կրտսեր
կողմած թարգմանիչները, որոնցից ոմանք,
ինչպես Դավիթ Անհաղթ և Մովսես Խորենա-
ցի, դեռ Ե դարի հեղինակներ էլ չեն, այլ ա-
վելի ուշ ժամանակի Իբրև առաջին թարգ-
մանիչ մեջ բերված անձները գրեթե բոլորն էլ
ժամանակակից պատմագիրներից վկայ-
ված են, բայց սրանցից իսկապես միայն
վեցն են, որ թարգմանիչ տիտղոսը կրում են.
վերևում բացատրված նշանակությամբ. Այս
անձները նշանակել ենք աստղանիշով Սյուս-
ները իրոք աշակերտ եղել են Սահակին և
Մեսրոպին, բայց թե սրանք էլ թարգմանիչ
եղել են՝ հայտնի չէ. Գիտենք միայն, որ
նրանք զանազան պաշտոններ են վարել Հա-
յաստանում, ինչպես հպիսկոպոս կամ առաջ-
նորդ, դպրոցների վերակացու, քահանա.
սարկավազ և գործակից իրենց վարդապետ-
ների, բայց այլ է աշակերտ և պաշտոնյա,
այլ է թարգմանիչ.

Նմանապես նույն աշակերտները բոլորն
էլ չեն մասնակցած այն գրական արտադրու-
թյանց մեջ, որ Ե դարից ժառանգություն են
մնում մեզ. Ինչպես նախորդ գլուխներում
տեսանք, դարձյալ նույն հինգ կամ վեց ան-
ձներն են, որ ասորերենից կամ հունարենից
թարգմանության մեջ դեր ունեն, Անշուշտ
կարող են գտնվել սրանցից գուրս նաև ուրիշ
անձներ հիշյալ 28 աշակերտների խմբից, ո-
րոնք դեր են ունեցել այս թարգմանությանց
կամ ուրիշ գրական աշխատությանց մեջ,
բայց նրանց անունները չեն հիշատակված:

§ 4

Ե դարը համեմատելով հաջորդ դարերի
հետ, շատ ճոխ է գրական արտադրությանց
կողմից. սրանց թվական առավելությունը
գերազանցում է բոլոր մյուս դարերից. մի-
այն ժ՞ դարն է, որ կարող է այս կողմից
մրցել Ե դարի հետ: Գալով լեզվական ար-
ժանեքին, ոչ մի դար չկարողացավ մոտենալ
Ոսկեդարի լեզվին և Ե դարի հայերենը ամեն

դարի և ամեն ժամանակի համար եղավ լեզվի դասական օրինակ:

Ե դարից մեզ հասած աշխատությունները շատ են և իրենց լեզվական փոխադարձ նմանությունից դատելով բաժանվում են լոռա դասի կամ դպրոցի, այն է՝ Եզնիկյան, Եփրեմյան, Կյուրեղյան և Ագաթանգեղյան: Այս դպրոցների լեզվական (կամ ոճական) տարբերությունները, ինչպես նաև յուրաքանչյուր դպրոցին պատկանող աշխատությունների ցանկը տե՛ս իմ «Շալոց լեզվի պատմության» մեջ, մասն Բ, գլուխ ԺԶ:

Ոսկեդարի գործերը կարող ենք բաժանել նաև երեք տեսակի. 1) ինքնագիր գործեր, 2) ասորերենից թարգմանություններ և 3) հունարենից թարգմանություններ: Ամենից սակավաթիվը առաջինն է. մեզ հասած աշխատությունների մեծագույն մասը պատկանում է երրորդ տեսակին, իսկ ասորական թարգմանությունները քանակով բոնում են երկուսի միջին տեղը: Այսպես, ինքնագիր են միայն Եզնիկ, Կանոնագիրք, Սահակի և Մեսրոպի թղթերը, Կորյուն, Ագաթանգեղոս և Բյուզանդ. ասորերենից են Եփրեմյան դպրոցի արտագրությունները և ուրիշներ, իսկ մնացյալը հունարենից է թարգմանված:

Բոլոր այս աշխատությունները, ինչպես ասացինք, արդյունք են Սահակի, Մեսրոպի և իրենց աշակերտների գրչի. բայց դժբախտաբար որոշակի հայտնի չէ, թե ո՞ր գործերը ո՞ր հեղինակից են: Բանասերները աշխատել են հեղինակը այլուստ ծանոթ աշխատությունների լեզուն համեմատել անձանոթների լեզվի հետ և ղրանով գտնել, թե այս վերջիններից որոնք ո՞ր հեղինակին են արվել: Այսպիսի համեմատական քննության երևելի մի օրինակ տվեց Նորայր Բյուզանդացին իր «Կորյուն վարդապետ և նորին թարգմանութիւնք» գրվածքով, որի մեջ ապացուցում է, թե Ագաթանգեղոս, Բյուզանդ, Մակաբայեցվոց երեք գրքերը և Եվթաղի Ս. Գրոց առաջարանները՝ Մեսրոպի կենսագրության հեղինակի, այն է Կորյունի աշխատություններն են: Սրան հակառակ տե՛ս Կողյան, «Մակարայեցվոց Բ գրքին հայտնեն թարգմանությունը», Վիեննա, 1923, էջ 19—20 և մեր նկատողությունը «Շալոց լեզվի պատմության» մեջ, մասն Բ, Մ. Գարագաշյան կարծում էր, թե լոռա մեծ մարգարենները, Ոսկերեքանի «Մեկնութիւն Մատթէի, Թղթոցն Պողոսի, Նսայեայ, Մենդոց և Սերբերիանոսի ճառերը, որոնց մեջ ծանր, յուրջ ու հանդարտ մի լեզու է տիրում, թարգմանություններն են Սահակի՝ իբրև լուրջ և ծանրագույն ալեգորիկ ծերունու նույն հեղինակը կարծում էր դարձյալ, թե Մովսեսի

Հնգամատյանը, Ավետարան և այլ այսպիսի վերլուծական շարադրությամբ (պարզագույն հայերենով) գրված աշխատությունները Մեսրոպին են: Ավելի իրական փաստունենք ասորականից եղած թարգմանությունները (Եփրեմի «Մեկնութիւնք Հին և Նոր Կտակարանաց», «Շալոց արարած», «Մեկնութիւն Աւետարանի», «Մեկնութիւն Պողոսի 14 թղթոց», «Ճառք», «Նաեբիոսի Եկեղեցական պատմութիւն», «Զգոն», «Լարութն Եղեսացի», «Թուղթ Իգնատիոսի») վերագրելու Հովսեփ Պաղնացուն և Եզնիկ Կողբացուն, քանի որ Կորյունի վկայությամբ գիտենք, թե այս երկու աշակերտներն են, որ Եղեսիա ուղարկվեցին՝ ասորական դրվածները հայերենի թարգմանելու համար. «Որոց դարձեալ դէպ լինէր հղբարս երկուս յաշակերտացն՝ յուղարկել ի կողմանս Ասորոց ի քաղաքն Եղեսացւոց, զՅովսէփ, զոր ի վերոյն յիշեցաք, և նրկորոցն Եզնիկ անուն՝ յԱյրարատեան գաւառէն ի Կողբ գեղջէ, զի յասորական բարբառոյն՝ ցնոցին հարցն սրբոց գաւանդութիւնս, հայերէն գրեալս դարձուցեն» (Կորյուն, էջ 20): Ծանոթ է նաև, որ Արրահամ Զենակացին թարգմանել է «Վկայք Արևելից»-ը, իսկ հունարենից եղած թարգմանությանց համար Կորյուն (էջ 21) հիշում է Ղևոնդի, իր՝ Կորյունի և Եզնիկի անունները: Բայց այս խնդիրը կարելի պիտի լինի ճիշտ կերպով պարզել միայն այն ժամանակ, երբ կկազմվի Ոսկեդարի հայ մատենադրության մամուլական համարաբառը:

Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

1. Ե դարի գրական մեծ շարժումը կազմեց ու ձևակերպեց հայ ազգային ինքնանաշնորհությունը. դա հին հայոց Ոսկեդարն է: 2. Ոսկեդարի գրականությունը ընդհանրապես կրոնական բնույթ ունի և բարգավաճական է: 3. Թարգմանիչները բաժանվում են երկու կարգի. առաջին՝ թարգմանիչներ (սրանցից հայտնի են 28 հոգի) և երկրորդ՝ բարգմանիչներ (հայտնի են 12). այս բաժանումը վավերական չէ: 4. Ոսկեդարը բաժանվում է 4 դպրոցի (լեզվի տեսակետով). եզնիկյան, եփրեմյան, կյուրեղյան և Ագաթանգեղյան: Գրական արտադրություններ երեք տեսակ են. 1) ինքնագիր, 2) ասորերենից թարգմանություններ, 3) հունարենից թարգմանություններ: Ինքնագիր գրքերի հեղինակները հայտնի են, բարգմանիչները մեծ մասամբ անհայտ:

ԹԵՈՂՈՐՈՍ ՄՈՊՍՈՒԵՏԱՅՈՒ ԼԵՐՋԱԿԵ

§ 1

Կորյուն Սահակի և Մեսրոպի վերջին օրերին է դնում Նեստորական հերձվածի երկրորդ հայտնությունը, որի դեմ մաքառեցին երկու հայրերը և կարևոր թղթակցություն ունեցան նշանավոր հույն եկեղեցական հայրերի հետ:

Այս խնդրի հանգամանքները հետևյալներն են:

Եփեսոսի ժողովից հետո, կայսերական հրովարտակով հրամայված էր ամենքին այդպիսի Նեստորի գրվածքները, ուր որ գտնվեին, նույնպես պատիժ էին սպառնացած այն անձանց, որոնք պահում կամ կարդում էին այդպիսի գրվածքներ: Նեստորականները տեսնելով, որ իրենց աղանդը իսպառ քանջին պիտի լինի, մտածեցին մի ուրիշ հնարք: Սկսեցին հրապարակել Նեստորի ուսուցիչ Թեոդորոս Մոպսուեստացու և սրա էլ ուսուցիչ Թեոդոր Տարսոնացու գրքերը, որոնց նպատակն էր Եփեսոսի և Ալուքիսարի մոլորությունները հերքել: Նեստորականները Նեստորի քարոզություններն էլ խառնելով նրանց հետ և պաշտպանելով նրանց մեջ գրվածներն իբրև ուղիղ և համաձայն սուրբ հայրերին, ուզում էին մի կերպ արդարացնել Նեստորին, իբր թե ինքն էլ նրանցից տարբեր մի բան չէր քարոզած: Այս կարծիքները նաև արևելյան ազգերի մեջ տարածելու համար, նեստորականները Թեոդորոսի և Դիոդորի գրքերը հունարենից թարգմանելով հայերեն, պարսկերեն և ասորերեն լեզուների, սկսեցին ցրել այս լեզուները խոսող ազգերի մեջ: Այս գրքերի շարքում հիշվում է հատկապես Թեոդորոս Եպիսկոպոս Մոպսուեստացու (350—428) գրած մի գիրքը մոզական կրոնի դեմ (այժմ կորած), որ ուղղել էր հայոց Μοσσοβιος քորեպիսկոպոսին, և որ Saint-Martin համարում է, թե մեր Մաշտոցն է (տե՛ս Փորթուգալ փաշա, Ենդիշեռ, էջ 159, նույնը և Ադոնց):

Նույն հայրերը լսելով այս բանը, պարտք համարեցին գրել Հայաստան՝ զգուշացնելու համար, որ չխաբվեն այդ քարոզիչներից: Առաջին թուղթը գրեց Պրոկո, որ Հովհան Ոսկեբերանի աշակերտն էր և 434 թվին Պոլսի Պատրիարքական Գահն էր բարձրացել: Այս թղթի մեջ, որ գրված է 435 թվին, Սահակի և Մեսրոպի անունով, Պրոկո նախ բացատրում է ուղղափառ վարդապետությունից դավանությունները, հետո ցույց է տալիս Նեստորականների քարոզած մոլորությունները, որոնք մի առ մի հերքում է, և վերջապես հայտնում է,

թե լսել է, որ մի քանի Նեստորական քարոզիչներ եկել են Հայաստան, հորդորում է հետո մնալ նրանցից, անխախտ պահելով ճշմարիտ դավանությունը:

Պրոկոյի թուղթը հասած է մեզ չորս լեզվով նախ՝ հունարեն քննադիրը, երկրորդ՝ հայերեն ոսկեդարյան թարգմանությունը, երրորդ՝ ասորերեն աղավաղյալ թարգմանությունը և չորրորդ՝ լատիներեն հարազատ թարգմանությունը: Հայերենը հրատարակված է նախ «Պատկեր» թերթի մեջ (1890, էջ 219—222, 271—276), հետո «Գիրք թղթոց»-ի մեջ, էջ 1—8 և մասամբ էլ «Կնիք հաւատոյ» ժողովածուի մեջ: Բայց հայերեն հրատարակության սկիզբը խառնարկված և նրա հետ է խառնված Եղեկի ծանոթ թուղթը նույն խնդրի առթիվ: Երեք լեզուների համեմատությամբ և առաջաբանական ուսումնասիրությամբ մի պատվական հրատարակությունի 2. Արիստակես Վարդանյան, տպված Վանդեռ ամսօրյա-յի մեջ 1921, էջ 1—25, որին հետևում ենք նաև մենք, նույնը արտատպված է նաև «Ազգային մատենադարան»-ի շարքում, հատոր Դ է, էջ 1—40:

Թղթի վերնագիրն է՝ «Թուղթ Պրոկոյի Եպիսկոպոսի առ Սուրբ Սահակ հայրապետ Հայոց և առ Սուրբ Մածոց»: Բայց հունարեն քննադրում այսպես չէ, այլ առանց անվան՝ ընդհանուր դիմումով: «Աստուածասէր և աստուածապաշտ Եպիսկոպոսաց և քահանայից և վանահայրք, որք միանգամ ընդ ամենայն համօրէն աշխարհն Հայաստանեայց Ուղղափառ Սուրբ Եկեղեցւոյ»:

Քուրտովին ավելորդ համարելով թղթի դավանաբանական քարոզները, որոնցով ձանձրալի լինելու լավ ժայռալիք լցված է դժբախտաբար ամբողջ մեր հին մատենագրությունը, դնում ենք այստեղ նամակի բովանդակությունը, որ պատկանում է մեզ և մեր նյութին:

«Եւ զայս ամենայն զի գրեցաք առ սէր ձեր այդր, զի լու եղև մեզ, եթէ արք ոմանք ժանտախօսք ցնորախօսք անկան յաշխարհ այդր և կամին ժանտաժուտ իմն գրովք, հակառակութեամբս ստաբան ստախորհուրդ զիտութեամբ խոտորել զպարզամտութիւն, զանպաճոյճ, զանմեքենայ, զուղղափառ գեղն հաստոցն: Բայց ես զերանելոյն Պողոսի զառաքելոյն զարձեալ ասեմ ձեզ. Զգոյշ լի ինչիք, զուցէ իոյլ որ, որ զձեզ կապուտ կողպուտ թողուցու ճարտարամտութեան բանիւր և ընդունայն խաբէութեամբ վարդապետութեան ընդունայնախորհուրդն մարդկան և ոչ ըստ վարդապետութեանն Քրիստոսի. զի հիմն

սրբութեան հաւատոյ ալ ինչ որ ոչ կարէ զնեւ, քան զայն որ եղեալն է, այսինքն է Յիսուս Բրիստոս Արդ կացէ՞ր հաստատուն ի մի հոգի եւ ի մի անձն՝ նաւատակակիցք հղեալ հաւատովք Աւետարանիս եւ մի՛ խրտուցեալք ընդոստանիցիք մի՛ յիմիք ի լարեաց թշնամ. տոյն եւ մի՛ ի նզով եւ ի կորուստ մատնիչիք ընդ նեւտորեալ եւ ընդ Թէոդորեայ, որ վարդապետն լեալ էր նորա եւ որ զլար բոյսն երեւեցոյց՝ զլարաքան նորաձայնս հրէութեան եւ զանցուցին ըստ ուրախութիւն հրէութեան եւ ըստ հերետիկութիւն առաջին արիանոսացն եւ այլոցն, որ խոտորեցան ի փառացն սրբութեւն եւ յուղիղն հաւատոց եւ նզովեցան նոքա յամենայն ժողովրդոց եւ այրեցան որ վատի խորհրդոց զիրքն էին նոցա յանդիման ամենայն ժողովրդոց, Յորմէ եւ դուք պահեսչիք զանձինս եւ զնոյն գործ գործեսչիք, զոր սուրբ ժողովք հայիսկոպոսացն դործեցին, եւ մի՛ որ զառժամանակեալ ամօթն ամօթ անձին համարեալ զլաւտենից ամօթն ժառանգեսցէ եւ ընդ նոսա դատապարտեալ ի դժոխս կործանեսցի։ Այլ պահեսչիք դուք զվարդապետութիւն, զոր ընկալեալ ի հարցն սրբոց, որ ի նիկիա սինհոդոսն էր ժողովոյն՝ զուղիղ եւ զսուրբ փառս հաւատոցն հաստատեցին, եւ զոր վարդապետութիւն սուրբքն երանելիք Բասիլիոս եւ Գրիգորիոս եւ որ միանգամ նման են նոցա, որ սրբութեամբ եւ հաւանութեամբ սուրբ հաւատս ի կեանս իրեանց հաստատեցին, որոց անուանքն գրեալ են ի դպրութեան կենաց։

Ողջ լերուք ի Տէր եւ շնորհեալ լիջիք մեզ, աստուածաւեր եղբարք։

Նրկորդ Թուղթը գրեց Մելիտինեի Ակակ հայիսկոպոսը, որի հետ արդեն բարեկամացած էր Մեսրոպ՝ իր ճամբորդութիւնց ժամանակ։ Այս Թուղթը գրված է միայն Սահակի հասցեին եւ անշուշտ նույն թվին։ Թուղթը պահված է նույնպէս ոսկեղարքան հայերեն թարգմանութեամբ «Գիրք թղթոց»-ի մեջ (էջ 14—15)։ Թուղթը, որ շատ ավելի համառոտ է քան Պրոկդինը (ընդամենը երկու էջ), սկսում է Սահակին ուղղված այսպիսի հարգական բառերով. «Որ ամենայնիւ աստուածաւերդ ես եւ ի սրբութեամբ, տէր իմ եւ գործակից, ըստ նմանութեան միոյ մարմնոյ յօղապատեալ...»։ Հետո մի քանի տողով պատմում է նեւտորի ըմբոստութիւնը եւ դատապարտութիւնը, եւ ավելացնում. «Որք ուրեք զպարզամիտս յիւր դարձուցեալ ի լարակամութիւնս, ջահի հարեալ թէ՛ գուցէ եւ ի ձեր եկեղեցիսդ արատ գտեալ ճարակեսցի, լաւ համարեցաք ազդել առ ձեզ զհասարակաց օգուտն խորհելովք։ Այնուհետեւ դնում է իր աստվածաբանական պայքարը նեւտորի դեմ եւ վերջացնում է նամակը հետեւյալ հորդորով. «Արք, իբրեւ ասեղացուք զԹուղթը, ի

վերայ իմոյ տկարութեանս աղօթս անպակաս մատուցիք Աստուծոյ Բայց մեզ երկիւղ է, թէ գուցէ ի Թէոդորեայ Մամուեստիոյ ռիսմանէն (ըստ իս թերեւ ուղղել սեմանէն) աշակերտեալ որ գտցի եւ ի շար ժանգէն նեւտորի, ի միամիտ անձինս ազդիցէ։ Զի զնորա մնացեալ գրեանն իբրեւ խնդիրս այս լայտնեցաւ, եւ մանաւանդ որ վասն մարմնախառնն (?) գրեալ էր, վճիռ հրամանի ետուն սուրբ աշխարհաժողով հայիսկոպոսացն, որ լնփեսացւոց քաղաքին եղև, ի մի վայր ժողովն զընաւ գրեանն եւ այրել։ Արդ փոյթ լիցի ձեզ առանց պղտորութեան զհաւատն պահել, դի կատարեալ զարդարութիւն անպակաս ընկալիք։

Նրորդ Թուղթը գրեց դարձյալ Մելիտինեի Ակակ հայիսկոպոսը հայ նախարարների հասցեով, նույն նպատակով եւ նույնպիսի հորդորներով, ինչպէս նախորդ երկուսը։ Այս երրորդ նամակն էլ հասել է մեզ ոսկեղարքան հայերեն թարգմանութեամբ, որ պահված է «Գիրք թղթոց» հավաքածուում, էջ 19—21։ Թուղթը սկսվում է հետեւյալ ողջույնի խոսքերով. «Պատուական եւ առաքինի նախարարք Հայոց, սիրելիք եւ ծառայք Քրիստոսի, մեծամեծք եւ փոքունք, լԱկակայ հայիսկոպոսէ Մելիտինէ ի կրտսեր ծառայէ խոնարհութեամբ եւ սիրով ողջոյն։ Դարձյալ խոսում է նեւտորի հերձվածի մասին եւ շատ ազալական բառերով խնդրում է, որ շխարվեն մոլորիչներէջ։ Վերջանում է նամակը այսպիսի խոսքերով. «Այլ ես թէպէտ եւ խոնարհ եւ գծում եմ քան զամենայն մարդիկ, սակայն վասն փրկութեան ձերոյ հողայ ոչ զաղարիմ. եւ ես երկնյիմ գուցէ դոք շարժիցէ ի ձէնք պատրանք մոլորութեանն. եղի զայս վկայութիւն առաջի Աստուծոյն եւ այլն։

Պրոկդի Թղթին պատասխանեցին Սահակ եւ Մեսրոպ. պատասխանը հասել է մեզ ոսկեղարքան պատվական հայերենով. հրատարակված է նախ «Սոփիերք»-ի Բ հատորում (Վենետիկ, 1853, էջ 137—149) եւ հետո «Գիրք թղթոց»-ում, էջ 9—13, նույնը կա նաեւ Յնտգլյանի «Կորյուն»-ի քննական հրատարակութեան մեջ, էջ 89—92։

Վերնագիրն է՝ «Պատասխանի թղթոյն Պրոկդի երանելոյ, ի Սահակայ եւ ի Մաշդոցէ, սուրբ վարդապետացն Հայոց։ Այս վերնագիրը իհարկեւ հետո է կազմված։

Նամակն սկսում է հետեւյալ ողջույնի խոսքով. «Առ ճշմարիտ եւ աստուածասէր պատուական տէր մեր եւ հայր, սուրբ հայիսկոպոս Պրոկդոս, ի Սահակայ եւ ի Մաշդոցէ ողջոյն։ Այնուհետեւ գրվում է մի շատ բանաստեղծական պատկեր, որը բերում ենք ոսկեղարքան գրաբարով, թեեւ մի քիչ խառնգարված հետին արտագրողներից.

«Ճառագայթը մշտնջենաւոր յաւիտենական լուսոյդ որ առ մեր տկարութիւնս երենցան ի ձեր լուսաւոր սրբութենէդ, յոյժ ի ծագել իւրեանց գորաքուցին զմեր տկարութիւնս և զմեր տկար խորհուրդս բազմապատիկ զօրացուցին, և մեծապէս զկողմն տկարացեալ անդրէն արծարծեալ նորոգեցին, զի անդէն վաղվաղակի թուեցաւ մեզ որպէս նոր ինչ անցք ի վերս հասանել բազում անձկալի գթոյն զոր օրինակ անցք անցանիցեն ընդ քաղցրաբեր բոյսս արտօցն քաղցրութեան ցօղոյն ի վերայ իշանելով և զտապ տառապոյն հասկալից բուսոյն ի շերմախառն յանրարեխառն օգոցն իւրով քաղցրութեամբն բժշկութիւն գարծուցանելով»։

Այնուհետեւ Սահակ և Մեսրոպ ցավ են հայտնում, որ հունաց մեջ այդպիսի ժանգ է տարածվել և թե իրենց խիստ պատվեր են ուղարկել Հայաստանի ամեն կողմը՝ շնորհունելու ամենեկին այդպիսի մուրր ուսմունքը։ «Արդ որովհետեւ մոլարն առաջին և գլխաւորն զիւր ժանգ աղտեղութեանն կարկառեալ սերմանել ժպրհեցաւ, զայս մեք մեղաց գործ համարեցաք, և ընդ մեծամեծ բազում և անշափ ձերում թղթոյդ տրտմակից եղեալ՝ ըստ մերում տկարութեանս ողբացաք, և յամենայն տեղիս որ շուրջ զմեզ բնակեալ էին, յգեցաք՝ մեծ և պատուհասալից պատուիրանաւ մի՛ լսել բնաւ ամենեկին զայդպիսի բարբարոսս, մի՛ ընդունել ամենեկին զվնասաբեր կորստական մոլորական հերեսիութեանն վարդապետութիւնն»։ Հետո տալիս են հայոց դավանանքը. հորդորում են, որ հույներն էլ հոգ տանեն հերետիկոսութեանն առաջն անհելու իրենց երկրում. իսկ Հայաստանում Քեոզորոս Մոպսուեստացու վարդապետութիւնը մուտք չէ գտած և եթե այդպիսի բան պատահի, ամեն միջոց կգործադրեն արմատախիլ անհելու համար։

Ակակր առաջին թղթի պատասխանը գրված է միայն Սահակի կողմից և կարելի է ասել, թե նախորդ թղթի համառոտութիւնն է միայն, սկսած բոլորովին նույն ձևով և վերջացած նույն ձևով։ Քուլթը հրատարակված է նախ «Սուրբ Բարդուղիմէոսի հատորում, էջ 150—156 և հետո «Գիրք թղթոց», էջ 16—18։

Ակակի երկրորդ թուղթը, որ ուղարկված էր հայ նախարարներին, մնաց անպատասխան, կամ, եթե երբեք նախարարները պատասխանեցին, այդ պատասխանը մեզ չէ հասած։

§ 2

Այս թղթակցութիւնից հետո, ինչպես սպասելի էր, Սահակ և Մեսրոպ որոնեցին դրսից եկած այդ քարոզիչներին և Հայաստանից

դուրս վտնեցին, Ահա Կորյունի խոսքերը այս առթիւ. «Յայնմ ժամանակի բերեալ երենցան Հայաստան աշխարհին դիրք սուտապատումք, ընդունայնախօս աւանդութիւնք առն ուրումն հոռոմի, որում Քեոզորոս անուն (Յնուգլայնի հրատարակութեան մեջ ուղղված է Քեոզորոս, ինչպես ունի Փօքր Կորյուն)։ Վասն որոյ սինհոդոսական հայրապետացն՝ եկեղեցեացն սրբոց նշանակեալ ազդ առնէին՝ ճշմարտահաւատ փառաւորացն մահակայ և Մաշթոցի։ Եւ նոցա ճշմարտասէր փութով զայն ի միջոյ բարձեալ՝ աշխարհահալած արտաքոյ իւրեանց մերժեցին. զի մի ի լուսաւոր վարդապետութիւնն ծուխ ինչ սատանայական յարիցէ» (Կորյուն)։

Այս խոսքերից երևում է, որ 1) հերձակածողների գրքերը Հայաստան բերվել են, 2) այդ լսելով հայրապետները զգուշացուցիչ գրեր գրել են և 3) Սահակ և Մեսրոպ նրանց արտաքսել են երկրից դուրս։

Բայց Չամչյան և իր հետեւորդները այս տեղից սկսած, ստեղծում են մի ընդարձակ պատմութիւն։ Իբր թե Սահակ զգուշութեամբ ընկելով հերձակածողական գրքերը, հրաման հանեց նոր ժողով գումարելու Աշտիշատի մեջ, այն է երրորդ ժողով Աշտիշատու, որ ըստ Չամչյանի գումարվեց 436 թվին, նախորդ ժողովից 3 տարի հետո։ Այդտեղ հավաքվեցին Հայաստանի եպիսկոպոսները, երեցները և վանականները, մեջ բերվեցին Քեոզորոսի գրքերը, որոնք ընկնութեան ենթարկելով, գտան, թե հակառակ են սուրբ հայրերի վարդապետութեան և համաձայն նեստորի քարոզութեան։ Ուստի միաբան վճռով նզովք դրին նրանց վրա և հերքեցին։ Նույն ժողովում Սահակ մի ճառ խոսեց Բանին մարդեղութեան վրա, հայտնելով, թե Միածին Որդին Աստուծո անարատ Կույսից առավ մեր ընկնութեան և եղավ մարդ կատարյալ և Որդի Մարդո, Բանի անձնավորութեան մեջ ներառանելի և անշփոթ միավորութեամբ միացած։ Այս բանը հիշատակում է Վահան եպիսկոպոս Նիկիո, Շիրակավանի ժողովում, ըստ Չամչյանի (Ա, էջ 527), հանելով Հովհան Իմաստասեր կաթողիկոսի գրքերից. «Մուրքն Սահակ ասաց ի ճառին՝ որ յԱշտիշատն խօսեցաւ, մեք խոստովանիմք...» (ձեռագիր Վենետիկի, էջ 172)։

Այնուհետեւ Սահակ բոլոր ժողովականներին հետ միացած՝ Քեոզորոս Մոպսուեստացու գրքի դեմ ուղիղ դավանութեան մի թուղթ գրեց Պոլսի Պրոկղ պատրիարքին՝ խնդրելով նրա հովանութիւնը Ուղարկեցին նաև Քեոզորոսի գրքից ինչ-ինչ մասեր, որ Քեոզորոս նենգուպատիր խոսքերով Քրիստոսին բաժանում էր երկու Որդի։ Հայտնեցին նույնպես, թե իրենք մերժել են այդ գիրքը, այդ վար-

դասակարգությունը և այդ աղանդավորներին՝ Այս թուղթը ուղարկվեց Պրոկդին՝ թարգմանիչներին մեկի միացումով, որ հունաց և լատինաց գրքերում կրում է մերթ Աբեդիոս և մերթ Աբելիոս (Աբել) անունը, իսկ Չամչյան համարում է Ղևոնդ երեց և իր աշակերտակիցը՝ Աբրահամ:

Պրոկդ կարդաց հայոց թուղթը և Քեոզորոսի գրքերը, մերժեց Քեոզորոսի խոսքերը և շատ հավանեց հայոց ուղիղ վարդապետության, ժողով գումարեց իր եպիսկոպոսների հետ և նրանց հետ միացած՝ դավանության բնորոշակ մի թուղթ գրեց Հայաստան: Այս թուղթը, որ եկեղեցական տարագրության մեջ նշանավոր է, թեև հայերեն չի թարգմանված, բայց կա հունարեն և լատիներեն (վերջինը Դիոնիսիոս կարճահասակի ձեռքով, «Praefatio» և այլն: Չամչյան լատիներենից թարգմանում է նաև թղթի առաջին և վերջին մասերը: Թուղթը Պրոկդ ուղարկեց Նույն Ղևոնդ և Աբրահամ թարգմանիչների միացումով: Սահակ և Մեսրոպ հայաթանք հանեցին հերձվածողների դեմ և նորեկ քարոզիչները դեռ մեր երկրում լավ չհաստատված՝ դուրս լտարվեցին:

Այս բոլորը կեղծիք է. Աշտիշատում ժողով գումարված չէ ո՛չ առաջին և ո՛չ երկրորդ. ամբողջ իրողությունն այն է, որ Պրոկդ մի թուղթ և Ակակ երկու թուղթ է գրել հայոց, որոնց պատասխանել են հայերը: Ո՛չ ճառախոսություն կա Աշտիշատում և ո՛չ գրքերի առաքում: Սուտ է Վահան եպիսկոպոս Նիկիո. սուտ է և Պրոկդի երկրորդ կոչված թուղթը, որ ճիշտ այն է՝ ինչ որ վերը ցույց տվինք և որ հայերեն ոսկեդարյան թարգմանությունամբ էլ կա: Այս մասին համառոտ խոսում է Աբել եպիսկոպոս Մխիթարյանց, «Պատմություն ժողովոց», էջ 53, հերքելով Չամչյանի ասածները, իսկ ավելի դիտական ձևով Հ. Ա. Վարդանյան, որ հերքում է Պրոկդի երկրորդ թուղթը, ինչպես տեսանք վերևում: Ցավալի է, որ այս բոլորից հետո և այս բոլորին անգիտակ, Աղոնց նորից է քննության ենթարկում այս հարցը, հավատում ուշ ժամանակի պատմիչ չիքրատի վկայություններին և դրա հիման վրա խարեքա դուրս բերում Կորյունին, իբր թե Կորյուն վերոհիշյալ Աբերիոսն է (երկու անունների մեջ էլ ր կա և այս բավական է երկուսին նույնացնելու համար), որ Ղևոնդի հետ գնացել է Պոլիս ոչ թե թարգմանչական գործով, այլ կրոնական առաքելությամբ՝ նեստորական հարցով: (Տե՛ս «Հանդես ամսօրյա», 1925, մայիս—նոյեմբեր):

Շատ համոզիչ և հաշտարար ելք է տալիս հարցին Հ. Ն. Ակինյան, որ իր ուսումնասիր-

ություն մեջ («Հանդես ամսօրյա», 1935, էջ 485) մանրամասն քննելով խնդիրը, հասնում է այն եզրակացության, թե վեճը, թղթակցությունը, դրքերի առաքումը և այլն կատարված են Հունահայաստանի հետ: Ակակի երկրորդ թուղթը՝ «Առ պատուական և առաքինի նախարարս Հայոց», ուղղված է հունահայոց իշխաններին: Դրա համար էլ պատասխանը լուսենք մեր ձեռքին: Ակակիոս, իբրև Մելիտինեի եպիսկոպոս, կարող էր միջամուխ լինել իր սահմանակից հունահայոց կրոնական գործերին և զբաղվել նրանցով, քանի որ նրանք բուն Հայաստանի կաթողիկոսական իրավասությունից դուրս էին: Համենայն դեպս, Պարսկական Հայաստան ո՛չ նեստորականներ էին մուտք գործել և ո՛չ էլ Քեոզորի գրվածքների շուրջը խնդիր էր հարուցված, ինչպես իմանում ենք Սահակի պատասխանից:

§ 3

Կանոնագրքի մեջ Սահակի անունով կան սակայն ընդարձակ կանոններ, ընդամենը 55 կանոն, բաժանված վեց զլխի, որոնք բոլոր վերաբերում են եկեղեցական պաշտոնյաների կարգապահության և եկեղեցիների հաստիքին: Ամբողջական հրատարակություն տե՛ս «Կանոնգիրք» (Հրտ. Ղյուճյան, Քիֆիս, 1913, էջ 15—56): Թեև երբևէ ուր որոշվեցին այդ կանոնները՝ ուրիշ հայտնի չէ պատմիչներից: Աբել եպիսկոպոս Մխիթարյանց, «Պատմություն ժողովոց», էջ 39, գնում է վարչապատի ժողովում, որ տեղի է ունեցել իբր թե 426 թվին: Օրմանյան էլ («Ազգապատմա», Ա, էջ 283), խոսում է Նույն կանոնների մասին, բայց ո՛չ ժողովի տեղն է հիշում և ոչ թվականը: Եվ հայտնի չէ, թե որքան վավերական են դրանք:

Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

1. Նեստորականները նեստորի հերձվածք խորամանկությամբ տարածելու համար հրատարակեցին Քեոզորոս Մոպսուսետացու գործերը, որ նեստորի ռուսիցիչն էր, հետք խառնելով նաև նեստորի մտքեր. քաղցիները եկան նաև Հայաստան. այս լսելով Պրոկդ և Ակակիոս երեք բուրք գրեցին հայոց՝ գգուլացնելու համար, որոնց պատասխանեցին Սանակ և Մեսրոպ:— 2. Հետո քաղցիներին վտարեցին Հայաստանից. Չամչյան այս առթիվ գումարված է դեռում Աշտիշատի երեսգ ժողովը, ինչ որ կեղծիք է:— 3. Կանոնագրում Սանակի տնունով ունենեմ 55 կանոն, որոնց վավերականությունը անստույգ է:

(Շառունակյի)



Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ

ՕՐԾԱՆՅԱՆ ԵՎ ԻՐ ԺԱՄԱՆԱԿԸ* Դ

Յ. ԱՄԻԱՍՏԱՆՑԱՆ ՈՒ ԻՐ ՄՆԱԶԵՐԸ

Նախկին պատրիարք մը ուրեմն Ազգին առջև պիտի կանգնե՞ր իբր ամբաստանյալ։ Ամբաստանյալը կար, և սակայն դատավորը կպակսե՞ր։ Ազգը դատավոր դառնալու հեղինակութիւնը չունեցա՞ւ։ Ազգային նրբափոխանական ժողովը, որ Ազգը կներկայացնէր, հեռու էր դատարան մը հանդիսանալու։ Դատավորներ չէին, որ բազմած էին հոն, այլ ամբաստանողներն ու պաշտպանները մեղադրյալի մը, որ հնարավորութիւն չուներ խոսք առնելու։

Մարդ կշվարի նախ ամբաստանողներուն ցուցակը դիտած ատեն։ Բացի Արիստակէս Գասպարյանեն, որ մեղադրանքները շարած էր ճարպիկ աղվեսի մը պէս, իր ներսի ոխը պարտկելով ազգասիրութեան շապկին ներքեւ, ամբաստանիչներուն մեջ բարեմիտ խարդիկ ալ կային, որոնք կարծե՞ր էին, թէ իրավացի կամ անիրավ, մասնակի դատութիւններու աղղեցութեան տակ, նախկին պատրիարք մը կարելի է ամբաստանյալի աթոռին վրա նստեցնել աշխարհի աշներուն առջև ենթարկելով զայն ծաղր ու ծանակի։

Ամբաստանողներու թիւը մինչև 13-ի բարձրացա՞ւ։ Մեծ մասամբ սակայն տոնոք միևնույն բաները կըսէին, ինչ որ թվեր էր արդեն Արիստակէս Գասպարյան իր ամբաստանագրին մեջ, ամեն մեկը ավելցնե-

լով անձնական պարագա մը կամ անհատական դատութիւն մը։

Եթէ պետք ըլլար ամփոփել Օրմանյանի դեմ ուղղված ամբաստանութիւնները, կըրնայինք անոնցմէ մեծ մասը խտացնել միակ մեղադրանքի մը մէջ. — թէ Օրմանյան հավատարիմ չէ պտնված Ազգային Սահմանադրութեան, որուն վրա երդում էր ըրած։ Արդարեւ, զանազան մեղադրանքներ այդ հիմնական ամբաստանութեան շուրջ կդառնային։

ա. Անթերի չէ գործադրած Ազգային Սահմանադրութիւնը։

բ. Ազգային նրբափոխանական ժողովը գումարել տալու ճիշդ չէ ըրած։

գ. Տասը տարի գործած է միևնույն ժողովներով, որոնք պետք է փոխվեին երկու տարին անգամ մը։

դ. Պակսած անդամներուն տեղ փոխել չէ տարած նորերը ընտրելու։

ե. Ազգային Կեդրոնական Վարչութեան վերակազմութիւնը 1908-ին ապօրեն պաշտօններու մեջ տեղի ունեցած է։

զ. Քիչ անդամներով նիստեր գումարած է է. Տեսուչ խորհուրդներու անդամներ փոփոխելու իրավունքը չարաչար գործածած է։

ը. Ժողովներու և տեսուչ խորհուրդներու իրավունքը հարգած չէ։

թ. Ինչ ինչ տեսուչ խորհուրդներ երբեկազմած չէ՝ ինչպէս Վանորեից, Կտակաց Ելնմտից խորհուրդները։

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1981 թվականի 76-78 Ն-ից, 2-ից, 5-ից, 8-ից, 9-ից և 10-ից։

ժ. Վարչության անդամներ տեսուչ խորհուրդներու անդամակցած են.

ժա. Առժամյա թաղականություններ երկարատեմն մնացած են պաշտոնի վրա.

ժբ. Գաղափարական ժողովներ ըստ սրինի նորոգված չեն.

ժգ. Ժողովրդական որոշումները կանխելու արտոնությունը անհարկի ի գործ դրած է.

ժդ. Նպաստից հաշիվը իր ձեռքը ամփոփած է.

ժե. Համարատու և համարառու եղած է միանգամայն.

ժզ. Առանձինն քաղցրեմը սուղորգրած է.

Մեղադրանքներեն ուրիշ մաս մըն ալ դործունեության իր կերպին կվերաբերեր.

ա. Մենատիրական դիրք ընած է ժողովներու մեջ.

բ. Ժողովականներ սաստած է.

գ. Սպասեցած է հրաժարիլ ուղող ժողովականներուն.

Ուրիշ կարգ մը մեղադրանքներ իր բարոյական դործունեության կուղղվեին.

ա. Բռնապետության պարագլուխներուն գործիք է եղած.

բ. Լահեյի դեսպանախորհուրդին անհարկի հեռադիր մը ուղղած է, արդեւք ըլլալով, որ հայկական ցավերով դրադի ան.

գ. Էջմիածնի 1905-ի ժողովը վիժեցնելու համար անանդի փափսուքներ ըրած է Պոլսո հուս դեսպանի ականջին.

դ. Պատրիարքութենն չե հրաժարած.

ե. Անկարեկիր եղած է գաղափի ցավի բուն հանգեպ.

զ. Անտարբեր գտնված է բանտարկյալներու և արսորականներու մասին.

է. Պաշտոն հայթայթած է իր ընտանիական պարագաներուն.

Նվ վերջապես կային կարգ մը մասնավոր պարագաներ ալ.

ա. Բարեխոսության վրա՝ ըստանա ձեռնադրել տված է.

բ. Քահանայի մը կարգաթողությունը կարգադրության վերածած է.

գ. Իր ուղած մարգոց պատվանշան տված է.

դ. Սասունի կոտորածին տեղեկագիրը անհետացուցած է.

ե. Աղթամարի ուրակոծման առթիվ լուած է.

զ. Պատրիարքարանի մեջ կասկածելի անձեր և լրտեսներ պահած է.

է. Պեշիկթաշի քերեղմանատունը հանձնած է.

բ. Արմենակ Գարակյոզյանի բանտի մեջ մահման պարագան չէ հետապնդած.

թ. Անուղիղ վարված է Կարապետ Տերունյանի ամուսնալուծման խնդրին մեջ.

Քննիչ հանձնաժողովը կազմված էր 10 երեսփոխանների, որոնցմե հինգը հոգևորական և հինգը աշխարհական, Հոգևորական անդամներն էին Մաղաքիա եպիսկոպոս Տերունյան, որ և կնախագահեց հանձնաժողովին, Գնել վարդապետ Գալմաթյան և Վահան խոյան, Արիստակես Ասարյան և Տաճատ Փաշայան քահանաները.

Քննիչ հանձնաժողովին հոգևորական անդամները կիրքեր և կողմնակի նկատումներ հետու անձեր էին քուրոր ալ, քայց հեղու էին նաև պատմության առջև նման սլատախախանություններն մը ստանձնելու հեղինակություններ. Աշխարհական անդամներեն Վառաժապուհ Մանուկյան, որ հանձնաժողովը կվարեր, օրենքի մարդ էր և ծանոթ իր խղճատությունը ու անաշուկությամբ, Սարգիս Էսմերյան և Նշան Քիվանյան, մեկը փաստաբան, մյուսը պետական պաշտոնյա, պարկեշտ մարդիկ ճանչված էին նույնպես, Մարկոս Նաթանյան հասարակ վարժապետ մըն էր, դիմագծութենն զուրկ, իսկ Հմայակ Արամյանց, որ նույնիսկ ատենադպիրն էր ընդհանրաժողովին, ամենեն ճովողուն կաշաղակներեն մեկն էր, սիրամարդի փետուրներու տակ, ու ոչ ոք զեռ կկռահեր, թի օր մը պիտի ծախե հոգին Բուրք ոստիկանության...

Քննիչ հանձնաժողովին առաջին գործն եղավ դատավորել մեղադրանքները Պետք է ըսել, որ մեղադրողներն ումանք առաջին իսկ վայրկյանեն հրաժարեցան իրենց ամբաստանություններեն, ումանք ալ թեթևեղության դանոնք՝ պարզ դատողության կերպարանք տալով անոնց.

Օրմանյան 1909 մարտ 12-ին գրավոր պատասխանեց ըլլոր այս մեղադրանքներուն, և ինք ամիս հետո էր միայն, 1909 ղեկտեմբեր 12-ին, որ Օրմանյան կանյվեզավ ընդհանրի հարցաքննության՝ Նվ անկե հետո երեք տարի դեռ պիտի անցնեռ, որ հարցը դար դատող ատյանին առջև, Աղգալին Երեսփոխանական ժողովին, ամբողջ տարի մը մնալի հետո Արեւնապետաց հանձնաժողովի սեղանին վրա, թեև Օրմանյանի տված դրավոր և բերանադի բացատրություններեն հետո մեղադրանքներուն մեծ մասը անհիմն նկատված էին քննիչ հանձնաժողովին կողմից.

Ինչպես կտեսնվի մեղադրանքներեն ալ, ունեան դոհհկացավ, ուղղակցավ պայքարը Օրմանյանի դեմ, որ մարդիկ սկսան րիծեր միայն փնտռել, փոխանակ ծանրանալու փնտրական կետին վրա. — պե՞տք էր աղքատ ճկի բռնապետ մը որդերելու համար, և կամ փտանդ մը՝ Կանիկոյ կամ Ազգին շահ մը տալահովելու սիրուն, կարիք կա՞ր երբեմն խտիր չգնել միջոցներու միջև.

Հետո անձ մը փորձեցին դատել, փոխանակ շրջան մը դատելու: Օրմանյանի մեջ անձը չէ, որ կդատեին իր մարդկային բիծերուն համար, այլ պատրիարքը. իսկ այդ պատրիարքը անհատ մը չէր, որ ներկայացուցեր էր տասներկու տարի, այլ հավաքականություն մը մարդոց, մտայնություն մը:

Եվ երբ պատրիարքին վրա չկրցան բարդել շրջանի մեղքը, բիծեր սկսան փնտռել անհատին վրա:

Օրմանյանը ամբաստանողներուն մեծ մասը զայն կամեղադրե՞ր, թե ինչո՞ւ այդպես էր, ու քիչերը միայն կըսեին, թե ինչո՞ւ այդպես ըլլավ. զայն առաջնապես կընտադատեին իր բնավորության բացասական դիծերուն մեջ, քան թե իր գործած սխալներուն:

Օրմանյանը դատած տարիներուն Ազգային ժողովը իր ամենեն ամոթալի տարիները կապերու կիրքերը իր ծոցին մեջ բռնկեր էին աներևակայելի չափով: Հին օրերուն ալ խաղաղ չէր եղեր իր գործունեությունը ու կրքեր միշտ ալ եղեր էին իր ծոցին մեջ: Հիմակված վեճերը շատ ավելի բուռն էին սակայն, որովհետև անոնց միջև եղբ գտնել մարդոց ուժերեն վեր կերևար, և շատ ավելի տխուր, որովհետև անոնք բարդված էին այնպիսի պահու մը, երբ որեւէ տեսնե ավելի հայ ժողովուրդը կարիք ունեն ներքին անդորրության, երեկվան վերքերը դարմանելու և զգաստ մնալու համար նոր փորձությանց առջև, այսինքն ճիշտ այն պահուն, երբ Ազգը կարթննար «Հուրիբեթ»-ի մեղրալուսինեն: Աղանային ցնցված, և երբ դարավոր թշնամին երազներ կհյուսե՞ր՝ թուրան հաս-

նելու համար հայ ժողովուրդի դիակին վրային:

Օրմանյան մասամբ ալ Ազգային ժողովին մեջ բռնկած այդ կիրքերուն զոհն էր, մեկ կողմից ժողովին ծոցին մեջ հրահրված վեճերը ամալացուցած էին բնականոն կյանքը ազգային բոլոր մարմիններն ներս և հնարավորություն չէին տար այդ մարմիններուն զբաղիլ իրենց սեղանին վրա դրված հարցերով, և մյուս կողմից Ազգին ներսը ստեղծված ճակատը իր հակամարտությունը ի հայտ կբերեր ամենն աննշան կարծված հարցին մեջ անզամ, և ուրեմն առավել չափով Օրմանյանի դատին մեջ, ուր դատավորները կոիվներու ազդեցության տակ էին:

Հիմա, որ անցած է ավելի քան կես դար այն օրերեն ի վեր, երբ ցույցերու և հալածանքի նշավակ դարձուցին Օրմանյանը և ամբաստանեցին ու դատեցին զայն այնքան տխուր պայմաններու մեջ, միտքս կբերեմ երբեմն նաև այդ օրերու խայտառղես հերոսները: Ըսենք անգամ մը ևս, որ Օրմանյանի հակառակորդներուն մեջ ալ շատ էին անկեղծ մարդիկ, որոնք դեմ էին եղած անոր վարած քաղաքականության և որոնք մեղադրանքներուն մեջ անձնական հաշիվներ բնավ չկային, ինչպես որ իր պաշտպաններուն մեջ ալ այնպիսիները կային, որոնք մեջ կային անշուշտ մարդիկ ևս, որոնք զոհն էին ընդհանուր ժխորին, և հետո հարկավ զղջացին ամբոխին խառնված ըլլալուն համար: Բայց շատ էր նաև հոգիով սինթորներուն թիվը, որոնք գիտակ էին իրենց բրածին և որոնց ներսը կիրքը խառնված էր անձնական հաշիվներու:

7. ՄԵՂԱՎՈՐՆ ՈՒ ՄԵՂԱՎԻՑՆԵՐԸ

Բոլոր անոնք, որ ազգային պաշտոններու վրա էին Օրմանյանի օրով, լքացան հանկարծ հրապարակեն, երբ հալածանքն սկսավ Օրմանյանի դեմ:

Օրմանյանի երբեմնի գործակիցները, եթե ախքան շուտ լքեցին զինքը, անշուշտ «ասպետական» չէր իրենց ժեստը: Տրամաբանական էր, որ անոր կողքին մնային միշտ: Իրենց վարմունքը կարգաբացնեին հավանաբար անով, որ Օրմանյան երբեք ալ պատասխանատվություն չէր թողուցած իրենց, եթե պատասխանատվություն չհաշվենք իրենց ստորագրությունները, որոնք ևս կերևալին որոշումներուն տակ:

Չմոռանք ասկե դատ, որ այն օրերուն իսկպպես վտանգավոր էր կասկածվիլ իբրև Օրմանյանի մարդը: Օրմանյանի մարդը ըլլալ կնշանակեր ոչ միայն ազգային պաշտոններ վարած ըլլալ անոր օրով, այլ նաև անոր պաշտպանությունը կամ համակրու-

թյունը վայելած ըլլալ որեւէ առթիվ: Եվ արդարև մամուլի հարձակումներուն թիրափ սկսան դառնալ ազգային շատ մը մարմիններ, որոնք մեղքը ունեցեր էին պաշտոնի վրա ըլլալու «Հուրիբեթ»-ը հուսկված ատեն: Անոնցմե շատերը քվեցան իսկույն իրենց պաշտոններին ցույցերու հետևանքով, ուրիշներ իրենք քաշվեցան, տակավ դառնացած հարձակումներեն: Ասոնց կարգին էր, օրինակ, Կեղրոնականի խնամակալությունը, որ դպրոցը գրեթե վերստեղծած էր և զայն վարած ամբողջ տասներկու տարի, շանաղով անվթար պահել անոր վարկն ու մակարդակը, Համիդի ու իր արքայականներուն գիշատիչ ակնարկներուն տակ:

Իրենց պաշտոններին քվեցան նաև պատրիարքարանի այն պաշտոնյաները, որոնք ամենեն ավելի համախոհ կկարծեին Օրմանյանի և հետևաբար «ազգային դավաճան»:

Օրվան զոհերուն մեջ էր Բաբգեն վարդապետն այլ Արմաշի փայլուն շրջանավարտներին, Բաբգեն վարդապետ կասկածված էր իբրև անմիջական ձեռնասուներ և հովանավորյալը Օրմանյանի, մասնավանդ երբ ան Մուշի առաջնորդութենեն դարձած, «ինչինչ կասկածներ»-ու հետևանքով, Օրմանյանի պաշտպանությունը վայելեց իսկույն, պահ մը տեսուչ զրկվելով Արմաշ, հետո կառավարչի Ղալաթիո քարոզիչ և Ազգային մատենադարանի տնօրեն, և այս պաշտոններուն հետ միասին, ստանձնելով «Հուլիս» կրթնաթերթի խմբագրությունը ևս ամբողջ երկու տարի, և ընդ որ այս պաշտոններուն մեջ վայելելով պատրիարքին համակրանքն ու փատահությունը, «Հուլիս»-ը առիթ էր դալն ևս քարկոծելու, ինչպես որ բրին. մասնավանդ որ պատրիարկ ալ ունեին,— քանի մը հարյուր ոսկիի հարցը, որուն հաշիվը չէր կրցած տալ Բաբգեն, Մուշեն Պոլիս դատնայն հետո Պատվո ատյաններու կարգին, դորս ամբողջ կատեղծեր այն օրերուն դրեթն ամեն օր՝ դատելու համար ժողովուրդի դավաճանները, հատ մըն ալ կազմվեցավ Բաբգեն վարդապետի համար, մինչ թերթերը կպոռային անընդհատ. «Ի՛նչ եղավ Մուշի օրերուն և այրիներուն երեք հարյուր ոսկին», Բաբգեն, որ ամբողջ շորս-հինգ տարի հանդուրժած էր վարկաբեկիչ փսփսուներուն, կարկամեցուց Պատվո ատյանը. «Հուլիս»-ը կրցած էր քակել իր ալ լեզուն:

8. ՔԱՆԻ ՄԸ ՊԱՇՏՊԱՆ

Օրմանյան իր հիացողներն ուներ, բայց պաշտպաններ չունեցավ՝ ճակատագրական պահուն: Անոր բարեկամները սարսափի մեջ էին և իրենք: Անոր ի նպաստ արտասանված ամենն թեթև բառ մը կրնար զիրենք ալ հարձակման թիրախ դարձնել: Բյուզանդ Քեչյանն անգամ, որ Օրմանյանի համակրողներին մեկն էր եղեր, կզգուշանար անոր պաշտպանությունն ստանձնելու Բացահայտ կերպով կհիշեմ Արամ Անտոնյանի մեկ ծաղրանկարը «Մաղիկ»-ի մեջ, ուր Օրմանյանը ցույց կտրվի ծովն ինկած, ու չխեղդվելու համար փարած օձի մը, որ Բյուզանդ Քեչյանի դեմքը կկրե. ծաղրանկարին տակ զրված է. «Մտվն ինկնողը կփաթթվի օձին»: Կենթադրեմ, թե Քեչյան այն օրերուն Օրմանյանի Վասին նպաստավոր խոսք մը պետք է գրած ըլլար «Բյուզանդիոն»-ի մեջ այդ զոհհիկ տրամադրության արժանանալու համար:

Արդարեւ, Բյուզանդ Քեչյան, որ հայ հրապարակադիրներուն մեջ այն օրերուն միակն էր, որ իր հավասարակշռության տեր կմնար, Օրմանյանը պաշտպանելու փորձեր հաճախ

Բայց այդ արդեն ուրիշ տեղ պատմելիք հարց է:

Հերթական զոհը դուրս. Հակոբ Թոփճյանն էր: Նախկին շրջանավարտ Ճեմարանի և Գերմանիա լրացուցած իր կրթությունը, Թոփճյան խորապես հմուտ էր հայ մատենագրության, Օրմանյան, օգտվելով անոր Պոլիս գալեն, դալն տարի մը Արմաշ զրկած էր իբրև ուսուցիչ: Արմաշեն դարձին, հայ մատենագրության պատմության դասախոս էր եղեր մեզի Կեղրոնականի մեջ, ստանձնելով նաև «Արեւելք» օրաթերթի խմբագրությունը: Այդ զույգ պաշտոններուն վրա գտավ դալն Սահմանագրությունը, Ճանցված իբրև Օրմանյանի բարեկամ, չէր կրնար ան ևս թիրախ յղանալ անուշ ջուրի ազգասերներու կիրքին, մանավանդ երբ հրապարակով գրվեցավ, որ խրմյանի մահվենն հետո Կեղրոնականի ուսանողներուն հայտարարած էր ան քանի մը ամիս առաջ, թե Օրմանյանն է լավագույն կաթողիկոսուն, երկու պաշտոններն ալ քշեցին զինքը, թերթերու մեջ ևս նշավակ դարձնելով հարձակումներու:

Օրմանյան միակ մեղսակից մը ուներ, որ մնաց միշտ իր կողքին,— ժամանակը. ա՛ն էր, որ վարեր էր զինքը տասներկու տարի, ուղղեր իր ամեն մեկ քայլը: Հիմա իր կողքին էր դարձյալ ան. ան էր, որ կսփոփեր ու կհուսադեր զինքը հիմա և ուժ կուտար սպասելու վաղվան, երբ վերստին պիտի ըլլար իր կողքին:

որավ և անոր դեմ կատարված ցույցերն անմիջապես հետո համարձակությունը ունեցավ գրելու խմբագրականի մը մեջ, թե անոր դեմ սարքված ցույցերուն մեջ դեր կատարած է իր բռնած վճռական դիրքը Դևոն Մաքսուսյանի ղեղծություններուն առթիվ և թե «Օրմանյան կերպով իվիր նրուսաղեմի խնդրույն զոհն է»:

Եթե Պոլսո իր անմիջական բարեկամներն ու համակիրները այն օրերու մթնոլորտին մեջ քաջությունը չունեցան պաշտպանի դեր ստանձնելու, փոխարեն, Կովկասի մեջ Օրմանյան իր մուկին պաշտպաններն ունեցավ: Օրմանյանի վայելած համակրությունը հինն կուգար. սարվան մը իր ուսուցչությունը էլ միածնի մեջ բացառիկ համարվ մը շահեցուցեր էր այն ատեն իրեն: Հետագային իր Արմաշի գործունեությունն ալ, իր կարգին, նպաստավոր արձագանքեր էր Կովկաս: Գալով իր պատրիարքության տասներկու տարիներուն, եթե այդ շրջանի իր գործունեությունը ղեկավարություն ստեղծեր էր որոշ խավերու մեջ, փոխարեն համակրու

թյամբ տեմավորվեր էր տարբեր զանգվածի մը կողմն։

Դեպքերը, որոնք տեղի ունեցան Պոլսո մեջ «Հուլիսի»-ին, իսկույն արձագանք տվին էին Կովկաս, և եթե որոշ շրջանակներու մեջ բնական գտեր էին Օրմանյանի դեմ տեղի ունեցած ցույցերը, անոնք զայրույթի ալիք մը ևս հառաչ բերին էին։ Ժամարանի օրերեն մնացած իր հմայքը, միացած պատրիարքության ժամանակ իր շահած համակրություն, և հիմա ավելի ևս ամրապնդված Պոլսո մեջ տեղի ունեցած ցույցերեն հետո, պաշտպաններու հոծ թիվ մը ստեղծին էին էջմիածնի միաբանության ծոցեն սկսյալ մինչև մտավորական ինչ-ինչ շրջանակներու մեջ։ Այնպես որ քիչ չէր թիվը անոնց, որոնք երիմյանի մահեն հետո 1907 նոյեմբերին Օրմանյանը լավագույն ընտրելին սեպեր էին կաթողիկոսության համար և հիմա 1908-ի հուլիսի անցքերեն հետո կհամառոտին իրենց տեսակետին մեջ։

Ժիշտ է, որ Պոլսո ցույցերեն հետո կրգալին անոնք, թե պիտի դժվարանար իրենց ժողովրդը Օրմանյանի կաթողիկոսացնելու, երբ մանավանդ կիմանային Պոլսո թերթերեն, թե ցույցերը կսկսին հալածանքի վերածվել, և հալածանքը պաշտոնական ձև կառնեն տակավ, և կփոխվեն ամբաստանություն։ Եվ սակայն Կովկասի իր համակիրները չքեցին զայն։ Ընդհակառակը անցան իրենց ակրդին պայքարի։

9. ՀԱԼԱՄԱՆՔԻ ՕՐԵՐԸ

Փանի մը բառ միայն պիտի գրենք այս հատվածին տակ, ըսելու համար միայն, թե հալածանքը կանգ չառավ պաշտոնական մարմիններու սեղանին վրա, թե ժողովներեն դուրս ելավ ան։

Օրմանյանի պատարագը խանգարելու փորձերը, որոնք քանիցս տեղի ունեցան, կուգային վկայել, թե հոգիները դեռ խաղաղած չեն։ Մարդիկ այնքան կրքոտ էին դեռ, որ չէին կրնար հանդուրժել, որպեսզի իր կրոնական պարտականությունը կատարեն քարձրատիճան հոգևորական մը, որ դատապարտված իսկ չէր։

Եթե Օրմանյանի բռնած դիրքը նրուսդեմի խնդրին մեջ դեր խաղացած էր իր դեմ սարքված առաջին հալածանքներուն ատեն և անդրանիկ ցույցերը նախկին պատրիարքին

Օրմանյան, Կովկասի իր համակիրներուն մեջ, մոլեռանդ պաշտպաններ շատ ունեցավ։ Ինքն իսկ պայքարի դրոշ մը դարձավ անոնցմե ոմանց ձեռքը, կրքերու բռնկած մեկ պահուն։ Օրմանյանի հմայքին կապավիսեին անոնք, խափանելու համար ուրիշ հոգևորականներու վերելքի ձագան, և ջլատելու համար անոնց հտին կանգնած տարրերը։

Իսկական է այն անցնել «Հովիվ»-ի հավաքածոները, տեսնելու համար պայքարը, որ Կովկասի մեջ պահ մը բռնկեցավ Օրմանյանի անվան շուրջ։ «Հովիվ»-ը օրգանն էր հոգևորականներու ողորդ խմբի մը, որուն պաշտամունքի առարկան էր Օրմանյանը և որ ճիշտ այդ պատճառով դեմ էր Իզմիրլյանի կաթողիկոսության։ Եվ եթե միաժամանակ թվեին առջև, որով Իզմիրլյան լուսավորչի Գահը կնստեր, ստիպվեցավ ան լռել, սակայն Օրմանյան միշտ իր կուռքը կմնար։

Սամսոն Չերքեզյանի հոգվածները, որոնք «Կոշմար» անցնում է՝ վերնագրով հրատարակվին էին «Հովիվ»-ի մեջ, և որոնք լույս տեսան հետո առանձին գրքով «Օրմանյանը զրպարտության ցանցերում» խորագրի ներքև, ամենեն ուշագրավ գրություններն են ինչպես պատրիարքին ի պաշտպանություն։ Գրված չեմ համակրությամբ դեպի Օրմանյանը, և միևնույն ատեն բուռն կրքով դեպի անոր հակառակորդները, Չերքեզյանի հոգվածները, այնպես, ինչպես որ գրված էին, չէին կրնար մեծ պտուղ տալ։

դեմ առավելապես Ղևոնդ Մաքսուտյանի համախոհներուն սաղարաններեն կրխեր, հիմա արդեն ամբոխ մը կար, որ կհալածեր զայն։

Կուսակցական ամբոխն էր ան։ Ստեղծված շատ ավելի հետո, երբ արդեն Օրմանյան տապալած էր, ամոթալի ցույցերու նշավակ դարձած, ու փակված էր տանը մեջ, այս նոր ամբոխին ուրիշ բան չէր մնար ընել, բայց եթե թույլ չտալ, որ եկեղեցի մտնել փորձի Օրմանյանը։

Այս տողերի գրողը գիտե, որ այս օրերու մտայնության զոհերն էին անոնցմե շատերը, և եթե մեր օրերուն հասած ըլլային, պիտի կարմրեին իրենք ալ հիմա։ Բայց ժողովուրդներու կյանքը դժբախտ վայրկյաններ ունի։

10. ՕՐՄԱՆՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ

Օրմանյան կաթողիկոսության չկրցավ հասնել, ու շատ բնական էր այդ։ Մակարեն հետո երիմյան մը կար իբրեք թեկնածու, և

ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ

դեռ շատ կանուխ էր Օրմանյանի համար անոր հետ նժարը դրվել։ և այնուամենայնիվ ինքն ալ պռավ փանի մը քվե Իզմիրլյանի

ընտրված ատեն Օրմանյան, դեռ նոր տա-
պալված պատրիարքութենե, ի վիճակի չէր
հանրային կարծիքին կուրծք տալու. և սա-
կայն համակիրներու ստվար թիվ մը իր կա-
թողիկոսությանը քաղձաց կովկասի մեջ
նույնիսկ այդ օրերուն, Իդմիրլյանի մահն
հետո, երբ Սուրենյան կաթողիկոս դարձավ
քախտին մեկ խաղովը, Օրմանյանը նստած
կպահեին դեռ Պոլսո մեջ մեղադրալի աթո-
ռին վրա, մինչ անդին էջմիածնի մեջ պալ-
քար կմղվեր արգեն իր անունն ալ անցնելու
համար քառանուն ցանկը, պայքար, որ սա-
կայն պիտի վիժեր:

Այնպես որ, երեք ընտրություններուն ալ
Օրմանյան ընտրվելու հավանականությունն
փրկված մնաց:

Մակարեն հետո, ինչպես րսինք, դեռ կա-
նուխ էր Օրմանյանի մասին խորհիլ, իսկ
Խրիմյանի հաջորդին ընտրության օրերուն
արդեն խիստ զգվար, նախ որ Օրմանյան
դեռ ամբաստանության տակ մտած էր ար-
դեն, իսկ երուսաղեմի քառորակներ, Իդ-
միրլյան, սերկաթն պատրիարք-ի լուսա-
պսակը դեռ կկրեր իր ճակատին:

Այնպես որ, Պոլսո մեջ ոչ ոք կհամար-
ձակեր Օրմանյանի անունը տալ կաթողի-
կոսական ընտրելիներու շարքին: Անշուշտ
Պոլսո մեջ ալ կային իր կաթողիկոսությա-
նը քաղձացողներ, Բայց այնքան բուռն էր
տակավին իր շուրջ հրահրված ատելություն-
ը, որ ոչ ոքի մտքն կանցներ անունը
պաշտոնապես արտասանել հոգեւորականի
մը, որդին վրա քարգված կմնար դեռ ամ-
բաստանությանց շարանը:

Փոխարեն, կովկասի մեջ հոսանք մը կար,
որ կփափագեր Օրմանյանը քաղմած տես-
նել Խրիմյանի մահվամբ թափուր մնացած
կաթողիկոսական Աթոռին վրա: Եվ այդ
հոսանքը պահ մը փորձեց արդարեւ զայն
քառանուն ցանկին մեջ մտցնելու ապե-
րախտ դերը, թեև որեւէ քաղձանք հայտնված
չըլլար այդ մասին Օրմանյանի կողմի:

Եվ սակայն, եթե Օրմանյան չէր ձգտեր
իսկ, գոնե կքաղձար կաթողիկոսության,
Այդ բանը ինքն իսկ կզգացնե, ավելցնե-
լով, որ իր այդ փափագը ուրիշ բանի համար
չէր, բայց եթե Հայ Եկեղեցվո քարեկարգու-
թյան իր ծրագիրը իրականացնել:

Եւնձ համար գոհունակության առիթ էր
դարձլալ տաղտաղանքի և տաղնապի
լմատնվելու,— կգրե Օրմանյան,— թեպետ
կրնայի հուսալ, որ եկեղեցական քարեկար-
գության համար կարևոր քայլեր առնելու
պատեհ ունենամ, միշտ այն ուղղությամբ,
որ իմ համոզումս է եղած... Իմ ուսումնա-
սիրությանց մեջ զանազան կետեր որոճա-
ցած եմ. մասնավորապես քահանայական
դասակարգին քարձրացման, ամուսնական

օրենքներու ուղղության, տոնական և պա-
հնցողական կարգերու կանոնավորման, և
առհասարակ եկեղեցական օրինագրքի մը
կազմության շուրջը¹⁶⁴:

Եթե Խրիմյանի հաջորդին ընտրության
ատեն դեռ նոր էր Օրմանյանի դեմ սկսած
պայքարը և մեծ հանգցնություն էր իր հա-
մակիրներուն համար անոր անունը արտա-
սանել իր կաթողիկոսական թեկնածու,
Իդմիրլյանի մահն հետո իր հիացողները
պահ մը համարձակություն առին անոր
թեկնածության մասին մտածելու, կարծե-
լով, որ մասամբ խաղաղ են կիրքերը:

Եիդմիրլյանի հաջորդին ընտրության ա-
տեն, 1911 զեկտեմբերին,— կգրե Օրմանյան
ինքը,— տակավին կտեք վրաս ամբաստան-
լալի անունը, սակայն ռուսահայ հասա-
րակությունը, որ կարևորություն չէր
տար տաճկահայոց երեսփոխանության ըն-
թացքին, բուռն ցույցերու և հայտարարու-
թյանց [միջոցով] սկսավ դիտ իրեն կաթո-
ղիկոսական ընտրելի ներկայելու: Գլխավո-
րապես Տիգլիսի և Նոր-Նախիջևանի մեջ
գումարներ տեղի ունեցան միտքերին հրո-
շակելու, քաղմաթիվ ստորագրություններով
հեռագիրներ ալ ուղղեցին ինձի: Սակայն
ռուսահայոց այդ մտադրությունը ավելի ևս
զրգռեց տաճկահայոց մեջ գործող կուսակ-
ցականները և պաշտոնականները, զի այդ
շարժումին մեջ առաջիններ իրենց նպա-
տակին և երկրորդներ իրենց պատվուն հա-
կառակ նշաններ կնշմարեին: Էջմիածնի
միաբանության մեջ ալ համաձայնությունը
կպակսեր, զի գործող դեր ստանձնողնե-
րուն մեկ մասը կսիրեր իրեն ձեռքը գործիք
դարձող կաթողիկոս մը: և մյուս մասը
եկեղեցվո քարգավաճման և պայծառության
ծառայող անձ մը ունենալ կփափագեր, Այս-
պես կմղվեր իմ անունի շուրջը ծագած
պայքարը, որուն մեջ անտարբեր մնալն և
ձայն չհանելն զատ բան մը չէի կրնար
ընել, զի հետապնդել օրինավոր և պատվա-
վոր չէր, ելքն ալ բնավ հավանական չէր,
իսկ կանխավ հրաժարական հրատարակել
քարեկամ անձերը վիրավորել էր, և կերպով
մը ինքզինքը ցուցադրել էր: Սակայն ա-
ռանձինն և մտերմաբար չէի վարաներ
հայտնել, թե կեղծավոր և անհավանական
նպատակի համար պայքարիլ ավելորդ էր:
Ասով մեկտեղ ոչ միայն լրագրական հոդ-
վածներով, այլև հատուկ տետրակներով իմ
ընտրելիությունս պաշտպանողներ պակաս
չէին:

Վերջին պայքարը պաշտոնապես մղվե-
ցավ զեկտեմբեր 12/25-ին ընտրվաց քա-
ռանուն ցանկը քվեարկելու առթիվ, ուր իմ

¹⁶⁴ «Սոց» և «Խոսք», էջ 360:

ընտրելիության աշխատողներ պնդեցին անուն քառանուն ցանկին անցունել, հուսալով անկե ետքը գաղտնի քվեի մեջ շատեր իրենց կողմն ունենալու։ Բայց հաջողություն չունեցան, և ցույցը կատարվալ ընելու միտքով քսանչորս եկեղեցական ու աշխարհական քվեարկուներ, Պարզյանց Սուքիաս եպիսկոպոսի գլխավորությամբ, ժողովը թողուցին ու մեկնեցան¹⁶⁵։

Օրմանյանի համակիր այդ խմբակին փորձը՝ թեկնածուներու ցանկին մեջ մտցնելու համար զայն, ցույցի մը ընելիս ուներ ավելի քան հաջողության հավանականություն ունեցող լուրջ ձեռնարկի մը՝ իր ամենն ջերմ պաշտպաններն անգամ չէին կրնար իրենց մտքեն անցնել, թե կրնան քառանուն ցանկին մեջ մտցնել և անկե

երկանուն ցանկը բերել անունը հոգևորականի մը, որ կդատվեր անդին Պոլսո մեջ։
Ոչ ոք թող չփորձե մարգարեանալ, թե տարբեր կըլլար էջմիածնի այն օրերու ճակատագիրը, եթե Իզմիրլյանի կամ Սուրենյանի տեղ Օրմանյանը երթար բազմեր լուսավորչի Գահը։ Ոչ ալ մենք մեզ թույլ կուտանք գուշակել։ Թե տարբեր ընթացք կառնեին դեպքերը ճակատագրական այն տարիներուն, երբ աղետները կանցներ հայ ժողովուրդը, եթե Օրմանյան ըլլար Մայր Աթոռի գահակալ Գևորգ Սուրենյանի տեղ։

Բայց ներքի է ենթադրել, որ Հայ Եկեղեցին տարբեր կերպարանք կառնեը ներսեն և տարբեր հոգևորականություն մը պատրաստված կըլլար հայ ժողովուրդի ծոցին մեջ նոր օրերու համար։

11. ԸԹԸՐ ՓՈՂՈՑԻ ՄԵՆԱԿՅԱՑԸ

Կարելի չէ քանի մը տող ընվիրել տքնության և ճգնության այն շորս տարիներուն, զորս Օրմանյան անցուց ԸԹԸՐ փողոցի իր մենարանին մեջ։ Անոնք եթե ամոթ մըն էին ազգային մարմիններուն համար, որոնք շորս երկար տարիներ քաշկոտեցին դատ մը, որ կրնար շորս ամիսն ավարտիլ, պարծանքի էջեր են սակայն մարդու մը համար, որ իր Աթոռն վար առնված այնքան տխուր պայմաններու մեջ, նախատված ու հալածված, և հիմա ալ ամբաստանության տակ, քեն լըներ, այլ կառանձնանա իր խուցը, ու կհակի գրասեղանին առջև՝ հանձնվելու համար պատմության դատաստանին։

Առանձնացած իր մենարանին մեջ ու կտրված աշխարհեն, գրքերուն խորը թաղված մնաց ամբողջ շորս տարի։ Պետք է ըսել, որ այցելուները պակաս լեղան իր մոտ այդ տարիներուն, Համակիրներու խումբ մը միշտ կհաճախեր իրեն, սկիզբը քիչ մը զգույշ, բայց հետզհետե ավելի համարձակ։ Կովկասեն ևս այցելուներ կունենար հաճախ։ Եվ ամեն հյուրի հետ զրույցի կնստեր երկար, խոսելով հինն ու նորեն, ներսեն ու դուրսեն։ Տարակույս չկա, որ իր պատրիարքության տարիները ևս խոսքի նյութ կըլլային հաճախ, և ոչ ոքի չէր ծածկեր, թե ինքզինքը հպարտ կզարտ անոնցմով։

Տեսակցության մեջ, զոր դժբախտ ցույցն հետո ունեցեր էր «Մշակ»-ի թղթակից Սարուխանի հետ, Օրմանյան ըսեր էր. «Ես պատրիարքությունն ընդունել եմ ակամա։ 1896-ին, երբ ինձ հանձնեցին պատրիարքական նավի դեկը, այդ նավը գտնվում էր

ալեկոծյալ ծովի վրա, շատ հաճախ նա մոտ էր ընկղմվելու ամեն կողմից հարձակվող կատաղի ալիքներից։ Իմ պարտականությունն էր պահպանել նավը ընկղմվելուց, որի համար երբեմն հարկ էր լինում մինչև անգամ բռնեբեր դուրս թափել... Իսկ այժմ ինձ մեղադրում են, թե ինչու՞ ես էլ ալիքները չվանեցի, ալեկոծությունը չհանդարտեցրի. կարելի՞ է այդ... Ես կարող եմ պարծենալ, որ արել եմ, ինչ որ մարդկորեն հնարավոր էր այն ծանր օրերում Ազգի ճշմարիտ շահերը պաշտպանելու համար, և հեռանում եմ խիղճս հանգիստ, թե անթերի կատարել եմ իմ պարտականությունը»։

Շատ ծամծամված, հասարակ տեղիք դարձած խոսք մը կրկնել պիտի նշանակեր ըսելը, թե ամեն շարիքն բարիք կանի, Եվ եթե կկրկնեք զայն, ըսելու համար է պարզապես, որ Օրմանյան իր առանձնացման այդ տարիներուն կպարտի դիրքը, զոր ան կդրավ ներկայիս հայ եկեղեցականներու շարքին մեջ։ Որովհետև որքան ալ նպաստավոր վերջացներ իր դատը, հետք մը միշտ պիտի համենար հին ըսի-ըսավներեն և միշտ ըստվեր մը պիտի մնար իր անվան վրա։ Զորս տարվան տքնությունը ջնջեց ամեն ինչ, հետք մը ձգեց իրմ աշխարհի վրա, ու լթողուց, որ մարդիկ ալ բիծեր հիշեն։

Ամեն անգամ, որ Օրմանյան կհիշե իր տքնության շորս տարիները առանձնության մեջ, սա րանձնը ունի միշտ. «Ուղեւորվող օդատակար ընել պաշտոնական գրադամներն ստացած ազատությունը. ըսել կուզե, թե հայ մատենագրությունը տնարգելության այդ դժբախտ տարիներուն կպարտի իր գլխավոր երկերը, — առաջին երկու հա-

¹⁶⁵ Երևոհ և խոսք. Լ. 358—359.

տորները «Ազգապատում»-ին, «Հայ նկեղեցի»-ն և «Համապատում»-ը:

Օրմանյան ճգնականի իր շորս տարիններով ոչ միայն մտքի վաստակ մը կտականց

իր հաջորդներուն, այլ մեծ դաս մը տվալ անոնց.— դժվարութիւններու, տրտմութիւն ժամանակ տքնութիւն մեջ փնտռել մեծագույն սփոփանքը:

12. ԲԱՐՁՐԱԴՈՒՅՆ ԴՌԱՆ ՄԵՋ

1912 տարին ճակատագրական թվական մըն էր հայ ժողովուրդին համար, կամ ավելի ճիշտ՝ նախադուռն էր դեպքերուն, որոնք զայն պիտի տանեին ճակատագրական վախճանի մը:

Արդարեւ այդ տարին էր, որ Բալկանյան պատերազմը կազատագրեց թուրքիոյ եվրոպական նահանգները, հույսերու և երազներու աշխարհ մը կրանար հայ ժողովուրդին, ու թուրքը կորցրեց թուրան ձգտելու:

Իրոք այլ, «Իթթիհատ-Թերաքքա»-ն իր այդ տարվան համաժողովի պաշտնի մեկ նիստին մեջ էր, որ որդեգրեց էր համաթրքութիւնը իրրկ քաղաքական ուղեգիծ: Համաթրքութիւն շատագույ փոքրիկ խմբակը, որ սարգած էր «Երիտասարդ թուրք»-երու ժողին մեջ, ամբողջ շորս տարի չէր հաշտեցած այդ ուղեգիծը որդեգրել տալ կուսակցութիւն: Համիդի ավանդութիւնները դեռ խարսխը կշարունակեին մնալ թուրքիոյ արտաքին քաղաքականութիւն: Բայց երբ թուրքիտական պատերազմը Ափրիկայի Տրիպոլիտ մեջ ապացուցուց խալիֆայի հռչակած Սուր-պատերազմին («Իհհատ») անգործութիւնը, և հետեւաբար սնանկութիւնը համիլամութիւն ուժին, «Երիտասարդ թուրք»-երը այլևս չվարանեցան համաթրքութիւն իշխանաբանը ընել իրենց դրոշ, ձգտելով թուրանական ժողովուրդներու միութիւն, թուրքիոյ մականին տակ, այսինքն անցնելով մեկ ցնորքն մյուսին: Բայց այդ ցնորքն էր, որ պիտի վճռեր հայ ժողովուրդի բախտը: Միակ խոչընդոտն էր ան թուրան տանող ճամբուն վրա և պետք է անհետաքրքար հարմար թուրքներն: Ընդհանուր պատերազմը, երկու տարի հետո, ամենահարմար թուրքն պիտի ըլլար «Երիտասարդ թուրք»-երուն համար:

Տարին սկսած էր պետական տաքնապով մը: Զկրնալով Օսմանյան Երեսփոխանական ժողովի ժողին մեջ ստեղծված ընդդիմադիր հոսանքը սանձել, վարչապետ Սալիկ փաշան 1912 հունվար 5-ին կրուծեց Երեսփոխանական ժողովը, իսկ ամիս մը վերջ տեղի կուենային նոր ընտրութիւններ: Այդ ընտրութիւնը հետեւեցով «Երիտասարդ թուրք»-երը հաղթանակ կշահեին կրկին, և 1912 ապրիլ 5-ին նոր Երեսփոխանական ժողովը կրացվեց իթթիհատական մեծամասնութիւնով:

«Իթթիհատ»-ը երկար չէր կրնար վաշել սակայն իր հաղթութիւն պտուղը: Պոլսոյ մեջ մարմին առած «Ազատարար սպաններ»-ու («Նալասքյարան») շարժումը կտապալեց պատերազմական նախարար Մահմուդ Շեքեթ փաշան 1912 հունիս 27-ին, իսկ շարաթ մը հետո, 4 հուլիսին, կիլնար Սալիկ փաշայի ամբողջ դահլիճը:

Իշխանութիւն գլուխ կուգար այս անգամ հայտնի Փյամիլ փաշան, այն որ ճանչցված էր իրրկ Անգլիոյ մարդը, և միևնույն ատեն իրր շատ ավելի խոհմ և զգուշ մարդ պետական գործերու մեջ, թեև ներքնապես կատաղի թշնամի մը «Երիտասարդ-թուրք»-ուրուն:

Փյամիլ փաշա անփառունակ կացութիւն մը կժառանգեց «Երիտասարդ թուրք»-երուն: Զորս տարվան մեջ պաղեցուցեց էին անոնք երկրին քաղկացուցիչ տարրերը Սահմանագրութեանն ալ, պետութեանն ալ: Բոլորը ճար մը կփնտռեին թրքական լուծը թոթվելու:

Փյամիլ փաշան, հազիվ իշխանութիւնն հկած, այլապես ալ ինքզինք կտաներ դժնդակ կացութիւն մը առջև: Իր օրով էր, որ կպայթեր Բալկանյան պատերազմը 1912 հոկտեմբերին, ոչ միայն ծանր հոգ մը դնելով «Երիտասարդ թուրք»-երու պատճառով ներքնապես խարխալած պետութիւն մը ուսերուն, այլև քալկանյան ժողովուրդներուն հետ՝ խլրտելու մղելով երկրին քաղկացուցիչ մյուս տարրին ալ, որոնցմէ շատերը լեղի միայն ճաշակած էին «Հուրրիէթ»-ի հովանիին տակ:

Այդ հուսախար և հուսաբեկ տարրերն մեկը հայերն էին, որոնք չէին կրնար հույսերով լինցվիլ հանկարծ, երբ Բալկանյան շորս պետութիւններ, Բուլղարիան, Հունաստանը, Սերբիան և Սե-լեռը զենք կառնեին միասին Օսմանյան պետութիւն դեմ, անոր ամենն ավելի տկար մեկ պահուն: Նպաստավոր էր պահը, որպեսզի հայերը անգամ մը ևս արծարծեին իրենց դատը, և բախեին դարձյալ մեծ պետութիւնը դռներուն:

Այնպես որ Փյամիլ փաշայի օրով էր, որ անգամ մը ևս դիվանագիտական սեղանի վրա կուգար Հայկական հարցը և անկե հետո պիտի շարունակեց իր ճամբան, անցնելու համար անհամար խուժերու մեջին, ատեն-ատեն, հուլիսի պահը ստեղծելով սակայն հայ ժողովուրդին:

Ավելի խորամանկ քան ինչ որ «Ծրիտասարգ-թուրք» պետական մարդիկ էին, և միևնույն ժամանակ նվազ բուռն իր մեթոդներուն մեջ, քան ինչ որ պիտի ըլլային քիչ հետո «Ծրիտասարգ-թուրք»-ները, Քյամիլ փաշան փորձեց հասկացողութիւն մը փնտռել հայ ժողովուրդին հետ:

Եվ ահա 1912 դեկտեմբեր 18-ին զգալացունց լուր մը շրջան ըրավ Պոլսո հայ շրջանակներուն մէջ, իմացվեցավ, թե վարդապետ Քյամիլ փաշան չորս հայ երեւելիներ կանչած է Բարձրագույն Դուռ, անոնց հետ խորհրդակցութեամբ լուծելու համար Հայկական հարցը: Այդ չորս երեւելիներն էին նախկին պատրիարք Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը, «Սարահ» թուրքերէն թերթի հայ խմբագրապետ Տիրան Քելեկլանը, բժիշկ Նազարեթ Տաղավարյանը և վաճառական դասին Պատրիկ Կոլպանկյանը:

Անհրաժեշտ էր սակայն իմանալ, թե ինչ անցավ-դարձավ այդ հանդիպումին մէջ: Հայկական հարցի արծարծման այդ օրերուն ոչինչ այնքան շահեկան չէր, որքան գիտնալը, թե ինչ կ'մտածեն թուրքերն այդ մասին: Որո՞ւն սակայն կրնայինք դիմել ճշգրիտ գիտնալու համար թուրքերուն դիրքը: Օրմանյանը միակ անձն էր, որ կրնար թափանցած ըլլալ թրքական մտադրութիւններուն:

Խմբագրութիւնը, որուն մէջ կաշխատեի, դիւ հարմար գտավ, որպէսզի, իբրեւ ամենեւն բարեհոյսը բոլոր խմբագիրներէն, Օրմանյանին այց մը տայի և իր բերեւեմ իմանայի ամեն ինչ:

Առանց հուզումի չէր, որ կզարնեի Ըթըր փողոցի իր բնակարանին դուռը: Միտքս կուգային զգվելի այն տեսարանները, որոնք չորս տարի առաջ տեղի կունենային նույն այդ դռան տակ: Ու հետո, կ'մտածեի, թե ի՞նչպէս պիտի ընդուներ ան մեկը, որուն պատկանած թերթը իր բարեկամը չէր:

Ան դիւ բնդունեց սակայն ժպտեմբա: Սառը կոտորած էր առաջին իսկ պահէն, ու մեր տեսակցութիւնը մտերմական դարձավ իսկույն:

— Աղեկ որ ձեր միտքը ինկանք:

Այդպէս սկսավ ան, աթոռ մը ցուց տալով ինձի:

— Կներեք որ,— ըսի,— կընդհատեմ ձեր աշխատանքը:

Սեղանին վրա խոնված էին արդարեւ զբքներն ու թուղթերը, որոնց ետեւը գրեթէ կորսնցված էր ինքը: Այս չորս տարվան մէջ որքա՞ն էր ծերացել ան:

— Վնաս չունի, ըսավ ժպտուն ու հետո իսկույն ավելցուց:

— Գիտեմ, թե ինչո՞ւ եկած եք. խաթրս հարցնելու համար ինձի մարդ չի գար. բայց սպասե՛ք, նախ քիչ մը խոսինք...:

Եվ սկսավ սարեն-ձորեն խոսակցութիւն մը: Կոստոստեինք մեկ նյութին մյուսը, ինքն էր, որ հարցեր կուտար ու ինքն ալ կպատասխաներ: Օրվան մարդիկ ու օրվան դեպքերը խոսքի նյութ կգառնային մեկը մյուսին ետեւէն: Հայտնի էր, որ մոտեն կհետեւեր դուրսի կյանքին:

— Գործի գուլիս գտնվող մը լուրջ ըլլալու է ամենեւն առաջ. բերեւեմ ելածը լավ կշռելու է. ինչ կարծիք պիտի կազմեիք Օրմանյանին մասին, եթէ ներս մտածիք պէս քեզի հարցնեք. «Փողկապիդ վրայի ասեղը քուկի՞նդ է թե ոչ...»:

Ու քահ-քահ խնդաց, ինչպէս սովոր էր ընել ամեն մեկ սրամիտ խոսքի հետո:

Իրականին մէջ ան կակնարկեր օրվան պատրիարք Արշարունիին, որ ոռս դեսպալս պր. դը Գիրսի տված իր մեկ այցելութեան ժամանակ իբրեւ թե հարցուցեր էր անոր:

— Պր. դեսպալն, ձերի՞նն են այս կարասիները...:

Հետո սկսավ խոսիլ իր պատրիարքութեան մասին:

— Կարծեք որ պատրիարքութիւն՞ն ըրի ես. տասներկու տարի ուրիշ բան չեղաւ, բայց եթէ զգազանագուսպս և լարախաղացա՞:

(Որակումները, զորս ան տվավ իրեն, արձագանք գտան մամուլի մէջ ալ և այլեւս դասական դարձան. տեսակցութիւնս պատմեր էե, ի միջի այլոց, «Հորիզոն»-ի Պոլսո թղթակցին, որ զայն օգտագործեց իր մեկ թղթակցութեան մէջ):

Բուն նյութին մասին, որուն համար եկած էի ես իրեն, շատ կարճ խոսեցավ: Բարձրագույն Դուռն մեջ տեղի ունեցած հանդիպումին ժամանակ ինք ըսեւ էր պարզապէս, թե պաշտոնական անձ մը չէ, և որեւէ հանգամանք չունի Ազգին անունով խոսելու:

Ակնարկելով Քյամիլ փաշայի այս հրավերին, Օրմանյան կըսե, թե յուզեց զայն մերժել. թե և այդ օրերուն դեռ հեռու կուղեր մնալ ազգային կյանքի. «Միայն չկրցա դիմադրել մեծ եպարքոս Քյամիլ փաշայի հրավերին, որ հայ գավառաց բարեկարգութեան համար ազգայիններն ումանց հետ մտերմական խոսակցութիւն մը կազմակերպելու առթիւ, եկեղեցականներին դիւ էր հրավերած. և պարտավորվեցա երկու անգամ Բարձր Դուռ երթալ, և խորհրդակցութեանց մասնակցիլ, որ ինչպէս նախատեսելի էր՝ գործնական արդունք չունեցավ, և Քյամիլ փաշայի յուր անկեղծ խոստումը իբր երաշխավորութիւն ներկայածատեմ, համարձակեցա հարցնել, թե ո՞րպիսի ատեն պաշ-

տոնի վրա մնալու նրաշխարհագրություն ունի¹⁸⁶,

Այդ տեսակցությունն հետո, որ տեղի ունեցեր էր 1912 զեկտեմբեր 8-ին, երեք ամսվան

կյանք միայն ունեցավ թյամիլ փաշայի դահլիճը, Ան, իրագարծությունը բերումով, վերջ կգտներ այնքան հզորական պարագաներու մեջ...

19. ՕՐԱՆՆԱՆ ԱՆՊԱՐՏ

Ազգային Երեսփոխանական ժողովի 1912 զեկտեմբերի 21-ի (1913 հունվար 3) նիստը պատմական պիտի մնա Պոլսո ազգային տարեգրության մեջ, Այդ օրն էր, որ Ազգք, ավելի քան չորս տարի ձգձգելի հետո, վերջապես պիտի դատեր նախկին պատրիարքը, նիստ մը առաջ արդեն սկսեց էին վիճաբանությունները և Օրմանյանի մասին թերու դեմ խոսվեր էր շատ Բայց այս նիստին էր, որ Ազգային ժողովը իր վճիռը պիտի տար:

Եվ սակայն երկու նիստերու ընթացքին ալ Ազգային ժողովը չէր կրցած իր կոչումը բարձրել լրիվ: Դատավորներ չէ որ նստած էին հոն, այլ երկու կողմեր, Օրմանյանի պաշտպաններն ու հակառակորդները, դեռ լմերկացած իրենց կիրքերին:

Գրիգոր Զոհրապ, որ այդ պատմական նիստին ամենեն պատմական դեմքը հանդիսացավ, իր ճառին մեջ կականարկեր ի միջի այլոց այդ տխուր մթնոլորտին. «Անցյալ ուրբաթ օրվան և այս օրվան նիստերուն մեր առջև պարզված տեսարանները ուշադրավ կդտնեմ: Ես պետք չունեի ասոր՝ համոզվելու համար, թե մարդ որքան տկար արարած մըն է, երբ կհարկադրվի ուրիշ մը դատելու: Մեկ վայրկյանի համար գոնե պետք էր որ մերկանար իր կանխակալ կարծիքները, իր համակրությունները և հակակրությունները, որպեսզի արդար վճիռ մը արտասանելու կարող ըլլար: Պատմությունը երբ օր մը քննե մեր այսօրվան նիստը, Օրմանյան սրբազանի հակառակորդները և շատագուցակները պիտի գտնե, բայց դատավորներ չպիտի գտնե արդար: Արդարությունը անշատ ամեն անձն ու ամեն ինչը՝ պետք է որ բարձր ու սրբազան ըլլա: Ես շուրջս հուզմունք ու գայլույթ կտնեմ միայն: Այս դատավարությունը ընելով, 12 տարվան կրակիծներու վերլուծումն է որ կկատարենք: Դուրսով կհասցվի, թե այդ ցավներու վերհուշումը կրքերու բորբոքում հառաջ բերավ: Միայն թե մոռնալու չէ՝ որ հոս քաղաքական խնդիր մը քննելու համար ժողովված չենք, այլ արդարություն ի գործ դնելու ամբաստանյալի մը դեմ: ազոր համար մոռնալու չէ, որ անցյալին վերաբերյալ այդ գործը իր ժամանակի պայմաններեն զատելու չենք, եթե արդար ըլլալ կուզենք: Ես իմ

փորձառություններս, մարդկային արդարություն վրա շատ նպաստավոր դադարներ չունիմ, վասնզի հաճախ տեսած եմ, որ մարդկային դատաստանները վայրկյանին տպավորություններ տակ կտրվին: Օրմանյան սրբազանին դատը կոստանդնուպոլսո հայություն կյանքին մեկ ցուցումն է, և դատավորներն ավելի պատմիչներու և ընկերաբաններու կվերադարձան:

Այդ մթնոլորտին մեջ է, որ վերջ գտավ Օրմանյանի խնդիրը չորս ամբողջ տարիներ այնքան կիրք վատնել տալի հետո: Մեղադրանքները, որոնք բարդված էին նախկին պատրիարքի ուսերուն, իրենց վերջնական լուծումն ստացան ժողովի մը մեջ, որ, ճիշտ է, կբաղձար կնճիռ մը բառնալ Ազգին հոգեւուն, բայց դեռ կտատամսեր անկեղծ ըլլալու: Մեծ մասը մեղադրանքներուն, որոնք հեղեղի պես լեցվեր էին Ազգային ժողովի սեղանին վրա, լքացեր էին ժամանակին հետ: Բայց դեռ կային հիմնական հարցեր, որոնք այս նիստին մեջ էր, որ իրենց վերջնական պատասխանը պիտի ստանային: Քննիչ հանձնաժողովին կամ Առնեւապետաց հանձնաժողովին եղբակացությունները ուժ չունեին դեռ, մինչև որ Ազգային ժողովը չորհեգրիր զանոնք:

Եթե աչքն անցնենք այն ամբաստանությունները, որոնք իրարու ետեւ շարվեցան Ազգային Երեսփոխանական ժողովի սեղանին վրա և որոնց բնույթն տակ ավելի քան չորս տարի ճնշված մնաց Օրմանյան, անոնց կեսն ավելին նախկին պատրիարքը կմեղադրեր իր հակասահմանագրական, պատրիարք մը, որ չէ հարգած Սահմանադրության տառն ու ոգին, դրժած է իր ուխտը: Ու կավելցնեին, թե մենատերի մը պես գործած է Օրմանյան իր պատրիարքության ընթացքին, թե ձեռն համար գոյություն ունեցած են հաճախ ազգային մարմինները, որովհետեւ իր կամքն է պարտադրած անոնց բոլորին և չէ հանդուրժած, որ անոնք իր կարծիքները չբաժնեն. և թե այդ պատճառով էր, որ շատեր հեռու փախած են ազգային պաշտոններն, իսկ այդ պաշտոնին մոտեցողներուն մեջ ալ մեղուցած է նախաձեռնության ոգին:

Մենք տեսանք, Օրմանյանի պատրիարքության տասներկու տարիներուն մասին խոսած ատեն, թե ի՞նչ պայմաններու մեջ ան

¹⁸⁶ «Խոսք և խոսք», էջ 302.

ստիպված էր պատրիարքություն ընել և ինչո՞ւ չէր կրցած կիրառել Սահմանադրությունը: Ինք էս, ըլլա «Ազգապատում»-ին, ըլլա «Խոհ» և «Խոսք»-ին մեջ, երկարորեն պատճառաբանած է, թե ինչո՞ւ ինքն իսկ խուսափած է Սահմանադրության կիրարկությունը պահանջելու:

Բայց հոս տեղն է, որ վերջին անգամ մը ևս անդրադառնանք այդ հիմնական մեղադրանքին՝ Քննիչ Հանձնաժողովին կողմից Ազգային ժողովին բերված րանաձևը՝ հիշելու առթիվ:

Արդ, Քննիչ Հանձնաժողովը, ժամանակին բոլոր այդ պարագաները նկատի ունենալիս հետո, հանգեցրել էր հետևյալ եզրակացության, Ազգային ժողովին բերած տեղեկագրին մեջ՝ «Տեսուչ խորհուրդներու, հոգաբարձությանց, թաղական խորհուրդներու և Գավառական Ազգային վարչական մարմիններու մասին և ընդհանուր առմամբ Ազգային Սահմանադրության տրամադրությունները կետ առ կետ գործադրած չլլալու ամբաստանությունը՝ ինչ-ինչ կետերու մեջ իրավացի է:

Եվ սակայն երբ այդի առաջ կուենանք քաղաքական այն դժոյզակ կացությունը, որուն մեջ կաշտտակարարին նախկին պատրիարքը և ժամանակակից վարչությունները, երբ տաճկահայ տարրին ընաչնչումին համիդական քաղաքականությունը ամենախիստ թափով կհետապնդվեր, ծանրանալով ու ճընշելով այն բոլորին վրա, ինչ որ հայկական դրոշմ կկրեր, մինչև անգամ սեյսմոստանայացի, սազգայինն է այլ այս կարգի անմեղ բառերն արգիլելով, երբ Ազգային Սահմանադրության վերաքննության և այս առթիվ առաջ դալիք անխառնափնի սեղմումներուն մղծավանջը դամոկլյան սրի պես կախված էր Ազգային Պատրիարքարանի գլխուն, երբ հաճախ հնարավորություն չկար սահմանադրական մարմինները երևան բերելու համար կարևոր գումարումներն իսկ ունենալ:

և նկատելով, որ այնուամենայնիվ Օրմանյան սրբազանի օրով կատարված են բազմաթիվ ընտրություններ՝ թե՛ Կոստանդնուպոլսո մեջ և թե՛ գավառները, ինչպես որ հանձնաժողովիս թղթածրարին կըցված ցանկեն ալ կերևա,

այս բոլորեն հանձնաժողովս սա համոզումը գոյացուց, թե ընդունելով հանդերձ, որ սահմանադրական օրենքը տառացիորեն գործադրված չէ և շատ անգամներ գիտակցարար զանցառության ևս տրված անոր տրամադրությունները, բայց վերահիշյալ պատճառաբանությանց հիման վրա հանձնաժողովս դառապարտելի չի գտնե՞ր Օրմանյան սրբազանի այս ընթացքը:

Ձեռքապ, իր կարգին, կրսեր իր նույն այդ պատմական ճառին մեջ. «Ըսվեցավ, թե Օրմանյան սրբազան Սահմանադրության բոլոր տրամադրությունները չգործադրեց, ուստի այդ մասին իր ըրած ուխտը դրժեց: Կհարցնեմ, թե այսօր, երբ հինգ տարին ի վեր մեր Սահմանադրությունը գործադրելու մասին կատարյալ ազատություն կվայելենք, արդո՞ք անոր բոլոր տրամադրությունները գործադրեցի՞նք, ... Մտածեցե՞ք անգամ մը, այսօր, երբ արդարությունը գործադրելու նպատակով հավաքված ենք այստեղ, արդո՞ք արդարության գոնե տարրական և հիմնական պայմանները կհարգե՞նք մենք: Առանց վարանելու դատելու վրա ենք ամբաստանյալ մը, որ բացակա է և որ իր ձայնը չի կրնար բարձրացնել մեր առջև ինքզինքը պաշտպանելու համար, նույնիսկ ամենեն բացահայտ կերպով անարդար պահանջումներու և նկատումներու հանդեպ:

Իսկ րանաձևին մեջ, զոր Ձեռքապ հետո կներկայացնե՞ր ժողովին, հետևյալ կերպով կխտացնե՞ր իր նկատումները.

«Նկատելով, որ Օրմանյան սրբազան Պատրիարքական Աթոռը րարձրացած ատեն կառավարության կողմից Սահմանադրության վերաքննություն խստիվ պահանջած և Ազգային ժողովն կողմեն ալ ընդունված էր, վերաքննություն՝ որ մեր ազգային կրթական գործերուն մատակարարությունը մեր ձեռքեն պիտի խլեր,

նկատելով, որ ցորչափ այս վերաքննությունը ի գործ չէր դրվեր, օսմանյան կառավարությունը ընտրությունները և Ազգային ժողովն գումարումը չէր թույլատրեր:

Նկատելով, որ այս պայմաններուն մեջ սահմանադրական ուխտը, ո՛չ թե անոր անխորհուրդ և անհնար կիրառումին՝ քան թե առժամյա և մասնակի անգործությանը հանդուրժելով անոր գոյությունը վտանգն փրկելու մեջ կկայանար:

նկատելով, որ ճիշտ այս վերջին եղանակը եղած է Օրմանյան սրբազանին հետեւած ուղղությունը...»:

Այս եզրակացությանց կուպային ուրեմն մտքերը, շորս տարի Օրմանյանը մեղադրելի հետո իբրեւ ուխտադրուժ:

Մեղադրանքի ոչ նվազ նյութ կազմեր էր Օրմանյանի ցույց տված համակերպությունը Համիդին առջև: Այս արգեն բարոյական ըմբռնումի խնդիր էր, որուն մասին բազմազան էին տեսակետները: Ոմանց համար ստրկամտություն էր համակերպելու այդ քաղաքականությունը, որ պատիվ չէր բերեր հայ ժողովուրդին, իսկ ըստ ուրիշներու, վարկայանին պահանջն էր, զոր չէր կրնար չգործադրել հայոց պատրիարքը այդ փա-

փուլ տարիներուն, Ընթերցողները իր տեղին տեսան, թե Օրմանյան ինչպես կարգարացներ Համիդը սիրաշահելու և միևնույն ժամանակ զայն սանձելու իր քաղաքականությունը:

Այստեղ կուգենք մեջ բերել միայն Ձոհրապի խոսքերը պատմական այդ նիստի պահուն. «Իրեն վերագրված հանցանքներուն գլխավորը ըլլալով, ըսվեցավ, թե սրտկամիտ քաղաքականության կհետենք Օրմանյան կառավարության հանդէպ: Օրմանյան սրբազան շարդերեն վերջ հայոց պատրիարք եղավ և համակերպության քաղաքականության հետեցավ մինչև վերջը: Ասիկա ամենուն համար ընդունելի քաղաքականություն մը չէ, թերևս, բայց այն ժամանակի պայմաններուն նախելով՝ պարտադրական քաղաքականություն մըն էր: Հետո, համակերպությունը մեր դարավոր քաղաքականությունն է. հայոց պատմությունը՝ համակերպության պատմությունն է: Եթե մեզի ժամանակակից ազգերեն շատերը ջնջված են ու մենք տակավին գոյություն ունինք, ասիկա կպարտինք այդ քաղաքականության, և ասոր համար է, որ հայերը կըցած են բազմազան տիրապետությանց տակ ապրելու: Կաղնիի և եղեգի առածը այս պահուս կհիշեմ ես. կաղնի ըլլալը դուրսին և շքեղ բան մըն է, բայց կաղնի կփշրվի, մինչդեռ եղեգը խոնարհելով հանդերձ, դարձաւ կկանգնի. հարկավ պետք եղածն ավելի խոնարհել մը կա, որ անտեղի է, սակայն խնդիր է ճշտել, թե այս պարագային մեջ եղեգը որքա՞ն ծոնցաւ: Ըշմարիտ է, որ Արդու Համիդի հանդէպ իր վարմունքը դժբախտ Ազգի պատրիարքի մը վայելուչ ծանրությունը լուսնեցավ»:

Ձոհրապ մտքեն չէր կրնար իսկ անցնել, թե որքա՞ն սիրտի ծոնին հիգնները օր մը... Լահեյի հեռագիրը և Օրմանյանի ղեմ քաբանածնված ամբաստանությանց հիմնական կետերն մեկը կազմեց: Լահեյի զեպանախորհուրդին իր ուղղած այդ հեռագրին մասին լրիվ դրած ենք իր տեղին և ավելորդ կհամարենք այդ մասին կրկին ծանրանալ: Այստեղ կուգենք պարզապես տեսնել, թե ինչպես լուծենք զայն «Ազգը»:

Լահեյի հեռագրին մասին հետևյալ եզրակացության հանդամ էր Քենիշ հանձնաժողովը.

«Հանձնաժողովս նկատելով,

որ ինչքան ալ Լահեյի խաղաղության միջազգային վեհաժողովը տրամադիր ըլլար զբաղիլ գինքը բաղկացնող պետություններուն ներքին խնդիրներով,

որ ինչքան ալ այդ ժողովին ըլլելիք դիմում մը դատապարտված ըլլար անուշագրության, այնուամենայնիվ տաճկահայ ժողո-

վորդը իր օրհասականին մեջ, երբ անոր պատմա-անհատական գոյությունը վտանգի ենթակա ըլլալով՝ ան հուսահատական ճիգեր կընէր որնէ կերպով կյանքի, գուշի և պատվի ապահովություն մը ձեռք բերելու համար, ինչ որ Ձերադ էֆենդիի պատգամավորության նպատակը կկազմէր,

որ այդպիսի դիմում մը գոտեպնդիչ և սփոփարար ազդեցություն ունենալով տաճկահայոց հոգեկան տրամադրության վրա, զայն շեղոքացնելու բնույթ ունեցող հեռագիր մը քաշվիլը Օրմանյան սրբազանի կողմանէ հանձնաժողովս ձայներու մեծամասնությամբ ճանցաւ կնկատել, ըլլա մինչ իսկ դիմումին մերժվելն հետո և գիտնալով հանդերձ, թե իր հեռագիրը որնէ կշիռ պիտի լուսնենա, մանավանդ որ այդ հեռագիրը քաշված է առանց վարչության կանխահաճ հավանության,

և սակայն մյուս կողմանէ նկատելով

որ բոլորովին անհիմն է այն ամբաստանությունը, թե Օրմանյան սրբազան «գոհունակություն» հայտնած է յուր հեռագրին մեջ հանդէպ Համիդյան բռնակալության,

որ սխալ է նույնպես կառավարության «շնորհակալություն» հայտնած ըլլալը, ինչպես կերելի հեռագրին բովանդակութենէն,

որ կառավարության նախորդ ռեժիմին մեջ, նմանօրինակ պարագաներու տակ, անմեղ ու ծայր աստիճան տառապյալ հայ ժողովուրդին վրա դժոխային հարստահարությանց, ճնշումներու և բնաջնջման մեթոդներու կիրառման սպառնալիքներ ի գործ կդրվեն Ազգային Պատրիարքարանի վրա՝ հարկադրելու համար զայն, որ կառավարության ցանկացած եղանակով հեռագրվի, ուղղված տեղը,

որ ըստ այսմ անխուսափելիորեն սպառնալիք ու վտանգավոր դիրքի մը մեջ պիտի գտնվի տաճկահայությունը՝ չհեռագրելը բռնակալ Համիդի կողմէ հակապետական ցուց մը նկատվելով ու մինչ իսկ գուցէ նորանոր ժողովրդական աղետներու առիթ տալով:

որ Արդու Համիդ, սաստիկ կասկածոտ կացության բերմամբ, որքան ալ հավաստիքներ տրվին, թե վեհաժողովը Հայկական հարցով չպիտի զբաղեն՝ նորեն տազնապի մեջ էր, աչքի առաջ ունենալով այն պարագան, որ «հայոց» պատգամավորը հաշտված էր որնէ կերպով մտնել վեհաժողով և իր ռոզբագիրը ներկայացնել,

որ այս պայմաններուն ներքե քաշված հեռագիրը՝ թերևս Համիդին կասկածները փարատելով և տաճկահայությունը նորանոր ճնշումներու շնթարկելու մտքով չէր կրնար պատճառ եղած ըլլալ պատգամավորության մերժվելուն կամ անոր նպատակին անհաղորդություն:

«Թաքրիր» մը կուտար կառավարության, խորհրդավոր դարձվածքով մը կասկածելի ցույց տալով Տերունյանը հայտ պետության:

Ահա երկու բառով ամբողջ գայթակղությունը, որ Օրմանի դեմ ամբաստանությանը ամենեն աղմկահարույց կետերեն մեկն եղավ: Հայոց պատրիարք մը իրավունք ունե՞ր, Ազգին շահուն համար իսկ ըլլար, պաշտոնական գրության մը մեջ կասկած հրավիրել հայու մը վրա, նույնիսկ եթե ան անհանդուրժելի ամուսին մը եղած ըլլար:

Միակ կետն էր այդ Օրմանյանի դեմ եղած ամբաստանությանը մեջ, որուն վրային Քննիչ հանձնաժողովը չէր կրցած լուծել մար անցնել, ոչ ալ կրցած էր զայն շքմեղացնել:

Քննիչ հանձնաժողովը արդարև ստիպվե՞ր էր ըսել իր բանաձևին մեջ, թե անկատելով որ ազգի մը պատրիարքին կողմն ազգայինի մը վերաբերմամբ, պաշտոնագրերու մեջ այդօրինակ բառերու գործածությունը բնավ չի կրնար ներելի ըլլալ, քանի որ սույն «Թաքրիր»-ի խնդրին մեջ ոչ համիդյան բռնակալության ե ոչ ալ պետական որևէ պաշտոնեություն կողմանե բռնադատություն մը գոյություն չունի և չէր կրնար ունենալ, և հետևաբար ստիպված էր եզրակացնել, թե հիշյալ «Թաքրիր»-ին այն ժամանակվան հասկացողությամբ քաղաքականացնելու անվտանգությունը հանգամանք ունեցող վերոնշյալ արտահայտությունները դատապարտելի կ'ըլլեն:

Օրմանյանի այդ շարաքաստիկ «Թաքրիր»-ը չկրցավ արդարացնել նաև Ձոհրապը, և ան ալ ստիպված եղավ ըսել, թե հարկավ այս տգեղ վարմունքը ոչ անձնական շահի, ոչ անձնական հակառակության համար կատարեց, իր նպատակը Տերունյանի դատը մերժելով: Գաղազյաններուն ծառայել և պնդեցման օգուտ մը հանել էր Ազգին համար, ինչպես իրոք ալ հաջողեցավ: Բայց այս նյութական օգուտին դեմ գործված գանգառությունը ոչ մեկ կերպով կրնա արդարանալ, ապա թե ոչ այնուհետև օտենքն ալ բարուականն ալ աճուրդի դնելու է:

Օրմանյանը Ազգային Երեսփոխանական ժողովի 1913 հունվար 3-ի այդ պատմական նիստին մեջ անպարտության վճիռ տալով:

Ըսենք այս առթիվ, որ ներկայացված երեք բանաձևերեն առաջինը, որ ձախակողմինն էր, ընդունելով հանդերձ, որ դեռ քննելի բազմաթիվ կետեր կան նախկին պատրիարքի գործունեության մեջ, բայց նկատի ունենալով, որ անոր դատը բավականին հրաշալի է, և որ պատմական այս բույն հրամայական պարտք կ'ըլլեն, ներքին բոլոր

պառակասումներու ու հասարակական խղճի վրդովման առիթներեն խույս տալ որոնց կարգին գերազանցապես կ'պատկանի Օրմանյան սրբազանի հարցը, կ'այտարարեն, որ մեծամասնության վրա կ'ընդունա պատասխանատվությունը և չի մասնակցի վերջնական քվեարկության:

Երկրորդ բանաձևը Գրիգոր Ձոհրապինն էր, որ մեկ առ մեկ պարզելն հետո իր տեսակետը ամբաստանության նյութ կազմող կետերուն մասին, և «այդքի առջև ունենալով երեք տարիս ի վեր եկեղեցական հալածանքը և անարգանքը, եկեղեցական արարողությունց մասնակցելն արգելումը և այն բարոյական տառապանքը, զոր լուծելամբ քաշած է», կառաջարկե՞ր «ազատ կացուցանել Օրմանյան սրբազանը իրեն դեմ եղած բոլոր ամբաստանություններեն»:

Երրորդ բանաձևը, որ պահպանողականներունն էր և քվեարկվեցավ 28 ձայնով, հարևանցի թվելն հետո իր նկատումները, կեցրականցներ. «Ժողովը խղճի կատարյալ հանդարտությամբ և իր պատասխանատվության բարձրության պիտակցությամբ կորոշե մերժել եղած բոլոր ամբաստանությունները և բյուրոսովին անպարտ կնկատե Պոյոս նախկին պատրիարք Օրմանյան սրբազանը, իր մասին եղած (ուղղե իրեն վերադրված) հակասահմանադրական և ապօրեն արարքներեն»:

Բանաձևը, որով Օրմանյանի պաշտպանները անոր անպարտությունը քվեարկել տվին, ափհափո խմբագրված և դժգույն փաստաթուղթ մըն է միայն, որ զայն խմբագրողներուն աճապարանքը կ'մատեն միայն: Զայն կարգացողը այն տպավորությունը միայն կկրն, թե անոնց նպատակն է եղած Օրմանյանը անպարտ արձակել պաշտոնապես, առանց մտահոգությունն ունենալու զայն անպարտ հանձնել նաև պատմության:

Օրմանյանի պաշտպան հոսանքը նախկին պատրիարքը ամեն գնով արդարացնելու իր արտոտրանքին մեջ, օրինակ, ուրիշ բան չէլ գտած ըսելու իր բանաձևին մեջ, բայց եթե այն, անկատելով որ... Ազգին համար կենսական խնդրի մը մեջ, ինչպես ամեն երեսփոխանի, նույնպես ալ ավելի իրավունքով մը, Ազգի պետի մը մասնավոր կարծիքը ունենալու և զայն ի հարկին անկեղծորեն հայտնելու իրավունքը անուրանալի է, և որ սույն քաղաքական կարծիքը այսօր նս ամբաստանյալի կողմն պահվելով կ'պնդե իր տեսակետին ճշտության մասին, և ամբաստանիչներն ալ ընն պնդեն, թե հակառակ ընթացք մը ազգային շահերու ավելի համապատասխան պիտի ըլլար...»:

Ճխուք պիտի ըլլար, եթե-Պրմանյան այս շքանշանը մով ներկայանար պատմութեան: Եվ եթե մենք գլխավորաբար Գրիգոր Զորապի հայտնած կարծիքներուն վրա ծանրացանք այստեղ, պատմական այդ ժողովին մեջ տեղի ունեցած վիճաբանութեանց առթիվ, անոր համար էր, որ Զորապ թերևս միակն էր բոլոր խոսք առնողներուն մեջ, որ հեռու էր կողմ հանդիսանալու և առավելապես բանականութեան ձայնն էր, որ կենդանացնէր:

Բանականութեան այդ ձայնն էր իսկական վճիռը, զոր Ազգը կուտար Զորապի բերնով: Ազգային ժողովին քվեարկածը օրինական ձևակերպութեան մըն էր միայն, զուրկ բարոյական որեւէ արժեքի:

Անպարտութեան վճիռ էր ան, ճիշտ է: Բայց վճիռը, զոր Ազգային ժողովը կուտար Օրմանյանի համար՝ անարդարութեան վճիռ էր առավելապես իրեն, ժողովին համար: Կիսակեր ամօթալի միջադեպ մը իր շարեգործութեանց մեջ: Հարց մը, որ կրնար լուծուի ստանալ մեկ քանի նիստով, չորս ամբողջ տարի ձգձգել էր, ամբաստանութեանց բեռին տակ պահելով մարդ մը, որ ամբողջ տասներկու տարի պատրիարքութեան էր ըրեր, տասներկու տարիներու ամբողջ հոգը կրելով այն աստիճանին, հետո ալ չորս տարի կրելով բեռը մեղքերուն, որոնք առավելապես այդ շրջանին էին եղեր և զորս հիմա բարձր էին միմիայն իրեն, որովհետեւ ինքն էր միակեր առեր դանոնք իր վզին, ու միակն ալ անոնց հաշիվը տվեր:

Ձեռք կրնար ըսել, թե սխալներ չունեցավ Օրմանյան: Հոգեւոր պետ մը, որ Ազգին ղեկը կստանձնէ ալեկոծ պահու մը և զայն կվարե տասներկու տարի դժնդակ պայմաններու մեջ, չէր կրնար սխալներ չգործել: Բայց սառնասիրտ դատավորի մը համար, որ այդ սխալները կքննէ մարդն ու իր ժամանակը իր տեսողութենէն չհեռացնելով, շատ պարզ պետք է թվի, որ անոնց մեծ մասը հետեւանքն էին մարդուն խառնվածքին, դաստիարակութեան, աշխատանքի մեթոդներուն և մանավանդ իր շրջապատի պայմաններուն, ու հետեւաբար բացատրելի էին բոլորն ալ: Եվ եթե սայթաքումներ ալ մնացին, զորս դժվար ըլլար ընդունիլ իբր պայմաններուն հարկադրանքը, պետք էր զանոնք ալ դատել աշքի առջև բերելով մարդը այնպէս, ինչպէս որ էր պարտիարք դառնալի առաջ, ուրիմն աշքի առջև ունենալով մարդը իր հիմնական նկարագրին մեջ:

Ուրիշ մը իր տեղը թերևս ավելի քաղցր ըլլար իր բնավորութեամբ, ավելի մեղմ վար-

վեր ժողովականներուն հետ, ժողովուրդին հանդեպ ավելի արտցալ ձևանար, և թերևս նույնիսկ նվազ խոնարհեր վարչաձևին առջև: Բայց ոչ ոք թող չհավակնի կարծելու, թե ավելի տանելի պայմաններ պիտի ապահովեր Ազգին, կամ ինքն ալ իր կարգին պիտի չմղվեր տարբեր սխալներու, որոնք կրնային ավելի ճակատագրական ըլլալ հայ ժողովուրդին համար:

Անշուշտ կրնար և ինքը տարբեր ըլլալ քան ինչ որ եղավ: Անձնական գիծը, օրինակ, կրնար նվազ շեշտել իր գործունեութեան մեջ, և գործի մը ամբողջ պատասխանատվութեանը իր վրա շառնել, ձեական դարձնելով ուրիշներու գործակցութեանը իրեն հետ: Կրնար, դարձալ, հետամուտ ըլլալ այդքան հանդիսավորութեանց, երբ հայ ժողովուրդը կմխար ներսնէ, և ավելի խտրութեան ղեկ միջոցներու մեջ, եթե նույնիսկ Ազգին մեկ օգուտն ըլլար իր շարժառիթը: Այդ կերպով իր թշնամիները նվազ պատրվականներ պիտի ունենային հալածանք բանալու իր դեմ, և իր հակառակորդները նվազ առիթ մեղքեր փնտռելու իր վրա:

Բայց իր վրա բիծեր փնտռողներն անգամ ոչ ոք համարձակեցավ հավաստելու, թե Օրմանյան որեւէ շահ հետապնդած է իրեն համար ինչպէս իր բովանդակ կյանքին, նույնպէս իր պատրիարքութեան տասներկու տարիներուն մեջ: Ոչ ոք կրցավ մեղադրել զայն, թե մտածած է իր անձնական բարօրութեան կամ հանգստի մասին, կամ երբեք շեղած իր ժուժկալ կյանքէն, որ անստգոյն մնացած է միշտ:


Վճիռը, որով փակվեցավ Օրմանյանի հարցը, անակնկալ մը չէր: Պահ մըն էր, երբ հայ ժողովուրդի ժողին մեջ մարած էին կրքերը, և ամենն բժախնդիքներն անգամ տրամադիր չէին հավիտյան արծարծելու խընդիրը, որ արդեն բավական շատ էր տեսած:

Ազգային ժողովի վճիռը պաշտոնապես կիսակեր հարցը, բայց հարցը միշտ բաց կմնար պատմութեան առջև: Անոր համար նախ, որ դատ տեղի չունեցավ. խաչակրութեան մըն էր, որ սկսավ կրքերու բռնկամ պահուն, և վերջ գտավ, երբ մարեցան կրքերը: Հետո, ինչպէս ըսինք, դատավորներ չէ որ նստած էին Ազգային ժողովին մեջ, ալ երկու կողմեր, որոնք ալ ինքն վիճելի պարտասած, վերջ կուտային իրենց կռիվին:

Վճիռը, հետո, ժամանակը պիտի տար: Եվ ան տվավ զայն:

(Շարունակելի)

ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵԾԻՆ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԸ



Ներսէս Աշտարակեցին իր երկա-
րամյա—կյանքի—համարյա կեսը
անց է կացրել Վրաստանում, որ-
պէս Վրաստանի Հայոց առաջնորդ
և Ներսիսյան դպրոցի հիմնադիր։ Անշափ սի-
րելով Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիսը,
նա այնտեղ էլ ծավալել է եռանդուն գործու-
նեութիւնը, դպրոցական—կրթական, եկեղե-
ցական և ընդհանրապէս մշակութային քնա-
գավառներում։

Ներսէս Աշտարակեցու կյանքը մանկու-
թյունից առնչվել է Վրաստանին և վրաց ժո-
ղովրդին։

Նա դեռևս յոթ-ութ տարեկան երեխա է եղել
Թորոս անունով, երբ վրաց Հերակլ Բ թա-
գավորը այցելել է Հայաստան, Աշտարակ և
հանդիպել նրան։

Սակայն այս մասին ավելի լավ է խոսքը
տանք մեր տաղանդավոր վիպասան, Ներսէս
Աշտարակեցու հայրենակից Պերճ Պռոշյա-
նին, որ նկարագրել է այդ դեպքը, հավանա-
կան է ականատեսներին լսելով։

«...Մեծ նախ խոսքը կտրից կառավարի-
լը, որ հանկարծ ներս ընկավ դրսի բակը և
ձայն տվեց. «Եկե՛ք, երեխեք, հենց հիմի
թագավորը կգա. ասում են, Սաթումենց յի-
բու՛՛ կուշտն ա հասել, դու էլ խորիշան հար-
սի, քնվանու հետ, շո՛ւտ արեք, կերակրենք
հոգսը քաշեցեք»։

Հերակլը բոլորովին հիացավ, երբ որ Գե-
որգ խալիփեն նորա երեք հարյուր ձիավորին
էլ յուր տանն ընդունեց։

Ամենքի համար, ըստ արժանավորության
տեղ էր պատրաստել, բոլոր ձիանքը նորա
մեծ գոմումը տեղավորվեցան և, կարծես թի-
ոյինը անսովոր բան չէր պատահել։

Շատ հաճելի թվեցավ թագավորին, երբ
որ յուր բարձի վերա, կարգով նստած տեսավ
երեք երեխաներին, որոնք, ներս մտնելուն
պես, վեր թռան տեղերիցը և միասին ձայն
տվին. «Ուտնամուտդ բարի»։

— Ի՛նչ գեղեցիկ երեխեք ունիս, Գեորգ
խալիֆա,—դարձավ դեպի տանուտերը թա-
գավորը. Աստված քեզ բաշխի, բայց բանն
այս է, որ միմյանց նման չեն. էս մի տղադ,—
բռնելով Վարդի ձեռքը,—ճակատից երևում
է. քաջ պետք է դուրս գա. էս մյուսը՝ շատ
խելոք աչքեր ունի, իսկ աղջիկդ՝ միանգա-
մայն Վրաստանի թագուհի կարող է դառնալ,
յուր գեղեցկութիւնովը։

— Փա՛ռք իմ Ստեղծողին, տե՛ր թագա-
վոր, ասենք, Աստված ինձ երեխեք չի տվել,
համա էլի իմն են սրանք. էս տղեն ու աղջի-
կը իմ ազգականներն են, իսկ մեկելը մի ազ-
քատի որդ է, մեզ մոտ ա մնում ու մեր երե-
խիցը պակաս չենք սիրում։

— Կգա՛ս ինձ հետ, քեզ տանեմ,—դար-
ձավ թագավորը դեպի Վարդը,—ինձ մոտ
կպահեմ, լավ մարդ կշինեմ։

— Թե որ Մանուշակին էլ տանի՛ս, ես էլ
կգամ, ես սրանից հեռանալ չեմ։

— Մանուշակը որ գնա, ըսկի մի հրուպի
ես քստեղ կկենա՛մ, ձեզանից առաջ կվա-
ղեմ,—դուրս ընկավ Թորոսը,—քե՛զ ա կան-
չում, դո՛ւ գնա, էլ ուրիշի հետ ի՛նչ գործ
ունիս։

— Վարդը որ գնաց, ես էլ կերթամ,—թո-
թովեց աղջիկը,—ես Վարդին շատ եմ սի-
րում։

— Էս դեռ թո՛ղ,—հանկարծ ձանրակշիս
դեմք առած, դարձավ Թորոսը դեպի թագա-
վորը,—ասենք, դու հանաք ես անում, ո՛չ
դու մեզ կտանիս, ո՛չ էլ մենք կգանք. համա
թե որ դու ըղենց լավ թագավոր ես, ընչի՛ ես
մեր դեղը թուրքի ձեռին թողնում, մենք մեղք
չե՛նք. էս ի՛նչ ա մեր հայր, էս քույր բազմու-
թյունը տեսար, որ կաննած էին, նրանց մի-
ջին մի մարդ չկա, որ հարիր հետ ծեծ կերած
լըլնի, մի թուրքի մհասիլ գալուս, մեր գեղը
արին արտասուլք տանում ա, ինչ կըլնի, որ
գաս, մեզ նրանց ձեռքն ազատես, մեր գե-
ղըցիք ամենքն էլ վախում են. ես դեռ պատիկ
եմ, մենձ որ ըլնի, ըսկի չէի վախենալ. Աստ-

ված տա՛մի մեծանամ, քեզ չափ մարդ դառնամ; տես, Թորոքերի գլուխն ինչ եմ քերում, Թաղավորը սառած մնաց, բոլոր կանգնողները զարմացան: Թուրքովին անհնար էր հաժա տալ, որ մի փոքրիկ երեխա այդպիսի խոսքեր կասի:

— Դու ո՛ւմ տղեն ես, — հարցրեց Թորոսին թագավորը, քմեծադ տալով:

Պարզ երևեցավ, որ նա կարծեց, թե խոսքերը սովորեցրած, երեխայի քերանն են դրել:

— Ինձ հեր չունիմ, եթիմ եմ, մի տերտեր կար, Տեր Հարություն կասեին, նրա տղեն եմ:

— Քեզ ո՛վ սովորեցրեց էդ խոսքերը, որ ինձ ասես, Գեորգ խալիֆին:

ասաց Հերակլը Թորոսին, շրնի՛նք ցատեղ մնացել, էս թուրքի աշխարհքումը, եկեք, ձեզ տանեմ—իմ երկիրը, էնտեղ ազատ ու հանգիստ կապրիք, նրանք լավ երեխեք ունին, նրանց հետ կխաղաք:

— Մենք մեր գեղը թողանք, ուրիշ տեղ գնա՛նք, վեր քցենք շինած տուն, տեղ, յիջի, մուլք, մեր Սիրանավորը, մեր ժամերը, մեր Մուղնու Սուրբ Գեորգը ու գնանք օտար աշխարհք, շինքներս ծոենք, որ մեզ ողորմություն անեն, տուն-տեղ, ապրուստ տա՛ն: Զէ՛, թե որ ինձ մնար, ես կուզեի— քըտասը հետ թուրքերն ըստեղ ինձ ծեծեին, քան թե ուրիշ աշխարհքում ականջս դինջ ապրեի: Թե որ մի ճար ունիս, ըստեղ արա, թե չէ՛ քու աշխարհքը գալը խելքուժս նստում չի:— Սեր-



ՆԵՐՍԵՍ ԼԵՅՆԻՐԱԿԵՐԻ, ԿԱՀԱՆ ԱՆԿՈՎՆՈՒՄ

— Ընչի՛, ես խելք չունի՛մ, որ ուրիշները սովորացնեին. քոռ ե՛մ, ամեն օր տեսնում չե՛մ, թե ինչ են անում թուրքերը՝ մեր գեղը պալուս:

— Հավատա, տե՛ր թագավոր, քո գլո՛վսը վկա, — ասացին ներկա եղողները, — որ մենք էլ քեզ հետ առաջի անգամն ենք լսում դրա բերանից էդ խոսքերը:

— Այ երեխա, — բացականչեց թագավորը, — լուսի քաժին է սրա հայրը, որ էսպես երեխա է թողել: Ա՛խ, երանի չէ՛ր, — դարձավ նա դեպի յուր քամակին կանգնած մի վրացի զորապետ, — որ իմ Գիորգի որդին էլ, էս երեխի նման, հույսեր խոստանար, ես վախժում եմ: ող նա մեր ունեցածն էլ կորցնի: Եթե դուք, հանգիստ ապրել չե՛ք ուզում, — աչքով նշանացի անելով ուրիշներին,

տած խոսքերի նման այս քառերը դուրս եկան Թորոսի բերանից:

Հերակլին այնքան զգալի եղան Թորոսի ասածները, որ մոլորվածի նման, չէր իմանում ինչ պատասխանի:

— Էս երեխան մեծ հույսեր է խոստանում, — ասաց նա, — Աստված տա, երկարակյաց լինի՞ս²:

Պ. Պողոսյանի հետաքրքիր և կարևոր այս գրվածքից պարզ երևում են երկու մեծ մարդկանց ընավորությունը քնորոշ հատկությունները՝ Թորոսի (ապագա ներսես: Աշտարակեցի կաթողիկոսի) հայրենասիրությունն ու խելացիությունը՝ թե որ մի ճար ունիս,

Ձ. Պողոսյան, *Հենրեսի ժանկությունը, Էմանուիլ քահանա նազարյանի «Ընտիր հատվածներ», Ա, 1907 թ., էջ 133—136.*

ըստեղ տրա, թե չէ՝ քու աշխարհը պար խնդրումս նստում չիս, և Հերակլի թագավորի մարդասիրությունն ու իմաստությունը՝ «էս երեսան մեծ հույսեր է խոստանում. Աստված տա, երկարակյաց լինի»:

Եվ իրավ, Ներսես Աղտարակեցին և՛ երկարակյաց եղավ, և՛ արդարացրեց իր վրա դրած հույսերը, հայ ժողովրդի կողմից վաստակելով «Պաշտպան Հայրենյաց» կոչումը:

Վերոհիշյալ դեպքից հետո անցան տասնյակ տարիներ, Վրաստանն ու Արևելյան Հայաստանը մտան Ռուսաստանի հովանու տակ և կովկասյան ժողովուրդները կարողացան ազատ շունչ քաշել:

Հայ և վրաց ժողովուրդները շարունակեցին իրենց դարավոր բարեկամությունը, հին կայերն ու ավանդությունները պատմության, կենցաղի, կրթության, գրականության և արվեստի բնագավառներում: Վրաստանում ապրող հայ ժողովրդի մեծ հատվածը միշտ կամուրջ էր հանդիսանում Հայաստանի և Վրաստանի միջև:

1814 թվականին, եփրեմ կաթողիկոսի և Ռիֆլիսի կառավարչապետ Ռուֆիշեի օրոք, Վրաստանի հայոց առաջնորդ է նշանակվում Ներսես արքեպիսկոպոս Աղտարակեցին:

Գալով Թիֆլիս, Ներսես Աղտարակեցին հավանում և սիրում է Վրաստանի մայրաքաղաքը և շատ շուտով համոզվում, որ իր գործունեությունը ծավալելու համար Թիֆլիսը հարմար վայր կարող է դառնալ:

Աղտարակեցին անմիջապես կապեր հաստատեց վրացի առաջադեմ գործիչների հետ: Նա իր սերն ու համակրանքը դեպի վրացիները գործով ապացուցեց: 1819 թվականին, մի խումբ առաջավոր վրացիների նախաձեռնությամբ, պետք է լույս տեսներ առաջին վրացական պարբերականը՝ «Վրաստանի թերթ» վերնագրով: Սակայն նախաձեռնողները համապատասխան դրամական միջոցներ չունեին և այդ պատճառով թերթի հրատարակությունը ուշանում էր, ձգձգվում:

Աղտարակեցին, դիտակցելով այդ մեծ և կարևոր գործի անհրաժեշտությունն ու նշանակությունը, անմիջապես իր օգնության ձեռքն է մեկնում վրաց մտավորականներին և հնարավորություն տալիս նրանց թերթը սամանակին հրատարակելու և այդպիսով սկիզբ դնելու վրացական մամուլին:

Վերոհիշյալ թերթը այդ կապակցությամբ դրում է. «Թեպետ մարտի 1-ին լրացավ րամանորդագրության ժամկետը վրացական թերթ ստանալու համար, սակայն րամանորդների թիվը շատ հեռու էր սահմանված թվից, որ նշանակել էին թերթի հրատարակելները առաջին հայտարարության մեջ:

Այդ պատճառով էլ քոլեոսվին պնդեա: կլիենե քերքը սկսել և հրատարակել, ... Եթե նորին Սրբությունը հայերի առհեպխակոպոսներսը չկամենա իր վրա վերցնել օժանդակությունն ու շնացնեք մեզ այն (թուրք ընդգծումները մերն են—Ս. Ա.):

Միայն նորին Սրբության միջոցով հարյուրից ավելի հայ հոգևորականներ բաժանորդագրվել են թերթ ստանալու համար»:

Այստեղից պարզ երևում է, որ Ներսես Աղտարակեցին մոտ ծանոթության և փոխհարաբերության մեջ էր այդ թերթի ղեկավարների և հատկապես նրանցից գլխավորի՝ Սուլթան Դոդաշվիլու հետ, որն իր ժամանակի Կարկաստուն ղեմերից մեկն էր:

Վրացիները նույնպես փոխադարձ լավություն ցույց տվեցին Ներսես Աղտարակեցուն, Ներսիսյան դպրոցի բացման առթիվ:

Աղտարակեցին վրաստանում առաջնորդ նշանակվելուն պես, սկսեց հոգալ ժողովրդին ագիտության խավարից դուրս բերելու և լուսավոր ուղու վրա կանգնեցնելու համար:

Իր րարի նախադասին հասնելու որպես լավադույն միջոց, առաջին հերթին նա մտածեց Ռիֆլիսի նման հայաշատ քաղաքում հիմնել մի Երինավոր ուսումնարան, որն առաջին նախապայմանը կարող էր լինել ժողովրդի միտքը զարգացնելու, նրա մտավոր մակարդակը բարձրացնելու գործում:

Եվ սհա, 1821 թվականին, նա հիմքն է դնում իր երազած դպրոցի, որը հետագայում վերածվեց բարձր ակադեմիական ուսումնարանի և կոչվեց Ներսիսյան Հայոց Հոգևոր սեմինարիա և որը գոյություն ունեցավ համարյա մի ամբողջ դար, այն է մինչև 1920—1921 թվականները:

Դպրոցը հսկիսավոր կերպով բացվեց 1821 թվականին:

Այնուհետև ամեն տարի աճում էր աշակերտների և ուսուցիչների թիվը:

Ներսես Աղտարակեցու համար այդ դպրոցը հանդիսացել է ողորդության և հոգեկան բավականության անսպառ աղբյուր:

Մեր պատմաբան Ադ. Երիցյանը այդ առթիվ գրում է. «Մեծ հանդեսներով էին կատարվում սոցակերտաց տարեկան հարցաբնությունները և Ներսեսը ամեն անգամ հարյուրավոր նշանավոր անձինք հրավիրելով լուր հիմնարկության տոնախմբությանը ներկա լինելու, հրճվում և ուրախանում էր սանիկների ցույց տված հառաջագիմությունը»:

3. Տե՛ս «Մարթիկոս Կաթողի» («Վրաստանի թերթ»), 1919 թ., № 3:

4. Ադ. Երիցյան, «Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը և Կովկասի հայոց 19-րդ դարում», մասն II, 1924 թ., էջ 161—162:

Ահա. այդ հանդեսներից մեկի ժամանակ, բարձրագույն տեղից ներկա եղող ու ներսնս բարեկամ վրաց ազգի նշանավոր իշխան գեներալ Օթար Ամիրխիսիսիսը և մոտենալով՝ ալեկալով Արհմույն՝ զգացված սրտով ասաց. «Դու իմ հայրենիքում մեծ լսատեր վառնցիր, լսած և տեսածս պարտավորություն են դնում վրաս, խնդրել ընդունել ինձանից Սոդանյուխ գյուղում գտնվող բարեխից այգի. ի մշտական վայելումն քո ուսումնարանին»:

Այդ Սրիցյանը այդ առթիվ գրում է. «Այս կալվածք, որ ներսիսյան դպրանոցի հոգաարձույթունը դեռ հիսունական թվականներում գնահատած էր առնվազն 6000 ռուբլի, այժմ ևս նորա սեփականությունն է և ընդմիշտ հիշատակ կմնա, որպես վրաց մեծատոմի արուստանեմ ճվիրաբերությունն ու գույն Բայսյ ազգային լուսավորությանը»:

Ներսիսյան դպրոցի նվիրատուների ցուցակում մենք հանդիպում ենք և մի ուրիշ վրացու, ոմն ռուստաբաշի Իվան-ին, որի նվերը գույքն ընչին է, բայց երևույթն է մեծ և խրախուսիչ:

Ժողովրդական այս օգնության և աջակցության մասին խոսում է ինքը ներսես Աշտարակեցին.

«Նրբ սկիզբն արեցի Թիֆլիսի ուսումնարանի հիմքը ձգելու՝ փող շունեի, բայց և այնպես հույս զնելով Աստուծո օժանդակության և ազգիս ձեռնտվության վերա, գործն սկսեցի, այնուհետև ոչ թե հայեր, այլև վրացիք սկսեցին ինձ օժանդակել»:

1847 թվին ներսիսյան դպրոցի աշխարհագրության և ընդհանուր պատմության ուսուցիչ է կարգվել ուսանական սեմինարիայի պրոֆեսոր, վրացի Խասն Սուլխանիշվիլին:

6 Այդ. Երիցյան. հիշյալ աշխատությունը, էջ 162—164.

7 Նույն տեղում, էջ 162:— Նույն հեղինակի «Պատմություն ներսիսյան հայոց հոգևոր դպրոցի», 1898 թ., էջ 61:

8 Տե՛ս «Բազմավեպ» 1904 թ. մայիս, № 5, էջ 208, Սանիտոնոս Սամվելյանի «Էջիշդույթուններ ներսես Կաթողիկոսի կյանքից»:

Ներսիսյան դպրոցում մի առժամանակ դասավանդել է նաև վրացի հայտնի պատմաբան Պլատոն Իոսելիանին:

Բացի ուսուցիչներից, Հարություն վարդապետ Ալամադարյանի տեսչության օրոք, ներսիսյան հոգևոր ուսումնարանում են ստացիլ իրենց սկզբնական կրթությունը վրացի երիտասարդներ Դիրգի Մուխրան-Բագրատիոնին, Փախոսարով Օրբելիանին, Իոսեթ Թարխան-Մուրադլին, Դիմիտրի Մեղվիկենթ-Ուխուցեսին և ուրիշներ, որոնք հետագայում բոլորն էլ անվանի մարդիկ դարձան:

Ներսես Աշտարակեցին անշափ սիրելով Վրաստանը, իր ժամանակի մեծ մասը անց էր կացնում նրա մայրաքաղաքում, ուր և կնքեց իր մահկանացուն 1857 թվականի փետրվարի 13-ին, իր ծննդյան օրը, 96 տարեկան հասակում: Նա տեղափոխվեց Հայաստան և ամփոփվեց Մայր Աթոռ Ս. էջմիածնի զավթում:

Թիֆլիսում, Զրկինենց Ս. Կարապետ եկեղեցու թակումն է թաղված նաև ներսեսի մայրը՝ Բյուրականցի Տեր Դազար քահանա Բարադանյանցի դուստր, Հարություն քահանա Շահազիզյանի կին Սուսամբարը:

Ներսես Աշտարակեցին միշտ շփման մեջ է եղել Վրաստանի և վրաց ժողովրդի հետ:


1913 թվականին, ներսիսյան հայոց հոգևոր դպրոցի հոգաբարձությունը որոշեց դպրոցի ծրագրի միջ մտցնել նաև վրաց լեզուն, որպես պարտադիր առարկա, որը և կիրառվեց հետագայում:

Ներսիսյան հայոց հոգևոր դպրոցը չափազանց մեծ դեր կատարեց Անդրկովկասյան հայ իրականության մեջ մեր մշակույթի և գրականության զարգացման գործում: Այդ դպրոցում ստացան իրենց կրթությունը ԺԹ դարի հայ մտավորականների ճշնող մեծամասնությունը՝ գրողները, մանկավարժները, նկարիչները, երաժիշտներն ու հասարակական գործիչները:

Ժամանակն է արդեն դրադվել այդ դպրոցի լուրջ ուսումնասիրությամբ և տալ փաստերով հարուստ մի աշխատություն, այդ դպրոցի լիարժեք պատմությունը:


9 Տե՛ս «Մշակ», 1913 թ., № 282.






ԿԱՌԱՌԱՐԱՐ ԾԱԲԱՐԻ ԵՎ ԶԱՆՆԱԿԱՆ ԿՈՆՍՏԱՆԴՆՈՒԼԻ ՍԱՆՏՐՈՒՄԻ ԿԱՌԱՌԱՐԱՐ


Նկարիչ՝ Գրիգոր Ավագյան







ԿԱՌՈՒՑՎԱԾ ՎԱՀՐԱՄ ԿԱՆՈՒՍԵՆԻ ՎԱՆՔԸ
ԿԱՆՈՒՍԵՆԻ ԻՇԽԱՆԻ ԿՈՂՄԻՑ 988—1029 թ. թ.

Handwritten text in the top left corner, possibly a date or reference number.





ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԱՐԾԱԹՅԱ ՁԵՌԱԳՐԱԿԱԶՄԵՐԻ ՄԱՍԻՆ



ատենադարանի ձեռագիր քան-
ձերի մեջ հատուկ ուշադրության
արժանի են արծաթյա կազմերը,
որոնց ուսումնասիրությունը կա-
րող է շատ հետաքրքրական նյութ հայթա-
յթել հայ արվեստի պատմության համար:

Ձեռագրերի արծաթյա կազմերի պատրաս-
տումը միջնադարյան հայ արվեստի հետա-
քրքրական և յուրահատուկ ճյուղերից էր¹,
կապ ունենալով արվեստի մի քանի ճյուղերի
հետ միաժամանակ: Որպես արժեքավոր մե-
տաղի հետ դործ ունեցող արվեստ, նա ի-
հարկե անխզելիորեն կապված է ոսկերչու-
թյան հետ, բայց միևնույն ժամանակ կաս-
կածից վեր է, որ այդ կազմերի վրա քան-
դակված կերպարներն ու զարդերը ոչ միայն
հայկական մանրանկարչության հարուստ
ձևերի վերարտադրությունն են, այլև նյութին
(արծաթ) հարմար ճկուն ձևեր:

Արծաթյա կազմերը սերտորեն կապված
են կաշնպատ կազմերի հետ, քանի որ եր-
կուսն էլ հիմնականում նույն նպատակին են
ծառայում պահպանել ձեռագիրը մաշվե-
լուց, ինչպես նաև գեղեցիկ տեսք տալ նրան:
Մեր ձեռագրերի կաշնպատ կազմերի ուսում-
նասիրությունը ցույց է տվել, որ նրանք
սկիզբ են առնում դեռ Բագրատունյաց շրջ-

շանից (Ժ դարից)², որից որոշ ժամանակ
հետո սկսվում է նաև արծաթյա կազմերի
պատրաստումը: Բացի կաշվից ու արծաթից
(որոնց մեջ օգտագործում էին տախտակի
կտորներ), ձեռագրերը կազմվում էին նաև
այլ նյութերով, ինչպես, օրինակ, փղոսկրով,
որով մեզ հասել է էջմիածնի Ավետարանի
հոյակապ կազմը:

Ձեռագրերի արծաթյա կազմերը պատրաստ-
վում էին քնակաճարար նրա կաշնպատու-
մից հետո և այն էլ մերթ մի քանի դար անց:
Այդ մասին են վկայում կազմի արծաթյա
թերթի տակ գտնվող կաշնպատ կազմի
վրայի զարդերը, որոնք իհարկե չէին լինի,
եթե կաշնպատումից հետո ձեռագիրն ան-
միջապես արծաթապատվեր:

Որն է ձեռագրի արծաթյա կազմի մասին
խոսելիս երեք կարևոր կետեր կան, որ պետք
է ճշտել. տեղը, ժամանակը և հեղինակի (ոս-
կերիչ վարպետի) անձնավորությունը: Սա-
կայն այս հարցերի ճշտումը խիստ դժվար է
և բարդ, քանի որ հիշատակարաններում
մեծ մասամբ նշված է լինում բուն ձեռագրի
գրչության վայրը, ժամանակը և գրչի անու-
նը, իսկ ինչ վերաբերում է կազմին, ապա
այդ մասին ստույգ տեղեկություններ սա-
կավ են պատահում:

Մատենադարանի թվով 206 մետաղակազմ
(մեծ մասամբ արծաթակազմ), ձեռագրերի

¹ Գառեգին առհեսլիսպոս Հովսեփյան, «Մի էջ
հայ արվեստի և մշակույթի պատմությունից», Հա-
լես, 1930, էջ 14—19:

² Ռ. Առաքելյան, «Կազմերի զարգացման արվե-
տը միջնադարյան Հայաստանում», «Բանբեր Մատե-
նադարանի», № 4, էջ 189:



ԱՐԾԱԹՅԱԼ ԿԱԶՄ ԿԻՍԱԳՆԴԻԿՆԵՐՈՎ,
ԶՈՐՍ ԱՆԿՑՈՒՆՆԵՐՈՒՄ ԶԱՐԴԱՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ:
(Մատենադարանի ձեռագիր № 3717)

վրա ընդհանրապես նշում չկա այն մասին, թե որտեղ է պատրաստվել տվյալ կազմը: Սակայն նկատի ունենալով բուն ձեռագրի գրչության վայրը, կարելի է ենթադրել, որ, օրինակի համար, Մեծ Հայքում դրված ձեռագիրը կարող էր հենց տեղում, արծաթապատված լինել, եթե նրա կազմի ձևավորման ոճը բնորոշ է այդ տեղին և ժամանակին:

Արծաթյա կազմերի պատրաստման օջախները կարելի է բաժանել երեք խմբի՝ Մեծ Հայք, Կիլիկիա և զաղթավայրեր: Մեծ Հայքի կենտրոններն են Վանա լճի շրջակա վայրերը (Վան, Աղթամար, Լիմ, Մուշ, Բաղնը և այլն) և Արևելյան Հայաստանի վանքերը (Տաթև, Գլաձոր, Էջմիածին և այլն): Արծաթակազմ ձեռագրերի քանակի տեսակետից Մեծ Հայքում ուշագրավ տեղ է զբաղում Վանը (մերձակա վանքերով), որ շատ բնական է, քանի որ հենց այստեղ է դարձրել ընթացքում զարգացել ոսկերչության տեղական դպրոցը:

Կիլիկյան ոսկերչության մեջ կան մի քանի հետաքրքրական անուններ՝ Հոռմկյա, Ակներ, Դրազարկ, Սկևոա և Սիս, որոնք

ընդհանրապես եղել են գրչության կարևոր կենտրոններ: Գաղթավայրերի մեջ անմիջապես աչքի են ընկնում երեք կարևոր անուններ՝ Կաֆա (Ղրիմ), Կոստանդնուպոլիս և Նոր-Ջուղա, որոնց ամեն մեկից մեզ հասել են մեծ թվով արծաթյա ձեռագրակազմեր: Պետք է աստեղծ ևս բնորոշել, որ Կոստանդնուպոլիսը՝ նույնպես հայտնի էր որպես հայ ոսկերչության զարգացման կարևոր կենտրոն, ուստի այնտեղ պատրաստված արծաթյա կազմերի մեծ թվի առկայությունը մի անգամ ևս վկայում է պոլսահայ ոսկերչության նշանակության մասին:

Իհարկե այսքան շատ վայրերում չէին լինի արծաթապատ կազմեր պատրաստող ոսկերչական կենտրոններ, այլև մեր հիշած ամեն մի խմբի մեջ պետք է լինեին որոշ քաղաքներ, որտեղ քիչ թե շատ զարգացած ոսկերչություն կար: Այս տեսակետից Մեծ Հայքում, բացի Վանից, կարելի է հիշել նաև Կարին քաղաքը, զուցե և Մուշը:

Հայկական արծաթյա ձեռագրակազմերի պատրաստման կենտրոնների հարցը լուծելու



ԶՈՐԿԱԹԵԼ ԶԱՆԿԵՆԱՊԱՏ ԱՐԾԱԹՅԱԼ ԿԱԶՄ
(Մատենադարանի ձեռագիր № 8781)


Տ Ա: Սաղբեղյան, «Կ. Պոլսո հայ ոսկերչությունը (ԺԸ, ԺԹ դար), «Անահիտ», 1930 (հունվար, փետրվար, մարտ-ապրիլ):

համար անհրաժեշտ է աշխարհի բոլոր ձեռագրատներում պահվող հայկական արծաթապատ ձեռագրերի ուսումնասիրությունը, որովհետև արժեքավոր կազմեր կան նաև այլ վայրերում, մանավանդ Նրուսադեմում և Փարիզում¹։ Բացի սրանից, բազմաթիվ արծաթապատ ձեռագրեր անհետ կորել են Գ. արքեպիսկոպոս Հովսեփյանի նկարագրում է առաջին համաշխարհային պատերազմից առաջ Մերաստիայում գտնվող մի հրաշալի արծաթյա կազմ², որը պատերազմից հետո արդեն կորած է համարվում։

Բացառված չէ այն հանգամանքը, որ մի ձեռագիր գրված էր լինում մի տեղում, բայց արծաթապատվում բոլորովին այլ վայրում և այն էլ մի քանի դար անց, Հավանաբար ձեռագիրը կաշեպատ վիճակում որոշ ժամանակ պահվելուց հետո, դիմում էին արծաթապատման միջոցին, ապահովելու համար ձեռագրի երկարակենցությունը։ Այսպես, օրինակ, 1324 թվականին Ակներում գրված



ԿՈՍՏԱՆԴՆՆ և ԿԱԹՈՂՈՍՈՍԻ ՅՐԱՄԱՆՈՎ
ՆՈՐԱՆԼԱՅՈՒՄ 1255 թ. ՊԱՏՐԱՍՏՎԱՆ
ԱՐԾԱԹՅԱՆ ԿԱԶՄ
(Մատենադարանի ձեռագիր N 7090)



ԿՐԻՍՏՈՍՏՈՐԴ ԿԱՄ ՄԵՏԱՂԱՅԻՆ ՁԵՎԵՐՈՎ

¹ F. Macler, «Documents d'art arménien», Paris, 1924, pl. XI, CIII.

² Գառեգին արևելագիտության Հովսեփյան, նշված աշխատությունը, էջ 52—55.

Ավետարանը (№ 8187) արծաթապատվել է հետագայում և մետաղյա կազմի վրա կրում է հետևյալ արձանագրությունը. «Յիշատակ է Սր. Ավետարանս Մարգարին և իւր կողայկցին ի գունն Սր. Ստեփանոսին, ի թվին ՌՂԱ (1641)»։

Թեև Մատենադարանի արծաթապատ հնագույն ձեռագրերը ժԱ դարում են գրված (№ 7736 Մուղնու Ավետարանը և № 6201 Տարոնում 1038-ին գրված Ավետարանը), սակայն նրանց կազմերը շատ ուշ շրջանում են պատրաստված։ Մեր օրերը հասած հնագույն արծաթյա կազմերը կիլիկյան շրջանից են։ Մատենադարանի արծաթյա ձեռագրակազմերի հավաքածուի մեջ ամենաարժեքավորը կիլիկյան շրջանից Կոստանդին կաթողիկոսի³ Ավետարանի կազմն է, պատրաստված 1255 թվականին։ Առաջին երեսի վրա կան իրեք կերպարներ, մեջտեղում

³ Կոստանդին և Ռարժրբերդցի (կաթողիկոս 1221—1287), որի պատվերով գրվել են բազմաթիվ արժեքավոր ձեռագրեր (տե՛ս Գ. արևելագիտության Հովսեփյան, «Նյութեր և ուսումնասիրություններ», Բ, էջ 5—44.

Քրիստոս (Յն. Փո. մակագրությամբ), իսկ
երկու կողմերին Մարիամ Աստվածածինը
(Մայր Այ) և Հովհաննես Մկրտիչը (Յովան-
նէս): Երկրորդ երեսի վրա կան շորս ավետա-
խանիչները, Շատ հետաքրքրական են երկու
երեսների վրայի արձանագրությունները:
Երկրորդ երեսի արձանագրության մեջ թեև
նշվում է, որ ձեռագիրը կազմվել է Կոս-
տանդին կաթողիկոսի հրամանով (ԵԳԵԳԱՄ
Աւետարան և կազմեցաւ ճրամանաւ ՏՃ.
Կոստանդնա կաթողիկոսի...), բայց չկա
կազմող վարպետի անունը: Բարեբախտու-
թյուն է, որ հենց առաջին երեսի վրա գրված
է կազմվելու թվականը՝ 94 (1255), Այս
կազմը արժաթ թերթից է պատրաստված և
ապա ոսկեջրած է, իսկ կերպարները դրվագ-
ման միջոցով են հորինված և վկայում են,
որ հմուտ վարպետի ձեռագործ են:

Ժամանակի տեսակետից Մատենադարա-
նի արծաթյա կազմերի ճնշող մեծա-
մասնությունը ժէ դարից է: Միայն
ժէ դարում գրված և հավանաբար նույն
ժամանակ արծաթապատված ձեռագրե-
րը ընդհանուրի գրեթե կեսն են կազ-
մում: Իսկ բացի դրանցից, դեռ նախկին դա-
րերից հասած ձեռագրերի զգալի մասի ար-
ծաթապատումը նույնպես ժէ դարից է,
այնպես որ մշակույթի պատմության մեջ
այդքան մեծ նշանակություն ունեցող այս
ժամանակաշրջանը փայլում է նաև այս աս-
պարեզում: Արծաթյա կազմերի պատրաս-
տումը շարունակվում է մինչև ԺԺ դար, որից
հետո այս արվեստը մեղմում է:

Արծաթյա կազմեր պատրաստող վարպետ
ոսկերիչները կոչվում են կազմող կամ նո-
րոգող, մերթ նաև հենց ոսկերիչ: Կազմող
կարող է նշանակել թե՛ կաշնպատ կազմ
պատրաստող, թե՛ արծաթապատող և երբեմն
նույնիսկ կազմել տվող: Սակայն երբ նախ
տրվում է կազմել կամ նորոգել տվողի ա-
նունը և ապա հիշվում է կազմող ոմն դպիր
այսինչի կամ այնինչի անունը, պարզ է, որ
արդեն հենց կազմող վարպետն է: Այսպես,
օրինակ, 1313 թվականին Գյաձորում գրված
Ավետարանը (Ձ 7842), որն արծաթապատ-
ված է ժէ դարում, հիշատակարանում ունի
հետևյալ տողերը. ոմն Մեսրոպ քահանա ա-
սում է, թե 1109 (=1660) թվականին «ճո-
րոգել տվի», իսկ Ասուր էջում գրված է՝ «Նո-
րոգեցաւ Սր. Մուրես ձեռամբ սուրաճուն
Գայուստ դպրի»: Բացի սրանից կա նաև մի
ուրիշ ոսկերիչ վարպետի անուն գրված նույն
էջում այլ ձեռագրով. «Նորոգեցաւ Սր. Ան-
տարանս ձեռամբ անաթան Յակոբ դպրի...
ՌՃՁԸ Բվին (1759)»: Պարզ է, որ հիշյալ եր-
կու դպիրները կազմը տարբեր ժամանակնե-
րում պատրաստող և նորոգող ոսկերիչներն

են: Կամ, օրինակ, Սուրխաթում (Ղրիմ)
1352-ին գրված Ավետարանի (Ձ 7598) հի-
շատակարանի վերջում այլ ձեռագրով ավե-
լացված է «...իշխելի... զվերջի ճոճոգել
տուող Սր. Անտարանս զխիյ. Ալեքսիա-
նոս... կազմաւ և ճոճոգաւ Սր. Անտա-
րանիս զնիկողայոս դպիր...»:

Ջարմանայի շպետք է թվա, որ հանդիպում
ենք դպիրների և ընդհանրապես կրոնավոր-
ների անունների, որովհետև խոշոր վանա-
կան կենտրոնները կարող էին ունենալ կազ-
մողներ (կազմող գրոց) թե՛ կաշնպատման
և թե՛ արծաթապատման համար: Նման ե-
րևույթ գտնում ենք նաև միջնադարյան Եվ-
րոպայում, որտեղ նույնպես հիշվում են կրո-
նավորներ, որոնք զբաղվել են ձեռագրերի
կազմերի պատրաստմամբ:

Ոսկերչական մեծ վարպետությամբ են
կատարված ձեռագրերի արծաթյա կազմերը
այնպես, որ դրանցից շատերը կարելի է
գլուխ-գործոցներ համարել: Հմուտ վարպետ-
ների գործեր են արծաթյա թերթիկ վրա
կատարված դրվագումները (ցցուն քանդակ-
ներ), որոնք տարբեր տեսարաններ են պատ-
կերում:

Կերպարների հետ կան նաև դրվագման
ձևով գրված արձանագրություններ և այս
բոլորը հաճախ ծածկված է լինում ոսկեջրով,
թանկարժեք մետաղի տպավորություն թող-
նելու համար: Դրվագումը կատարվում էր
ճկուն նույթի վրա արծաթաթերթը մեկ կամ
երկու կողմից հարվածելու միջոցով, որն
ստեղծում է ցցուն կերպարներ:

Բացի այս հղանակից, ուրիշ ձեռագրա-
կազմեր պատրաստված են զուգաթել ցանց-
կենով (ֆրիզերան). Օգտագործված է նաև
գծային փորագրումը, որը սակայն իր կա-
տարման մակարդակով շատ է զիջում դրվագ-
ման եղանակին, հավանաբար գործիքների
պակասության պատճառով: Կան որոշ տի-
սարաններ ձուլածո կտորներով հորինված:
Օրինակ, Քրիստոսի ձուլածո մարմինը բնե-
ների միջոցով ամրացվում էր արծաթյա թեր-
թից ձեռավորված խաչի վրա:

Նկատի ունենալով, որ այս կազմերի վրա-
յի ցցուն քանդակները, մանավանդ դրվա-
գումները, շփումից կամ էլ ճնշումից կարող
էին վնասվել, ոսկերիչ վարպետը կազմի վրա
ամրացնում էր արծաթյա կիսագնդիկներ,
որոնք կազմի վրա զարդերը հեռու էին պա-
հում սեղանի կամ գրակալի մակերեսից: Այս
գնդիկները սկիզբ են առել արծաթ կազմը
կաշվի վրա ամրացնելու անհրաժեշտությու-
նից, որովհետև դրանք նախկինում եղել են
բնեների գլուխներ: Գնդիկը պահպանում էր

⁷ Emile Molinier. «Les arts du métal». Paris. p. 29.

նաև կազմի կաշին, որովհետև կան շատ ձեռագրեր, որոնց կաշվե կազմը ծածկված է միայն արծաթյա ղեղիկներով: Դրանք գիտնականներին ձեռք բերելու համար անհրաժեշտ է իրենց հերթին կազմելով զարդանկարներ: Այս ղեղիկների նշանակությունը ավելի պարզ կդառնա, եթե նկատի ունենանք, որ շատ դեպքերում կազմի, խաչերի և այլ մասերի վրա կան թանկագին ակներ (հակինթ, գմրուխտ, փիրուզա, նռնաքար և այլն), որոնք նույնպես կարող էին շփոթվելով վնասվել:

Մեծ վարպետությամբ են կատարված նաև ձեռագրերի փականները, որոնց մի մասը շղթայի ձևով է, իսկ ուրիշ մասը ժապավենի ծայրին արծաթյա կտորների վրա է ամրացված:

Իրենց գեղարվեստական ձևավորման տեսակետից արծաթյա կազմերը մեծ չափով կապ ունեն մանրանկարչական ձևերի հետ: Նախ ասենք, որ արծաթապատվել են գրեթե բացառապես Ավետարանները, այնպես որ պարզ է, թե կազմի վրա պետք է լինեին կամ խաչեր, կամ էլ ավետարանական տեսարաններ, ինչպես, օրինակ, Քրիստոսի ծնունդը, խաչելությունը կամ էլ Քրիստոսի, ինչպես նաև Աստվածածնի և ավետարանիչների կերպարները և այլն:

Հայկական արժեքավոր ձեռագրակազմեր կան նաև այլ վայրերում, մանավանդ Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքում, որտեղ կա, օրինակ, մի հույակապ ձեռագրակազմ⁹, որը հայ արվեստի մի քաջատիկ գոհար է: Ձեռագիրը գրված է Սսի մեջ 1332-ին լեոն Դ թագավորի օրոք, իսկ կազմը հորինված է, ըստ նրա վրայի արձանագրության, երկու տարի հետո (929): Առաջին երեսի վրա ու-

նի Քրիստոսի ծնունդը հրեշտակներով և մոզներով շրջապատված, իսկ մյուս երեսին քանդակված է խաչելությունը:

Ձեռագրերի արծաթապատման արվեստի հետ սերտորեն կապված է արծաթյա պահարանների պատրաստումը, քանի որ երկուսն էլ արծաթյա թերթերի վրա գրվագման հղանակն են օգտագործում: Դրանցից հնագույնը, որ մեզ հասել է, Կիլիկյան Սկևոս վանքի պահարանն է, պատրաստված Կոստանդին Բ կաթողիկոսի (1286—1289) ջանքերով: Սա հորինված է նրա Սկևոս վանքի վանահայր եղած տարիներին՝ 1293 թվականին: Լ. Ղ. Ալիշանը հրատարակել է¹⁰ այս պահարանի մանրամասն նկարագրությունը լուսանկարներով հանդերձ: Այս պահարանի վրա քանդակված են ոչ միայն քաղմաթիվ անձնավորությունների դիմանկարներ (Ս. Գրիգոր, Աստվածածին, Ս. Վարդան, Հեթում Բ թագավոր և այլն), այլև 104 տողանոց մի ոտանավոր: Արվեստի մի ուրիշ գլուխ-գործոց է նաև խոտակերաց Ս. Նշանը¹⁰, պատրաստված հաղորակյան իշխան էալիի հրամանով (1300 թ.): Այստեղ ևս ցցուն կերպարները պատրաստված են գրվագման միջոցով և ցույց են տալիս կատարողական արվեստի մեծ հմտություն:

Իհարկե, այսքանով չի կարելի սպառել այն առատ նյութը, որ մեզ տալիս է արծաթյա կազմերի ուսումնասիրությունը: Դրանք կարիք ունեն ավելի խոր և քաղմաթոցմանի հետազոտման, որը պետք է կատարվի համեմատելով Մատենադարանի նյութերը հայկական այլ ձեռագրատներում և անհատական հավաքածուների մեջ պահվող արծաթյա ձեռագրակազմերի հետ:

⁹ Լ. Ղ. Ալիշան, «Սիսուան», Վենետիկ, 1885, էջ 102—112:

¹⁰ Գ. Եղիսկեղոս Լովսեփյան, «Ռուսական արվեստի մի նմուշ ԺԳ դարից (Խոտակերաց Ս. Նշան)», «Գեղարվեստ», Քիֆյիս, 1912:

⁸ «Հայ հին արվեստները», Անահիտ, 1929 ժայիս—հոկտ. էջ 56:



ՅՈՒՑԱԿ ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ԶԵՌԱԳՐԵՐԻ*

N 148

ՍՐԱՅԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Քերթնի՝ 89.— Պրնկնի՝ 8, յուրացանյուրը 12 թերթից, ի բաց առյալ Ա՝ 13 և Ը՝ 4 թերթից, ՄԵՆՍՈՒԹՅՈՒՆԸ՝ 18,1X11X1,5 սմ.— ՆՅՈՒԹԸ՝ դեղնած հասարակ բարակ թուղթ։— ԿԱՋՄԸ՝ լաթակաղձ ստվառաթուղթ։— ՊԱՇՊԱՆԱԿՆԵՐ՝ սկզբից և վերջից մեկական թերթ հասարակ բարակ թուղթ։— ՎԻՃԱԿԸ՝ քաղաքաբ.— ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ միասյուն։— ԴԱՏԱԲԿ ԷՋԵՐԸ՝ 3թ, 4ա, 5թ, 6ա, 7թ, 8թ, 8թ.— ՏՈՂԵՐԸ՝ 22։— ԳՅՈՒՄՆԵՐԸ՝ առանց ճշման։— ԳԻՐԸ՝ հոտորգի։— ՋԱՐԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ լուսի։— ԳՐԻՋԸ՝ Բարադամ քահանայի քաղիչից։— ԺԱՄԱՆԱԿԸ՝ 1737 թ.— ՎԱՅՐԸ՝ Կարին (Էրզրում)։— ԾԱՆՈԹՅՈՒՆ՝ Զեռագիրը Մայր Աթոռում ստացվել է Թբիլիսիից 1852 թվականին, Տ. Վարդան հայկոպոս Տեր-Սահակյանի միջոցով։

ՔՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ք. 1ա.— Աստանոր սկիզբն արասցուք (պատմութիւններ Հին և Նոր Կտակարաններին)։

Ք. 79ա.— Սրբոյն Եփրեմի յաղագս խոնարհութեան։

Ք. 84ա.— [Ա]յս են ամբ կենաց նախահարցն... (կիսատ է թողնված)։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Ք. 37բ.— Յիշեցէք ի Քրիստոս և Աստուած ողորմի ասացէք գրիլ գրոյս մեղապարտ և անարժան յետեալ ծառայ իբր Բարադամ իրիցոյս քաղչեցուց և հանգուցեալ ծընողացն իմոյ, և փրկութիւն խնդրեցէք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, մոր և դուք յիշեալ լիջիք առաջի ահեղ ատենին Քրիստոսի Աստուծոյն մերոյ, Գրեցաւ դիրս ի Քնդուպոլիս որ է Կարին, որ այժմ Արզրում վերածախնի։ Արդ, երեսն անկեալ կրկին աղաչեմ սրբադան հարցդ և եղբարցդ իմոց ի Տէր, զի որք հանդիպիք սրմայ կարգալուծ և կամ օրինակելով, լի բերանով Աստուած ողորմի ասացէք հոգեւոր վարպետիս հօրեղբօրն իմոյ Տէր Մարտիրոս սրբասնունդ վարդապետին, և հանգուցեալ ծընողացն և ամենայն արեան դարմին, և դուք կրկնակի յիշեալ լիջիք, առաջի արդար դատաւորին Քրիստոսի Աստուծոյ մերոյ, ամէն։ Թվին ՌՃԶԶ-ին (1737)։

Ք. 78ա.— Զգծօղս սորա մեծամեծ Բարադամ էրէցս քաղչեցի յիշեցէք ի Քրիստոս և Աստուած ողորմի ասացէք և դուք յիշեալ լիջիք առաջի Աստուծոյ, ամէն։

* Շարունակված «Ելմիածին» ամսագրի 1880 թվականի Մ Մ Ե-ից, Է-ից, Ք-ից և 1881 թվականի Մ Մ Բ-ից, Գ-ից, Զ-ից, Է-ից և Թ-ից։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ք. 1ա.— Գրված է Էրզրում քաղաքում, քաղիչից Տ. Բարադամ քահանայի ձեռքով, 1737 թվին Քրիստոսի։

Ք. 85բ.— Աստված կլինի մեր Սեռա։

N 149

ԺՈՂՈՎԱԾՈՒ

(Հայերեն և հայատառ տառերով)

Քերթնի՝ 75։— Պրնկնի՝ 8, անկանոն ծավալով (ԺԵ՝ 1, ԺԶ՝ 12, ԺԸ՝ 10, ԺԹ՝ 12, ԺԿ՝ 16, Ի՝ 10 և ԻԱ՝ 14 թերթից)։— ՄԵՆՍՈՒԹՅՈՒՆԸ՝ 18X10,7X1,1 սմ.— ՆՅՈՒԹԸ՝ սովորական դեղնած և կեղտոտած թուղթ։— ԿԱՋՄԸ՝ լուսի։— ՊԱՇՊԱՆԱԿՆԵՐ՝ լուսի։— ՎԻՃԱԿԸ՝ շատ թերի, և՛ սկզբից, և՛ վերջից, Սկզբի 15 պրակները կորել են։— ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ միասյուն։— ՏՈՂԵՐԸ՝ 17։— ԳՅՈՒՄՆԵՐԸ՝ առանց ճշման։— ԳԻՐԸ՝ հոտորգի։— ՋԱՐԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ կան շատ հասարակ և անաբեց մի քանի զարգադրեր և թուլագրեր։— ԳՐԻՋԸ՝ Պետրոս։— ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ՝ անհայտ։— ԺԱՄԱՆԱԿԸ՝ 1727 թ.— ՎԱՅՐԸ՝ անհայտ։— ԾԱՆՈԹՅՈՒՆ՝ Առյւն ձեռագիրը ստացված է Երեւանի Ս. Հովհաննէս հեղեցուց 1854 թվականին։

ՔՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առյւն ձեռագիրը մի ժողովածու է դանազան տաղերի, շարականների և բժշկական դեղատոմսերի։

Մտորե տրվում են դիտարկող վերնագրերը։

Ք. 1ա.— Դարձեալ ղուլինճի։

Գիր ղուլինճի այս է։

Ք. 1բ.— Մէկ ղուլինճի սիրելոյ։

Գինի լըյ խըմելու։

Մայասիլի դեղն այս է։

Ք. 2ա.— Դեղնութեան դեղն այս է։

Այր մարդ լըյ շընայ դեղըն այս է։

Յօրվաթն խիստ երդա նէ դեղն այս է։

Սրտացաւի դեղըն այս է։

Ք. 2բ.— Տըղայ ըլլալու այս է դեղն։

Մահ լըյ դըպլի մարդուն այս է։

Մարդու փորն ուռի այս է դեղն։

Ք. 3ա.— Մարդոյ ձուռն էրք ունենայ այս է դեղն։

Մարդն քընանալու այս է դեղն։

Մարդոյ բերանն և փորն ուռի դեղն այս է։

Ք. 3բ.— Ղուլինճն սիրտն թիկունքն լարվի։

Հին չերմի դեղըն այս է։

Որ ելք լինի մարդոյ անձն ուռի։

Տղի գլուխըն խոց լինի։

Ք. 4ա.— Վասն նուղայի դեղն այս է։

Ականջն որ թարախ գայ և հոտ

- զայ դեղըն այս է:
Բերանի հախմաճայի գեղն այս է:
- Թ. 4բ.—Սրաճայի դեղն այս է:
Նուզլայի դեղն այս է:
Նուզլայի և ակոացաի դեղ:
- Թ. 5ա.—Ձայն մարածի դեղն այս է:
Ղուլինճի դեղն այս է:
- Թ. 5բ.—Պար հարսնեաց (նաև բազմաթիվ այլ էջերում):
- Թ. 15բ.—Տաղ Յոհաննիսի է (Կաֆայեցի վարդապետ) ասացեալ:
- Թ. 17ա.—Շարական առաքի:
Տաղ յուրախութեան մարդկան:
- Թ. 19ա.—Փրկեալ մեղաց տէր զեղեկիս.
Փրկէ՞ղ խնդրեմք ողորմելիս.
Քոյ Մարտիրոս հարասարցիա:
Շարական Առաքելի:
Տաղ վարդի և պիւլպիւլի:
- Թ. 20բ.— Շարական բաժակի:
Տաղ յուրախութեան:
- Թ. 21բ.—Հիւրերս ամէն մեծարացէ,
Փոքր և մեծերն ամէն ծարէ.
Քեզ Մարտիրոս յետին կասէ.
Աստուած այս տու:
Շարական Առաքելի:
- Թ. 23ա.—Հիւանդ հոգով կայինայ և առողջացայ փառօք տեսայ դերհարտ, մեղաց մաքրեցայ. քեզ Մարտիրոս (թ. 23բ.) և զև յետին որ ծառայ, այսօր բղ...
Շարական Առաքելի (նաև բազմաթիվ այլ էջերում):
Տաղ զեղեցիկ ասացեալ:
- Թ. 24բ.—Շարական Պետրոսի:
Տաղ յուրախութեան:
- Թ. 26ա.—Շարական բաժակի:
- Թ. 26բ.—Տաղ ուրախութեան (նաև բազմաթիվ այլ էջերում):
- Թ. 28ա.—Շարական Դաւթայ մարգարէի:
- Թ. 30ա.—Շարական Սուրբ Սարգսի:
Տաղ վարդի և պիւլպիւլի:
- Թ. 32ա.—Շարական Սրբոյն մեծին Մինասայ:
- Թ. 33բ.—Շարական Ղազարու:
Տաղ ի վերայ ազուսի:
- Թ. 34բ.— Շարական Գրիգորի:
Տաղ ի վերայ խորճի:
- Թ. 36բ.—Տաղ ի վերայ դարիպի:
- Թ. 38ա.—Տաղ ի վերայ խաղողոյ:
- Թ. 39բ.—Տաղ սիրոյ և ուրախութեան:
- Թ. 40բ.—Շարական Յակօբայ և Յոհաննու:
Տաղ ի վերայ վարդի:
- Թ. 41բ.—Շարական Թաթևոսի:
- Թ. 42ա.—Տաղ սեղան ահնելու:
- Թ. 44ա.—Շարական Աստուածածնայ:
Տաղ յուրախութեան մարգկան:
- Թ. 46բ.—Շարական Մաթէսի:
Տաղ ի վերայ Սուրբ Ծրուաղէմայ:

- Թ. 48ա.—Իրէկիմտէ վարտր Ֆիքիր.
Ախլըմ տէրտիմ սէնտէ օքուր,
Ղէմղէմ սէֆիլ Գրիգոր.
Քրիստոս տրր հարանընկ սէնինկ:
- Թ. 48բ.—Շարական յարութեան:
Տաղ յուրախութեան:
- Թ. 50բ.—Տաղ ի վերայ սիրոյ:
- Թ. 53ա.—Տաղ ի վերայ սուրբ խաչի:
- Թ. 53բ.—Այլ և շրջակայ մօտ գեղօրէի.
Գլուխէս կարգեալ և վանօրէի,
Պահապան կենաս ամենայն երկրի,
Եւ ինձ անարժան Վարդան ծառայի:
- Թ. 54բ.—Աստուած ողորմի հոգոյն շինողի.
Յովսէփ անուն վարդապետի.
Ջիս ի միասին ով որ յիշեսցի,
Խնդրեմ Այստուծոյ ինքըն յիշեալ լինի:
- Թ. 55ա.—Ի հայոց տումարիս ՌՃԻ-ի (1671),
Յարաբարթի Ին-ի,
Ի յառուս սուրբ վանք Սուրբ Աստուածածնի,
Վանոց սուրբ խաչին զով տերան ասցի:
Շարական Սուրբ խաչի:
Տաղ Սրբոյն Յակօբայ Մծրնա Հայրապետին:
- Թ. 56բ.—Շարական Սրբոյն Յակօբայ Մծրնա Հայրապետին:
Տաղ զեղեցիկ ասացեալ:
- Թ. 58բ.—Շարական ապաշխարութեան:
Տաղ ի վերայ Թումայի ասացեալ:
- Թ. 60ա.—Շարական Գայրստեան:
Տաղ հրեշտակապետացըն Գարէլի և Միքայէլի:
- Թ. 61բ.—Շարական Գաբրիէլի և Միքայէլի:
- Թ. 62ա.—Գիր վասն կորուստեան:
- Թ. 62բ.—Մահըստի կորուստեան:
Գիր վասն գլխացաւի:
- Թ. 63բ.—Գիր կապած մարդ արժակելոյ:
- Թ. 64ա.—Գիր կապածի:
- Թ. 64բ.—Վասն ականջացաւի և խլանալոյ:
- Թ. 65բ.—Վասն աչաց ցաւի դեղ:
- Թ. 66բ.—Որ մարդոյ քիթն ցաւի:
- Թ. 67ա.—Այլ զեղ բերանացաւի:
- Թ. 67բ.—Սրտացաւի դեղն այս է:
- Թ. 68բ.—Պալղամի դեղ:
- Թ. 69ա.—Պորտացաւի դեղ:
Միջաց ցաւի դեղ:
- Թ. 70ա.—Արանտըն վար գայ:
Կապածի:
- Թ. 70բ.—Խոստուկի այս է:
Գիր գլխացաւի դեղն այս է:
Դեղնութեան դեղն այս է:
- Թ. 71ա.—Ջըրվաթն բըռնըվի:
Մոռացկոտի:

- Ձայն մարածի դեղն այս է:
 Թ. 71բ.— Սրգուի հախու դեղն այս է:
 Սրգուի դեղն այս է:
 Թ. 72ա.— Գիր քրնոյ տղի այս է:
 Աղօթք անուշ քուն լինելոյ և թմրու-
 թեան ծառայիս Աստուծոյ:
 Գիր ատամնացաւի գրէ ի վերայ
 Թըղթին Դ բեռնով խիայ գլուխն
 որտեղ որ քնես:
 Թ. 72բ.— Գիր և դեղ կնոջ որ տղան ի
 փորն մեռանի:
 Գիր կնոջ որ մէջքն ցաւի:
 Թ. 73ա.— Տուլլու պալլամի դեղն այս է:
 Դէմրովի դեղ այս է:
 Ղապգի դեղըն այս է:
 Թ. 73բ.— Գլի եարայի դեղն այս է:
 Սրգուի դեղըն այս է:
 Գիր ղուլինճի այս է:
 Թ. 74ա.— Սրտացաւի դեղն այս է:
 Սիրտն որ խառընկտվի դեղն այս է:
 Թ. 74բ.— Սրտացաւի դեղն այս է:
 Հազի դեղն այս է:
 Թ. 75ա.— Դէմրովի դեղն այս է:
 Գլխացաւի դեղն այս է:
 Ղուլինճի դեղն այս է:
 Մայասիլի դեղն այս է:
 Թ. 75բ.— Ձեռն ճաթածի դեղն այս է:
 Սիրտն ցաւի արիւն դըքնէ:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 61բ.— Նորոգեցաւ և կազմեցաւ տա-
 ղարանս ձեռամբ մեղաւոր և անարժան Պետ-
 րոսին, ի դուռն Սուրբ Լուսաւորչին, ի թա-
 զաւորութեանն Պէնկլի Քէրէյի, թվին
 ՌՃՀՀ-ին (1727) մարտի ամսոյ ժՁ-ին, որն
 ել-իւ Տէր . . . (Հիշատակարանի
 շարունակութիւնը պակասում է այստեղից,
 տարբեր թերթեր են գալիս սրանից հետո):

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Թ. 1բ.— Միլէսերին, ամէն:
 Թ. 11բ.— Այսօր ձախ ըմէն տ:
 Թ. 72բ.— Ես գրեցի, Քրիստոսի ծառայ Միլէսեր:

№ 150

ԲԺՇԿՈՒԹԵԱՆ ԱՂԾԹԱԳԻՐՔ

Թերթերը՝ 48:— ՊՐԱԿԱՆԵՐԸ՝ 4, անկանոն ժամաւոր
 (Ա՝ 12, Բ՝ 9, Գ՝ 12 և Դ՝ 13 Թերթ):— ՄԵՄՈՒԹՅՈՒՆ
 ՆԸ՝ 12, 8X8, 8X0, 8 սմ.:— ՆՅՈՒԹԸ՝ դեղնած բարակ
 թուղթ:— ԿԱԶՄԸ՝ կաշեպատ տախտակ, որի վրա երկու
 կողմերին ճշուժով զարդեր են նկարված: ՊԱՀՊԱՆԱԿ-
 ՆԵՐԸ՝ սկզբում և վերջում մեկական թերթ հասարակ
 թուղթ:— ՎԻՃԱԿԸ՝ լավ:— ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ միասյուն:—
 ՏՈՂԵՐԸ՝ 18—ԳՐՈՒՄԵՆԵՐԸ՝ ճշումով:— ԳԻՐԸ՝ նոր-
 գիր (4ա—10ա Թերթերը) և բոլորգիր (12ա—32բ Թեր-
 թերը):— ԶԱՐԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ կան 7 հատ քառ սիրուն
 թռչնազարդ, ծաղիկներ և լուսանցազարդեր: Ձեռագիրն
 ունի 7 հատ քառ գեղեցիկ կիսախօսքաններ, ինչպէս

եւե 4 եկամբներ ամբողջական էջի ծավալով (2բ և
 10բ՝ Գրիգոր Նարեկացի, 13բ՝ Ներսէս Կաթողիկոս և
 Եօբ՝ Հիսուս և մի ցանի առաքյալներ): Բոլոր էջերը
 եղբրված են ոսկեգույն շրջանակով: Օգտագործված
 են ոսկեգույնը, որդան կարմիրը, կանաչը, դեղինը,
 սպիտակը և կապույտը: Զատ գեղեցիկ կերպով:—ԳԱ-
 ՏԱՐԿ ԹՂԹԵՐԸ՝ 1, 2, 11, 16, 26, 32—48:—ԳՐԻՑԸ՝
 Հակոբ Աղաթի, որդի մահաեսի Պետրոսի:—ՊԱՏՎԻ-
 ՐԱՏՈՒՆ՝ անհայտ:—ՍԱՂԿՈՂԸ՝ անհայտ:—ԺԱՄԱՆԱ-
 ԿԸ՝ ժՁ—ժէ դ. դ.:—ԱՅՐԸ՝ ԱԿՆ գլուխ: ՍԱՆՈՒԹՈՒ-
 ԹՅՈՒՆ՝ սույն գեղեցիկ ձեռագիրը նվեր է ստացված
 Կաթողիկոս Բենեդիկտ Զրանս Նաթալյանի կողմից 1956
 թվականին:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

- Թ. 21բ.— Տետրակըս է փոքրիկ ձեռք
 Սակայն լի է մեծ մարգարտօք:
 Ջի են ի սմա արձանք բանի,
 Նարեկացուն և Ներսէսի,
 Եղև բանքս յոյժ պիտանի:
 Ձեռամբ միոյ լինէ նօտարի:
 Յիմաստութեանց գուրկ 'ւ անարի,
 Պէկղօղեցույ Յօհաննիսի:
 Ի վայելումն ումեմ մանկան,
 ՅԱԿՆԱ գիւղէն կամրկապեան,
 Որդի մահաեսի Պետրոսի,
 Որոյ անունն Յակօր կոչի,
 Եւ Աղասի մականուանեալ,
 Ուշադ օղլի իսկ յորդորեալ,
 Եւ թիւ սորին թէ հարցանի,
 Միմիայնակ հինգ գտանի:
 Թ. 27բ.— Տէր Յիսուս որպէս հաներ
 զդևան ի նոցանէ, նոյնպէս հան զդիւանկան
 ախտս ի հոգւոյ Յակօր ծառայիս քո, ամէն:
 Թ. 28բ.— Ով տէր իմ Յիսուս, որպէս բա-
 ցէր զականջս խիւն, և զքերան համրին, տոյն-
 պէս բաց զականջս և զքերանս հոգւոյ Յա-
 կօր ծառայիս քո, ամէն:
 Ի. 29բ.— Որպէս յարուցեր զմեռեալ որդին
 արւոյն, նոյնպէս յարո զմահացեալ հոգիս
 Յակօր ծառայիս քո, կենդանութիւն:
 Թ. 31բ.— Տէր Յիսուս, որպէս առողջացու-
 դիր զբազմամեալ անդամալուծն ի հիւանդու-
 թենէ իւրմէ, ոոյնպէս առողջացո ի հիւան-
 դութենէ մեղաց զհոգիս Յակօր ծառայիս քո,
 ամէն:

№ 151

ԱՂԾԹԱԳԻՐՔ

Թերթերը՝ 84:—ՊՐԱԿԱՆԵՐԸ՝ 7, յուրաքանչյուրը 12
 Թերթից, որոնցից միայն Ա պրակն ունի 8 Թերթ:—
 ՄԵՄՈՒԹՅՈՒՆԸ՝ 7, 8X5, 7X3, 2 սմ.:— ՆՅՈՒԹԸ՝ դեղ-
 նած և կեղտոտած հասարակ թուղթ:—ԿԱԶՄԸ՝ կաշե-
 պատ տախտակ, որի երեսի կազմի վրա ամրացված է
 մետաղյա մի տափակ խալ, որն ունի կարմրամուգ մի
 քար: Երկու բռնիները՝ ընկնլ են:—ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐԸ՝
 սկզբում երկու թերթ հասարակ թուղթ և վերջում՝ էլ մի
 թերթ դարձյալան հասարակ թուղթ, որունքն զրու-
 թեամբ:—ՎԻՃԱԿԸ՝ քաղական վնասված և վերջից

թերի—ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ միասնական—ԳԱՏԱՐԿ ԹՂԹԵՐԸ՝ 1 և 2.—ՏՈՂԵՐԸ՝ անհամայնակ՝ 10—12.—ԳՄԹԻՄՆԵՐԸ՝ առանց ճնշման—ԳԻՐԸ՝ անկանոն բուրգեր—ՋԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ կան թվով առաք հատ շատ նախանական և հասարակ նկարներ Հիսուսի և սրբերի—ԳՐԻՉԸ՝ վարդան—Ժամանակը՝ ԺԸ—ԺԹ Պ. Պ.—ՎԱՅԻՐԸ՝ Կոստանդնուպոլիս—ՄԱՆՈՒԹՅՈՒՆ՝ սույն ձեռագիրը ստացված է 1954 թվականին Ս. Գեղարդի վանքից. դոկտ.—պրոֆ. Աշոտ Արարատյանի մեջոցով:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 74թ.—...դաս հրեշտակք որ ելանեն ի յապրի Պօլիս քաղաք և յանուն սերովքէից և բերովքէից...

Թ. 83ա.—(Հիշատակարանի թերթի կեսը պատկած է վերևից ներքև, կարդացվում են միայն հետևյալ բառերը):

Գրեց... կանու... յոց, ձեռամբ անուն, վար... մեղսապատ... տանուն վա... ան դրոյի աստ... Աստուած ողորմի ամեն... Աստուած ձեզ ողորմ...

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 12թ—12ա.—Տ. Միթալին և Վաղարշակին և Ագիդին և էսհանին:

Թ. 15թ—15ա.—Տ. Միթալին և Վաղարշակուն և Ագիդին և էսհանին:

Թ. 23թ.—Տր Միթալին (նույնը 29թ և 31ա թերթերում):

Թ. 32թ.—և Վարդակին և Ագիդին:

Թ. 34ա.—Տ Միթալին, էսհանին:

Թ. 45թ—45ա.— Տ Միթալին և Վաղարշակուն և Ագիդին և էսհանին:

(նույն անունները կրկնվում են 47թ, 48ա, 51թ, 52ա, 53թ, 54ա, 58թ, 59ա և 71թ թերթերում):

Թ. 53թ.—Մանուկին (հետագայում ընդված է):

Թ. 66ա.—Մանուկին, Բազոյին, Կիրակոսին (հետագայում ընդված են):

Թ. 69ա.—Առաքելին և Բազոյին, Գուլամերին, Մանուկին (հետագայում ընդված են):

№ 152

Հ Ա Շ Ո Ւ Յ

ԹԵՐԹԵՐԸ՝ 287.—ՊՐԱԿԱՆԸ՝ 35, յուրաքանչյուրը 12 թերթից, ի բաց առյալ հետևյալ պրակներին՝ Բ՝ 4, Գ և ԺԵ՝ 6, Է՝ 10, ԼԵ՝ 3, 2 հազարի սկզբից Ա պրակն աժողովությանը և Բ պրակից էլ 8 թերթ կտրել են, ինչպես նաև ձեռագրի վերջից բազմաթիվ պրակներ՝ ԼԵ պրակի մեծ մասից մինչև ԽԶ և նույնիսկ ավելին—ՄԵՍՈՒԹՅՈՒՆԸ՝ 29,5 X 25,6 X 0,5 սմ—ՆՈՒԹԸ՝ դեղ-հաճ և կեղտոտած հաստ թուղթ—ՎԱՅԻՐԸ՝ չունի—ՊԱՇԱՆԱԿՆԵՐԸ՝ չկան—ՊԻՏԻՍԸ՝ առավար, սկզբից և վերջից զգալիսովոր կազմը կորել է և ձեռագիրը քայքայվել: ԺԶ և ԺԷ պրակների մեջտեղը կան 8 թերթ (Թ. Թ. 187—173), որոնք գրվել են ավելի ուշ շրջանում—ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ երկսյուն—ԴԱՏԱՐԿ ԹՂԹԵՐԸ՝ չկան—ՏՈՂԵՐԸ՝ 36—37—ԳՄԹԻՄՆԵՐԸ՝ ճնշու: Դուլ—ԳԻՐԸ՝ աղորակի—ՋԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ ձեռա-

գիրն ունի միակ գեղեցկությամբ բազմաթիվ թռչնա-դրեր, ձկնադրեր, զարդադրեր և զառանգրեր, կան բազմաթիվ կիսախորաններ մարդկային, բուսական և կենդանական աշխարհներից բազմազան լուսանց յ-դարդեր, նկարված միմիայն կարմիր ներկով—ԳՐԻՉԸ՝ Եոթոթեցի Հովհաննես քահանայա—ՊԱՇԱՎԻՐԱՆ՝ 3ՈՒՆ՝ Եաթիկ վանքի վանահայր Մովսես վարդապետ—ՄԱՂԿԱՆԸ՝ անհայտ—ԺԱՄԱՆԱԿԸ՝ 1668 թ.—ՎԱՅԻՐԸ՝ անհայտ—ՄԱՆՈՒԹՅՈՒՆ՝ ձեռագիրը ստացված է 1950 թվականի հունվար ամսին Վահագան, Հայրապետի մեջոցով:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 5թ.—Մեծի և հրաշափառ Տեառնըդառաջին առաւօտուն և երկունն կարդա և պարիշ շօռթիցի Տէր Յոհանն յիշեալ:

Թ. 7ա.—Նախ Յովհաննու կարապետն տանեալ, և զստացող սորին յիշեալ:

Թ. 35թ.—Զստացող ատենագրոյս զՄովսէս վարդապետն, որ է գլոխ հարանց ճրգնաւորաց ի յանապատն Եատիկոյ, Թվին ՌՃԺՆ (1666):

Թ. 99թ.—Գրիշ Տէր Յոհանն շօռթիցի յիշեալիք, մանաւանդ զստացող սորին: Գրեցալ Թվին ՌՃԺՆ:

Թ. 294ա.—Այդ յիշեցէք ի մաքրափալ աղօթս ձեր զՄովսէս վարդապետն, որ րստացաւ դայս ճաշոց պիրքս յիշատակ իւրն և յիւր ծնողացն Փրիթնանին, Գուլին և եղբօրն Գրիգորին և հանգուցեալ եղբարցն Ճըհանգիրին, Ղուկաս քահանային և եղբօր որդւոյն իմոյ Աղազար սարկաւազին: Ի վայելումն է այս գիրքս Աղազար սարկաւազին, որ հոգւոյ որդի է իմ և թէ որ հակառակեսցէ վասն գրոցս ընդ դէմ նորա, նըղեալ լինի ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, և շնորհօղն ընդ նմա արհնեալ լինի ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, Թվին ՌՃԺԶ (1667) էր:

Թ. 305թ.—Հոգի Աստուծոյ հանգո զամենայն հաւատացեալքս ի քեզ, և մանաւանդ զստացող սորա և զգրիշ շօռթիցի Տէր Յոհանն, և զամենայն մերձաւորսն իմ և զաշուկերտն իմ զԱսյանն: Գրեցալ Թվին ՌՃԺՆ:

Թ. 387թ.—Առաջին տարեմտի նաւասարդի կիրակին կարդալ և զծնօզսն իմ զԳրիգորն և զՍրիկն յիշեալ:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 99թ.—1113 և թուականին Բա. 1666. Աղ. կց, Մտքին աղօթք իմ, Տէր Աստուած փրկութեան իմոյ: Թ. 162ա.—Մ. Գեղարդ:

Թ. 171թ.—Փառք ամենասուրբ նորրորդութեանն Հոր և Որդոյ և Հոգոյն Սրբոյ յայժմ և անդաւ յաւիտեանս, ամէն:

Ըւ արդ նորոքեցաւ այս ձաշու գիրքս ձեռամբ անիմաստ իրիցոյ միոյ որոյ անունն Օվաննէս կոչիւր: Ըւ արդ տա օվ որ որ ընդծեռու միով Հայր մեղախ յիշեցէզ զմեա և ինքն յիշեալ լինի ի Քրիստոսէ, ամէն:

Յիշատակ է այս Ճաշուս Աստատունին և իւր կողակցոյն Աննաին և որդոյն Գարբէլէին, կողակցոյն Սուլթանի և որդոյն Գրիգորին և միւսն դեռաբուն Աւագին, ալ և հանգուցեալ եղբարցն սորին Ղեներին, Պաղարամին և Աւագին, և քվեբոցն Տոնային, Սառային և յամենայն յարեան զարմիցն որք էինք (ք. 172ա) բարոյ հոգեւէք որք լուսալք ի Սուրբ Աւետարանէն Պրիստոսի որ ասէ թէ, Վաճառեցէք զինչս ձեր և սուրբ ոգորմութիւն, և թէ, Նրանի առն որ ունիցի յիշատակ ի Սիւն, որոյ սակս փափացեալ ըստացաւ այս Սուրբ Դաշու գիրք, և եզ իւր հոգոյն իշատակ ի գիրքն ձերնս, ի սուրբ եկեղեցին Սուրբ Գէվորգայ որք և զեկեցին իւրեանց հալալ ընչիցն Ուր որ զին սա շունի ք հրաման ծախելու և կամ գրաւ զեկու, և թէ որ անդգնի ծախ և գրաւ, Լեզուեալ եղբցի և պատիժն ի Պրիստոսէ առցէ, ամէն: Եւ արք, կազմեցաւ Ճաշու գիրքս ի թվականիս մերոյ ՌՄԸ (1750 թ.) մարտի մէկ օրն:

(Կապգիր) Թվին ՌՄԸ:

Այս է թիւ Գրիգորին:

ՌՄԸ (1753 թ.) ունիսի Ե օրն:

Այս է թիւ Աւագին:

ՌՄԸ (1750 թ.) անվարի Զ օրն:

Ք. 172բ.—է Տէր:

Իշատակ է այս Դաշուս Աստատունին, կողակցոյն Աննաին, որդոյն Գարբէլէին, կողակցոյն Սուլթանին և ամ արկայոս Կարաբի իշատակ ի:

Իշատակ է այս Ճաշուս Օհանէսին, կողակցոյն Կուլիհանին և ամենայն զարմիցն, ամէն:

Ք. 173ա.—Վասն թշնամիաց իմոց:

Ք. 193բ.—Կարդացաւ Արշակ Նիկողոսեան:

1836 ամի 15 օրն մարտի:

Ք. 207բ.—(Զորս տող անընթեռնելի):

Ք. 258ա.—(Մեկ տող պարսկերէն լեզվով, լուսոյ վեց բառ):

Ք. 284ա.—Իշատակ է եղեմալ ծառայի, Գաղօնի, Սուլթանին, որդոյն Գրիգորին, հարս Մարիամին, Թառնց Ղուկասին, հարս Կիւլէիհանին, զեռապոս որդոց Ոհանէսին, Մանուկին, դստերաց Սրբուհին, Ասիին, Նանի Խանումին, Մարթին, Պէկըզին, Սառային և ամենայն ընդանեաց Նոցին: Իշա լիզիբ առաջի անմահ Գառնի Աստուծոյ:

№ 153

ՊԱՐԶԱՏՈՒՐ

Թերթեր՝ 101:—ՊՐԱԿԱՆԸ՝ 9, յուրաքանչյուրը 12 թերթից, բացառությամբ հետևյալ պրակներին՝ Ա՝ 11 և Բ՝ 6 թերթի:—ՄԵՍՈՒԹՅՈՒՆԸ՝ 7,7×5,6×2,3 սմ:—ՆՅՈՒԹԸ՝ դեղնած և կեղտոտած մագաղաթ:—ԿԱՅՄԸ՝ կաշեպատ ռովաբարթուղթ:—ՊԵՆԱԿԱՆԸ՝ սկզբում և վերջում մեկական թերթ հասարակ թուղթ:—ՎԻՃԱԿԸ՝ բավարար:—ԳՐԱԿՈՒՆԸ՝ միասյուն:—ԴԱՏԱՐԻ՝ ԹՂԹԵՐԸ՝ չկան:—ՏՈՂԵՐԸ՝ 15—ԳՍՈՒՄԸ՝ առանց ճշման:—ԳԻՐԸ՝ նոսրագիր:—ԶԱՐԴԱԳԻՐԹՅՈՒՆ՝ ձեռագիրն ունի բավական սիրուն թռչնազրիկ և ձկնագրեր, ինչպես նաև մի քանի հատ զխառառներ՝ բազկացած իրար միացած թռչնազրիկ և ձկնազրիկ: Կան նաև ծաղիկներ, թռչուններ և լուսանկարներ: Միանգից բացի կան նաև հասարակ ոճով նկարված մի խո-

րան (թ. 12ա) և ամբողջ շրի ծավալով մի սրբի նկար (թ. 11բ):—ԳՐԻԶԸ՝ անհայտ:—Ժամանակը՝ 1554 թ.:—ՎԱՅԻՐԸ՝ անհայտ:—ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝ սույն ձեռագիրը նվեր է ստացված Հայեզ քաղաքի Արաբկիրի հայրենակցական միությունից՝ տիար Ռուբեն Տիրաբյանի միջոցով, 1953 թվականի օգոստոս ամսին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Տոնացույց և տոմար:

Ք. թ. 1Բ-ից մինչև 6ա կան օրացույցի 10 տախտակներ:

ԶԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Ք. 7ա.—ԹՎԻՆ ՌԲ (1553):

Բանալի առաջին գիրն է... տանուտէրն ի վե... ոյն է և կարմիր գրած տողերն նա կան: չէ: Իսկ ի մէջ պարզաւորումարիս յորժամ տարին նահանջ լինի, զաս և հասնես մարտին ամիս, տուսի մի ի վեր ելնես, կարգիս գրնաս յաւարտն ոչ (թ. 7բ) վրիպիս:

Պարզատումարս գովելի է.

Գեղեցիկ և պիտանի,

Զրոյր տարին յինքեան ունի

Եւ ցուցանէ զամէն յայտնի:

Յեւալին երեւակն ըսկրսանի,

Հոռվանցեաց ամսով վարի,

Մինչ յայտնութեան Բարեկենդանի,

Քառսուն և վեց թիւ համարի:

Հինգ հարիւր ամ ամցանի,

Նրեսուն երկու քորաբարգի:

Այսքան (թ. 8ա) ամօք վերջըն լինի:

Դարձեալ յառաջն ըսկսանի:

Եւ սահմանած անիտիւնի:

Մինչ ի գալուստն Քրիստոսի,

Որք ընթեռնուք միտով սրտի

Յիշման արէք զմեզ արժանի: ամէն:

Ծանի՛ր, ո՞վ ընթերցող:

Հոգոյ գալըստեան կիրակի օրն Բարեկենդան է Նդիական պահոցն:

Նդիական պահոցն յետն Բ շաբաթ կուտեմք, Լուսաւորչին պասն է:

Լուսաւորչէն յետն (թ. 8բ) Բ շաբաթ կուտեմք, Վարդավառին պասն է:

Խաչէն յետն Ա շաբաթ կուտեմք, Սուրբ Գէորգեայ պասն է:

Յիսնակաց մտէն յետն Բ շաբաթ կուտեմք, Սուրբ Յակոբայ պասն է:

Սուրբ Մարգարէն յետն Բ շաբաթ կուտեմք, Մեծ Պասն է:

Յայտոց մէջն աւելի և պակաս չի գար, մինչ ի կատարած աշխարհի:

Դարձեալ ծանիր, ո՞վ ըն(թ. 9ա) թերցող:

Որ թէ Ննեդեան Բարեկենդանն, ի յորեք շաբթի դայ, դու երեքշաբթի արայ:

Եւ թէ յուրբաթ գայ, դու հինգշաբթի արայ:

Բարեկենդանն զպասն չի յուժիր, բայց խթումն կու յուժէ:

Յաղաքս ծոսադատի:

ԹՎԻՆ Հայոց ՌԶԳ (1635 թ.) է երեսկ 9.

վերադիրն Թ. աւագ լրումն ապրիլի 2 օրն կիրակի:

Եւ բանալի գիրնշան (ք. 9ք) յայսմ ամի մոլորին յոյնք և առնեն Մոազատիկ ապրիլի 2:

Պատրաստ կացիք որ յխարիք մեզ հայոց ուղղափառաց, ապրիլի ԺԳ Զատիկ է:

Թվին Հայոց ՌՃԸԸ (1729 թ.) է երեակ Գ, վերադիրն Թ և բանալի գիրն շան:

Աւագ լրումն ապրիլի 2, օրն կիրակի. յայսմ ամի մոլորին յոյնք և առնեն Մոազատիկ ապրիլի 2:

Պատրաստ կացիք որ չի (ք. 10ա) խաբիր, մեզ հայոց ուղղափառաց ապրիլի ԺԳ Զատիկ է:

Թվին Հայոց ՌԲԸԶ (1824 թ.) տարին նահանջ է, է երեակն երկուս է և Գ կու լինի, և բանալի գիրն ոն է, շան կու լինի:

Աւագ լրումն ապրիլի 2 օրն կիրակի, յայսմ ամի մոլորին յոյնք և առնեն Մոազատիկ ապրիլի 2, պատրաստ կացիք որ չի խարիք, մեզ հայոց ուղղափառաց ապրիլի ԺԳ Զատիկ է:

Թ. 10բ.— Մարտ ամսուն ցորեկն ԺԳ ժամ է և գիշերն ԺԲ ժամ:

Ապրիլ ամսուն ցորեկն ԺԳ ժամ և գիշերն ԺԱ ժամ:

Մայիս ամսուն ցորեկն ԺԳ ժամ և գիշերն Ժ ժամ:

Յունիս ամսուն ցորեկն ԺԵ ժամ է և գիշերն Թ ժամ:

Յուլիս ամսուն ցորեկն ԺԴ ժամ է և գիշերն Ժ ժամ:

Աւգոստոս ամսուն ցորեկն ԺԳ ժամ և գիշերն ԺԱ ժամ:

Սեպտեմբեր ամսուն ցորեկն ԺԲ ժամ և գիշերն ԺԲ ժամ:

Թ. 11ա.— Հոկտեմբեր ամսուն ցորեկն ԺԱ ժամ և գիշերն ԺԳ ժամ:

Նոյեմբեր ամսուն ցորեկն Ժ ժամ է և գիշերն ԺԴ ժամ:

Դեկտեմբեր ամսուն ցորեկն Թ ժամ է և գիշերն ԺԵ ժամ:

ՀԻՇԱՏԱԿԱԿՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(կազմի Ա երեսի հետևում գրված կա ել կու տող պարսկերեն):

Թ. 99բ.— աշար վարդն ինքնագոյն, սիշրամարգ ոսկեգոյն, գոհար վարդն ինքնագոյն յարփոյն սիրամարգ ոսկեգոյն, դու լուսին լի յուսով ի մէջ գիշերի. դու զահալ լուսափայլ ի յառաւատին, կոյսլն Մարիամ աղաչէ Աստուծոյ, պաղատեալ, խրեղբեայ, աղբրեայ, հայք (ք. 100ա) հայ. աղաթեայ, ես եմ քո ծառայն ի յուր քաժանման հոգոյս ի մարմնոյս, դի նեհար զքեզ ունիմք որ մարդ ես և կույս:

Ընդհանր Հոգոյն երազըս վայելուչս բանի զարարլութիւն, նախ ասեմք ասեմք զգրքդ հոգին ի վերայ շուրջ գոյով: Գոյով նայ ներգործէր զարարածոցս հիթսի:

№ 154

ՀԱՄԱՅԻՆ

ԹերթերԸ՝ մի կտոր երկար քերթ.— ՄԵՍՈՒԹՅՈՒՆԸ՝ 372X8 սմ.:— ՆՅՈՒԹԸ՝ զեղնած և կեղտոտած սովորական հասա թուղթ:— ԿԱԶՄԸ՝ լուսի:— ՎԻՃԱԿԸ՝ քաղաքար:— ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ միասուն:— ԳՄԻՄԵՆԸ՝ առանց ճնշման:— ԳԻՐԸ՝ նոսրգիր:— ԶԱՐԴԱՆ՝ ԳՐՈՒԹՅՈՒՆ՝ կա մի հաս հասարակ թունադիր (ի տառը) ինչպես նաև շատ հասարակ ոճով նկարված նկարները Ս. Գրիգոր Լուսավորչի, Ս. Գրիգոր Նարեկացու, Մարիամ Աստվածածնի, Ս. Հովհաննէս ալիտարանչի, Ս. Պողոս և Ս. Պետրոս առաքյալների, ինչպես նաև Ս. Ներսէս Շնորհալի հայրապետի:— ԳՐԻՂԸ՝ տիրացու վարդան:— ՊԼՏՎԵՐԱՏՈՒՆ՝ Պաղտասար:— ՄԱՂԿԱՂԸ՝ շատ հաճանքար նույն ինքն գրիչ տիրացու վարդան:— ԺԱՄԱՆԱԿԸ՝ 1709 թ.:— ՎԱՅՐԸ՝ Բաղնիչ Ս. Աստվածածնի վանք:— ՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ սույն համայնը նվեր է ստացված 1954 թվականին Գ. Վաթյանից:

ԻՈՎԱՆԻԱԿՈՒԹՅՈՒՆ

Կան բժշկութեան Ավետարաններ Հովհաննու և Մարկոսի Ավետարաններից, մի քանի աղոթքներ, ինչպես նաև Ներսէս Շնորհալու սշաւատով խոստովանիմք—ը:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Տէր Յիսուս պահեալ զԲաղտասարն և որդիք նորայ Ղուկասու, քանզի քաղումք յօժարեցին:

Մառայս Աստուծոյ Բաղդասարին:

Բաղդասարին և որդոցն Հէրպետին, Սարգիսին, ամէն:

Բաղդասարին և որդոցն Հէրպետին և Սարգիսին, ամէն:

Մառայս Աստուծոյ այլի ամէն Բաղդասարին:

Մառայս Աստուծոյ Բաղդասարին, խույ Ղամարին:

Մառայս Աստուծոյ Մուրայիլին, Բաղդասարին:

Մառայս Աստուծոյ Մուրայիլին, խույ Ղամարին, ամէն:

Մառայս Աստուծոյ Բաղդասարին՝ Սարգիսին, ամէն:

Բաղդասարին:

Զծառայս Աստուծոյ Բաղդասարին և որդոցն Հէրպետին և Սարգիսին, Գրեցաւ համալիս ի ձեռամբ տիրացու Վարդանին, յիշեցէք ի Քրիստոս, և Աստուած ողորմի ասացէք, ձեզ և մեզ ողորմեսցի, ամէն: Ի քաղաքն Բաղէշ, ի դռն Սուրբ Աստուածածնի: Անմեղադիր կացէք ով սիրելի, սրբութեամբ պահեցէ սուրբ գիրս, զԱստուածն աղաչեցէք, լինի ամենայն: Գրեցաւ թովին ՌԺՄԸ (1709) պահոց շապուն Սուրբ Սարգիսին, ամէն:

Կարապետին:

(Շարունակելի)

Ց Ա Ն Կ

«ԷԶՄԻԱՄԻՆ» ԱՄՍԱԳՐՈՒՄ 1961 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՅՈՒՆԻ ՑՊԱԳՐՎԱԾ ՆՈՒՅԵՐԻ

Ա. ՊԱՇՏՈՆԱԿԱՆԷ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը ժընկի հայոց
հկնդեցու շինություն հանձնաժողովին, Բ 3:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Հյուսիսային
Ամերիկայի հայոց Արևելյան քեմի առաջնորդ գե-
րաշնորհ Տ. Սիոն արհեստագետ Մանուկյանին,
Հյուսիսային Ամերիկայի հայոց Կալիֆոռնիայի քեմի
առաջնորդ գերաշնորհ Տ. Բարգին հպիսկոպոս վա-
րապետական և Հաղապետին Ամերիկայի հայոց Հայ-
րապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Բարգին
հպիսկոպոս Ապառայանին՝ ճովվապետական այցելու-
թյանից վերադառնալու առթիվ, Դ 8:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Հյուսիսային
Ամերիկայի Միացյալ Նահանգներին Վարդանանց աս-
պետներին և դոկտորին կազմակերպության, Բ 5:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Մալա Արոս
Սուր էլմարանին ազատանի բացման առթիվ, Ժ 3:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը պրոֆեսոր Սի-
րարի Տիր Ներսեսյանին Սուր Գրիգոր Լուսավորչի
առաջին կարգի շխնշան շնորհելու մասին, Ա 7:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Սուր էլ-
մարանին Հոգևոր ձեմարանին վերադառնալու գերաշնորհ
Տ. Հայկազուն սրբազանին արհուրյան պատիվ շնոր-
հելու մասին, Ա 6:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Սուր Մես-
րապ Մաշտոցի ձենդան հաղափնջաշարադասականի
առթիվ, Բ 3:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը տեղ և տեղին
Սուրեն և Շահն Գալեմեռյաններին բարեխառնության
էլմարանին Սուր Շողակար հկնդեցու վերադառնալու
թյան առթիվ, Ա 3:

Ամանորի առթիվ Ամենայն Հայոց Մայրաքաղաք Պատ-
րիարք և Կաթողիկոս Նորին Սուր Օմարյան Տ. Տ.
Վազգեն Ա Հայրապետի և պետական պաշտոնական
անձնավորություններին միջև փոխանակված ողբույնի
հեռագրերը, Ա 12:

Ամանորի և Սուր Մենդյան տոների առթիվ Ամենայն
Հայոց Մայրաքաղաք Պատրիարք և Կաթողիկոս Նորին
Ս. Օմարյան Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և նվի-
րապետական Արտոնների ու առաջնորդաբաններին միջև

փոխանակված ողբույնի հեռագրերն ու գրությունե-
ները, Ա 19:

Հաղորդագրություն, է 18:

Հաղորդագրություն, Ը 7:

Հաղորդագրություն, Ժ 12:

Հայաստանում սովորող կարգերի հաստատման Բա-
նասունիկներով տարեկանի առթիվ Ամենայն Հա-
յոց Վեհափառ Հայրապետի և պետական անձնավոր-
ություններին միջև փոխանակված հեռագրերը, Ժ 6:
Հեռագիր Սատարյուից պատրիարքական ընտրության
մասին, ԺԱ 9:

Հորեկյանական ճանդիսավոր ճիստ Հայաստանում սո-
վորական կարգերի հաստատման Բառասունականի
առթիվ, Ե 8:

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի
հաղափնջաշարով տարեկանի կապակցությամբ Ա-
մենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և պետա-
կան անձնավորություններին միջև փոխանակված հե-
ռագրերը, ԺԱ 7:

Պաշտոնական ընդունելություն, Զ 7:

Պաշտոնական հաղորդագրություն, Ե 9:

Պաշտոնական հաղորդագրություն, ԺԱ 10:

Պաշտոնական հաղորդագրություն, Ժ 9:

Փրկչի հաղափառ և Ա. Մենդյան տոնի առթիվ Ամե-
նայն Հայոց Մայրաքաղաք Պատրիարք և Կաթողիկոս
Նորին Սուր Օմարյան Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի
և Բույր հկնդեցիներին հոգևոր պետերին միջև փոխա-
նակված ողբույնի հեռագրերն ու գրությունները, Ա 14:

Փրկչի հաղափառ և Ա. Հառարյան տոնի առթիվ Ամե-
նայն Հայոց Մայրաքաղաք Պատրիարք և Կաթողիկոս
Նորին Սուր Օմարյան Տ. Տ. Վազգեն Ա Հայրապե-
տի և նվիրապետական Արտոնների ու առաջնորդա-
բաններին միջև փոխանակված ողբույնի հեռագրերն
ու գրությունները, Դ 12:

Փրկչի հաղափառ և Ա. Հառարյան տոնի առթիվ Ամե-
նայն Հայոց Մայրաքաղաք Պատրիարք և Կաթողիկոս
Նորին Սուր Օմարյան Տ. Տ. Վազգեն Ա Հայրապե-
տի և Բույր հկնդեցիներին հոգևոր պետերին միջև
փոխանակված ողբույնի հեռագրերն ու գրությունե-
ները, Դ 8:

Բ. ԽԻՐԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Ավանդ և Սուր Մենդյան, Ա 9:

Ավարայրի դյուցազնաբանություն, Բ 7:

Վառապետի մի հաղափնջաշարական առթիվ, Բ 22:

Մարտի 1-ին պանդանին հկնդեցուական առթիվ մե-
րապետական, Դ 3:

Հառարյան առթիվ, Դ 3:

Խաղաղի առթիվ հպիսկոպոս ժամանակ, Ե 3:

Լուսնին հաղափնջաշարով, Զ 3:

Եվ իսկի խաղաղություն, է 8:

Մարտի 1-ին կառիվ, Ը 3:

Սուր Մեսրոպ Մաշտոց, Ժ 6:

Ենկայր շինեցույթ սուր զնորան լուսնյա, Ժ 3:

Միջինհեցական հաղափնջաշարով, ԺԱ 3:

Մայր Հայրենիքի մեծ տոնը, Ժ 8:

ԱՎԵՏԻՍՅԱՆ Ա.— Մանրանկարիչ Ավագ. է 50:
ԱՎԶՅԱՆ ԱՌԻՐՆԼ—Ներսիս Աշտարակեցի է Վրաս-
տանը, ժ 45:
ԿԱՍՊԱՐՅԱՆ ՄԱՄԻԿԱՆ—Մեծապետ է արքեպիսկոպոս-
տանի, ժ 51:
ԵՂԻՍՏԱՐՅԱՆ Հ.— Հաղթանի վանքի է նրա հետ
կապված՝ Հաղթան Գյուլի մյուս հուշարձանները, Բ 44, Գ 44, Դ 44:—Ստորագրված, Զ 38:
ԹԻԽՐՐԻ Մ. Լ. Ն.—Անիի՝ հայկական միջնադարի
մեծագույն քաղաքը, Դ 37:
ԽԱՓԱՆՑՅԱՆ Հ. Խ.— Կիլիկիայի հայկական քաղա-
վարության հարաբերականությունը, ժ 44:
ՄԵԼԻՔԱՆԹ—Քեյ Լ. Մ. (ՊՐՈՖ.—ԴՈԿՏ.)— Մի տե-
նանք էլ ժ 2 դարի տաղանդավոր Զաքարյան (մեծագույն)
պանդուխտությունից, Գ 61:— Գեորգ Կապանցի
Գործի (ժ 2 դար) է նրա տաղերն ու հատերը, Դ 62:— Քեյլիքը հայ և վրաց պատմագրության,
բանաստեղծություն է վիճակագրության մեջ, Թ 46:

Թ. ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ, ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՊՈՋԱՊԱՆՅԱՆ ՀԱԿՈՐ ՍԱՐԿԱՎԱԳ.— Մաղաթի տար-
իցիսկոպոս Սրմանյանի համառոտ կենսագրություն-
ներ, Կ 10:
ՍԵՐՈՐԻՆ Հ. Ջ.—Գործերից պատմության հաշա-
տության, Բ 30, Գ 25, Դ 27:— Օրմանյան է
իս ժամանակը, Ե 24, Զ 10, է 34, Ը 48, Թ 24, Ժ 33,
ժ 30:

ՍԱՀԵՆՅԱՆ ԱԼ.— Մայր Յանարի հարաբերական
կերպար, Ա 43:
ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ Ա.— Ազգայնագիտության հարաբեր-
ական համառոտումը, Զ 27:
ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ Հ.— Ստանդարտի արժանա-
հավասարակշռության մասին, ժ 49:
ՏԵՐ-ՄԻՆԱՅԱՆ Ե. (ՊՐՈՖ.—ԴՈԿՏ.)— Ամբիոն-
ների հետազոտություններ և արձանագրությունները, Ե 46:
ՏԵՐՅԱՆ ՎԱՀԱՆ ՎԱՐԿԱՊԵՏ— Պատմական համառոտ
ակնարկ Ս. Հովհաննիսյանի, Ս. Գալանյանի և Ս. Շաղա-
կարի վանքերի և այլ վանքերում գտնվող կաթո-
ղիկոսական տաղանդագրությունների մասին, Բ 29,
Գ 37, Դ 33:
ՓԱՋՍՏՅԱՆ Ս.— Շուսիների հայերը, Զ 46:
ՓՈՒՆՅԱՆ ԴԵՐՆԵԿ ԵՊԻՍԿՈՓՈՍ— Աստվածաշնչի
ամենահին հրատարակությունը, ժ 19:

ԳԵՐԱՆՆԱՆ Տ. Հայկական տարիսկոպոս Արամեան-
յան, Ա 35:
Կարծիքներ Օրմանյանի մասին, Ե 21:
Հոգեբան Տ. Նովիկ արքայ Գառնյան, է 28:
Հոգեբան Տ. Նովիկ արքայ Գառնյան, է 20:
Հոգեբան Տ. Ներսիս արքայ Պապական, է 20:
Հոգեբան Տ. Ներսիս արքայ Պապական, է 28:
Օրմանյան պատմության խոսքերից, Ե 13:

Ժ. ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

ԵՆԻԿՈՒՆՊՈՒՆ.— Հայ գրողների և մշակույթի գործիչ-
ների պանթեոնը Քրիստոսի, է 68:

Հայերի բնաշխարհի տեղագրական երկրը, Զ 63:
ՀՈՒՐՆԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ, Գ 22, Դ
24, Զ 56, Թ 67:

ԺԱ. ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

Ա.— Մայր Արամ Սուրբ էջմիածնի հայրապետական
պատմությանը Կալկարայի մեջ, Զ 61:
Ա. Հ.— Հյուսիսային Ամերիկայի հայոց Արևելյան
քաղաքային գերազանց Տ. Սրբի տարիսկոպոս
Մանուկյանը Մայր Արամի, ժ 28:
ԱՊԱՅՅԱՆ ԲԱՐՑԵՆ ԵՊԻՍԿՈՓՈՍ— Վեհապետ Հայրա-
պետի Գառնի արքայ, Գ 12:
ԻՆԿՈՒՆ ՀՄԱՅՆԱՆ ՄԱՅՐԱԳՈՐԻՆ ՎԱՐԿԱՊԵՏ—
Սուրբ Մեծապետ իմաստության բանական հայտեր,
Ժ 80:
ԿԵՆՏԵՐԱՆ ՄԵՐՈՐԻՆ ՍԱՐԿԱՎԱՊԵՏ ՎԱՐԿԱՊԵՏ—
Գերազանց Տ. Մամբիս տարիսկոպոս Գալիկյանի
ի պատիվ հոգեբանական հոգեբանություն, Գ 13:
Ամերիկյան պատմագիտական հարաբերական Սիրիայից Նովի-
կյան մեծագույն հեղինակ, ժ 82:
Ապրիլյան մեծ հեղինակի համառոտության հուշարձանի
բանաստեղծությունները, Թ 17:
Դերեկի կալիսկոպոս Փառապետ վերաբերող նրավ-
պիտանի տաղանդագրական կոլեկցիան, Գ 14:
Հեկոյց Գալուստ Կալիսկոպոսի հիմնականություն, ժ 82:

Ժրեկի հայոց հեղինակ, շինության հանձնաժողովի կո-
չը, Բ 20:
Կանգնում կառուցվող Բեյ-Լյ-Սուրբի հայոց մո-
տություն, Գ 13:
Հանգիստ արձանագրության Տ. Սահակ Գառնի Այ-
վապանի, Գ 14:
Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների հա-
յոց Արևելյան քաղաքային պատմագիտական
ժողովը և հոգեբանական համագործակցությունը, Ե 66:
Պերիսիսի (Արևել) Ս. Աստվածածին հեղինակ վե-
րաբանություն, Գ 13:
Վառանդավոր աշխարհագիր-Գառնիպետ Ջալիկ
հանգիստյան պատմական Հայաստանի Գառնիպե-
տի, Գ 17:
Փենտերիկի Արևելիսկոպոս դոկտ. Ջեոֆֆրի Ֆիլիք
հրատարակման հայոց Սրբոց Հոգեբանական վանքում,
Դ 16:
Փենտերիկի Արևելիսկոպոսի հարաբերական հա-
յոց Պատմագրության հանդիման, Գ 18:—

ԺԲ. ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱԿԱՏՈՒՄ

Խաղաղության պաշտպանության դիրքերում, ու 15:
Խաղաղության պաշտպանության ճամբարիստոնեակուն
ճամբարաբնակի կանգրես Պրազայում, է. Ս.

Պրագայի Խաղաղության պաշտպանության համաժողով-
տեղեկված համադրահարձային կոնգրեսի պատգամը:
է 16:

ԺԳ. ԲԱՆԱՍՏԵՂՇՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԵՌԻՏԱՆԸ ԵՆՐԻՇԸ ԱՐՔԵՍՊԻԿԱՆՈՍՍ— Օրակառն. Ժ 37: ԱԴԱՄԱՆԹՈ— ԳյուտիԷ փառհր. Ժ 38:
ՀԱՆՐԱՆ ԵՆԻՐԻ— Հալոց լեզուհ. Ժ 40:

ԺԷ. ԵԱԶԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Ակադեմիկոս Հովսեփ Արցաթի Սրբիյան, Գ 58:
Հանգիստ ամենապատիվ Յ. Գաբելին աղջկայինպատ
հաշատուրյանի, Սրբազան Պատրիարքի Կոստանե,
հասարակի հայոց, Բ 8:
Հանգիստ ամենապատիվ Տ. Կարապետ Բաճաճ
Գրիգորյանի, Զ 58:

Հանգիստ արժանապատիվ Տ. Վահան ավագ խառնակ
Տավարեկյանին, Զ 58:
Հանգիստ գերազնուհ Յ. Մամբրև արհեստակցական Գալ-
փայտին, Ը 82:
Հրազյա Ներսիսյան, ԺԱ 89:

ԺԵ. ԳՐԱԽՈՍԱԿԱՆՆԵՐ

ՊԶԱԳԱՆԱՆ ԶԱԿՈՐ ՍԱՐԿԱՎԱԿ— Մազադիա արհեստական Օրմանյանի աշխատանքային հարկերի գումար, և 82:

Ա. Գ.—Հայ մտանկագրություն հանրագիտարանը, Բ 51:
ՊՈՒՅԱԿ՝ ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԼՂՄԻԱՆՆԻ ՆՈՐ ԱՍԱՑՎԱՄ
ԶՆՈՒԱԳՐՆՈՒ, Բ 61, Գ 58, Զ 80, Է 80, Թ 80, Ճ 54:



SECRET
CONFIDENTIAL
UNCLASSIFIED
EXCLUDED FROM AUTOMATIC DOWNGRADING AND DECLASSIFICATION
DATE 06-18-2019 BY 60322 JAL